Նիկոլայ Բուլգակով

ՇԱՆ ՍԻՐՏԸ



ԴԱՍԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

1915.info

I

Ո՛Լ-ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ... հո՛ւ-հո՛ւ-հո՛ւ-հո՛ւ... Օ՜, նայեք ինձ, կործանվում եմ: Բուքն է դարպասատակին հրաժեշտի աղոթք վայում: Կորա՛ծ եմ ես, կորած: Կեղտոտ թասակով էդ սրիկան, ժողովրդական տնտեսության կենտրոնական խորհրդի ծառայողների կանոնավոր սնման ճաշարանի էդ խոհարարը եռման ջուր լցրեց վրաս ու խաշեց կողս: Ինչ ստորն է, դեռ պրոլետար էլ կոչվում է: Աստված իմ, ո՞նց է ցավում: Եռջուրը մինչև ոսկորս խաշել է: Ու ոռնում եմ հիմա, ոռնո՛ւմ, բայց ոռնոցով դարդին դարման կանե՞ս:

Ի՞նչ վնաս էի տալիս: Կարո՞ղ է՝ աղբահորը փորփրելով կերա ձեր ժողովրդական տնտեսության խորհուրդը: Քծի՛պ անասուն: Դուք մի դրա ռեխին նայեք, ախր լենքը երկայնքից լեն է: Պղնձամոր՛ութ գող: Ա՛խ, մարդիկ, մարդիկ: Կեսօր էր, որ էդ թասակն ինձ եռման ջրով պատվեց, իսկ հիմա արդեն մութն ընկել է, մոտ չորսը կլինի՝ դատելով նրանից, թե սոխի ի՞նչ հոտ է փչում Պրեչիստենկայի հրշեջ մասից: Հրշեջների ընթրիքը շիլան է, ինչպես գիտեք: Բայց հեչ ուտելու բան չի, ոնց որ սունկը: Չնայած Պրեչիստենկայի ծանոթ շները պատմում էին, թե իբր Նեգլիննայայի «Բար» ռեստորանում լավ էլ խժռում են մշտական ճաշատեսակը՝ սունկ, սոուս պիկան, բաժինը՝ 7 ռ. 75 կ.: Նայած սիրողին, բայց նույնն է, թե կրկնակոշիկ լպստես... Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ-...

Կողս անտանելի ցավում է, ու պարզ տեսնում եմ՝ վերջն ինչ է լինելու. վաղը խոցեր կբացվեն, և հարց է ծագում՝ ինչո՞վ եմ բուժելու: Ամառ լիներ, կքաշվեի Սոկոլնիկի, էնտեղ յուրահատուկ, շատ լավ խոտ է աճում, բացի էդ, կարող ես երշիկի գլխիկներ ուտել, կուշտուկո՛ւռ, անփո՛ղ, քաղաքացիները յուղոտ թղթի կտորտանք էլ են թողում, կլիզես ինչքան սիրտդ ուզի: Թե որ չլիներ էդ փնթփնթան պառավը, որ լուսնի տակ երգում է «սիրելի Աիդա», էն էլ էնպես, որ սիրտդ վեր է թռչում,- հրաշալի կլիներ: Իսկ հիմա ո՞ւր գնաս: Ձեր քամակին սապոգով տված կա՞ն: Ինձ շա՛տ են տվել: Քյարփինջով կողներիդ կերե՞լ եք: Լի՛քը կերված է: Ամեն ինչ եմ փորձել, հաշտ եմ բախտիս հետ, ու եթե հիմա լաց եմ լինում՝ զուտ մարմնական ցավից ու ցրտից է, քանի որ ոգիս դեռ չի մարել... Կենսունա՛կ է շան ոգին:

Բայց մարմինս, ահա, ծեծված է, ջարդված, նվաստացրել են նրան մարդիկ: Ցավը գիտե՞ք որն է. եռջուրը որ շփեց, բրդիս տակն անցավ, ձախ կողս, ուրեմն, անպաշտպան է: Հեշտ ու հանգիստ կարող եմ թոքերի բորբոքում ստանալ, ու թոքերի բորբոքում ստանալով, քաղաքացինե՛ր, սովից կսատկեմ: Թոքերի բորբոքում որ ունեցար՝ պիտի պառկես շքամուտքում, սանդուղքի տակ, բայց թե՝ հիվանդ, անկնիկ շան տեղը ո՞վ կվազվզի՝ աղբանոցներում կեր որոնելով: Թոքերս բռնվեցին՝ փորսող քարշ կգամ, կթուլանամ, և ուզածդ անբան մահակի տակ կտա: Եվ

ճարմանդավոր դռնապանները թաթերիցս կբռնեն ու կշպրտեն սայլին...

Դռնապանները ամենանողկալի ոչնչությունն են բոլոր պրոլետարներից: Մարդկության թերմացքը, ստորագույն կարգ: Խոհարարները տարբեր են լինում: Օրինակ, հանգուցյալ Վլասը՝ Պրեչիստենկայից: Քանի՞ կյանք է փրկել: Ասեմ. հիվանդ ժամանակ ամենաառաջին գործը պատառ փախցնելն է: Եվ ահա, հին շները պատմում են, որ Վլասը մեկ-մեկ ոսկոր էր գցում, վրան՝ մի քիչ միս: Հոգին արքայություն գնա, բա ո՞նց, իսկական անհատականություն էր, կոմս Տոլստոյների աղայական խոհարարը, ոչ թե սրանց պես՝ Կանոնավոր սնման խորհրդից: Թե ինչով են զբաղված իրանց Կանոնավոր սնումում՝ շան խելքի բանը չի: Ախր էդ սրիկանե՞րը շչին էլ հոտած մսով են եփում, իսկ ուտող խեղճերը անտեղյակ են: Վազում են, լափում, լակում:

Ասենք, որևէ մեքենագրուհի իր IX կարգով ստանում է չորսուկես չերվոնեց, սիրեկանն էլ, ենթադրենք, ֆիլդեպերսի գուլպաներ է նվիրել: Բայց տեսեք էդ ֆիլդեպերսի համար խեղճը ի՞նչ ծաղրուծանակ է քաշում: Ախր, ոչ թե ինչ-որ սովորական եղանակով, ֆրանսիակա՞ն սիրո են ենթարկում թշվառականին: Սրիկա են էդ ֆրանսիացիք, մեր մեջ ասած: Չնայած կուշտ են խժռում ու՝ կարմիր գինիով: Հա՞... Վազ տալով գալիս է էդ մեքենագրուհին, բա ի՞նչ, 4,5 չերվոնեցով «Բար» չես գնա: Կինեմատոգրաֆին էլ չի հե-

ոիքի, իսկ կինեմատոգրաֆը կանանց միակ մխիթարությունն է կյանքում: Դողում է, կնճռոտվում, բայց, դե՛, կուլ է տալիս... Պատկերացրեք ուրեմն, քառասուն կոպեկ՝ երկու ճաշատեսակին, իսկ դրանց էդ երկու ճաշատեսակը հինգ ալթին[1] էլ չարժեն, որովհետև մնացած քսանհինգ կոպեկը տնտեսվարը գողանում է: Իսկ օրիորդին էդպիսի՞ սեղան է պետք: Աջ թոքը սարքին չի, կանացի հիվանդություն էլ ունի՝ ֆրանսիական հողի վրա, հիմնարկում աշխատավարձից պահում են արել, ճաշարանում հոտած կերակուր են տվել: Հրե՛ն, հրե՛ն... Վազում է դարպասատակ՝ սիրեկանի գուլպաները հագին: Ոտերը մրսում են, ցրտին՝ փորը բաց, որովհետև նրա բուրդն էլ իմի պես է, իսկ վարտիքը սառն է պահում, զուտ ժանյակային պատրանք: Ցնցոտի է՝ սիրեկանի համար: Հլա փորձի ֆլանելիցը հագնել, գոռոցը կդնի՝ էդ ինչի՞ նրբագեղ չես: Իմ Մատրյոնան ինձ հերիք է, ձանձրացրել է, տանջվեցի էդ ֆլանելեի վարտիքների ձեռը, հիմա ի՛մ հազարն է: Ես հիմա նախագահ եմ ու սաղ գողացածս՝ կնկա ջանի՞ն, խեցգետնի վզիկների՞ն, Աբրաու-Դյուրսոյի՞ն: Քանի որ ջահելությանս շատ եմ սով քաշել, ուրեմն հերիք էղավ, իսկ անդենական կյանք գոյություն չունի:

Շատ եմ մեղքանում նրան, շա՛տ: Բայց ինձ ավելի եմ մեղքանում: Եսասիրությունից չեմ ասում: Չէ՛, ուղղակի իսկականից անհավասար պայմաններում ենք:

1 Ալթին – երեք կոպեկանոց:

Նրա համար գոնե տանը տաք է, իսկ ե՞ս, իսկ ե՞ս... Ո՞ւր գնամ: Ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ...

- Ծը՛, ծը՛, ծը՛: Շարիկ, ա՛յ Շարիկ, ի՞նչ ես խեղճուկրակ վնգստում: Ո՞վ է նեղացրել: Ո՜ւխ...

Չոր մրրիկը վիուկի պես դղրդացրեց դարպասներն ու շեղակի խփվեց օրիորդի ականջին: Փեշը քշտեց մինչև ծնկները, բացեց կրեմագույն գուլպաներն ու վատ լվացած ժանեկավոր սպիտակեղենի նեղ եզրաշերտը, խեղդեց բառերը ու պատեց ձյունով:

Աստվա՜ծ իմ... Ի՜նչ եղանակ է... Ո՜ւխ... Ու փորս էլ ցավում է: Հոտած միսն է, մի՜սը: Ու ե՞րբ կվերջանա այս ամենը:

Գլուխը կախելով՝ օրիորդը նետվեց հարձակման, ճեղքեց-անցավ դարպասները, և փողոցում դարձդարձեց նրան հողմը, դեսուդեն գցեց, ոլորեց ձնապտույտի պես, ու նա չքացավ:

Իսկ շունը մնաց դարպասատակին, այլանդակված կողի ցավից տառապելով՝ սեղմվեց սառը պատին և ուժահատ որոշեց, որ այլևս չի հեռանա, ոչ մի տե՜ղ, հենց այդտե՜ղ, դարպասատակին էլ կսատկի: Հուսահատությունը տապալեց նրան: Սիրտն այնպես էր ցավում, այնպես էր դառնացել, այնպես մենակ ու սարսափելի էր, որ մանրիկ արցունքները պզուկների պես ցայտում էին աչքերից և անմիջապես չորանում: Վնասված կողին փերթ-փերթ թաղկել էր սառած բուրդը, ու փերթերի արանքից երևում էր եռջրից խաշված կարմիր, չարագուշակ միսը: Ի՜նչ

անմիտ, բութ ու դաժան են խոհարարները... Աղջիկը նրան «Շարիկ» անվանեց: Ի՞նչ գրողի տարած Շարիկ: Շարիկը կլորիկ, կերած-խմած, հիմարի մեկն է լինում, վարսակ է խժռում, նշանավոր ծնողների զավակ է, իսկ ինքը՝ փռչոտ, լղար, քծծված, կողերը դուրս պրծած շրջմոլիկ, անտուն շուն: Չնայած, շնորհակալություն բարի խոսքի համար:

Վառ լուսավորված խանութի դուռը, հակառակ մայթին, շխկաց, ու հայտնվեց մի քաղաքացի: Հենց քաղաքացի՛, ոչ թե ընկեր, և նույնիսկ, ավելի շուտ, պարո՞ն: Եվ որքան մոտենում էր, այնքան ավելի պարզորոշ էր, որ՝ պարոն: Կարծում եք՝ վերարկուի՞ց եմ դատում: Ցնդաբանությո՛ւն: Հիմա պրոլետարներից շատերն են վերարկու հագնում: Ճիշտ է, օձիքները սրա նման չեն, դրա մասին խոսք լինել չի կարող, բայց հեռվից կարելի է շփոթել: Իսկ այ աչքե՛րը,- էստեղ արդեն ոչ հեռվից կշփոթես, ոչ մոտիկից: Հա՛, աչքերը կարևոր բան են: Ճնշաչափի պես: Ամեն ինչ՝ պարզորոշ ու հստակ, անծայր անապատ է մեկի հոգում, մյուսը ոչ մի դեպքում սապոգի քթով չի հասցնի կողերիդ, իսկ երրորդն ինքն է ամեն ինչից վախենում: Այ հենց դրա, էդ գյադայի ոտից էլ հաճելի է բռնել: Վախենում ես՝ ստացի՛: Որ վախենում ես՝ արժե՛ս... Ռ՛-ռ՛-ռ՛... Հա՛ֆ-հա՛ֆ...

Պարոնը մրրկասյան մեջ վստահ հատեց փողոցը ու գնաց դեպի դարպասատակը: Այո՛, այո՛, սրա հարցում ամեն ինչ պարզ է: Սա հաստատ աղ դրած

միս չի ուտի, իսկ եթե առաջարկեն էլ, էն տեսակ աղմուկ կբարձրացնի, թերթերի՞ն կգրի՝ ի՞նձ՝ Ֆիլիպ Ֆիլիպիչիս, վատ են կերակրել:

Ահա ավելի է մոտենում: Սա կուշտ ուտում է ու չի գողանում, սա քացի չի տա, բայց ինքն էլ ոչ մեկից չի վախենում, և չի վախենում, որովհետև միշտ կուշտ է: Մտավոր աշխատանքի պարոն է, ֆրանսիական սրածայր փոքրիկ մորուքով ու սպիտակ բեղերով՝ փափուկ ու կտրիճավարի ոլորած, ոնց որ ֆրանսիական ասպետներինը, բայց մրրիկը նրանից գեշ հոտ է բերում: Հիվանդանոցի: Ու նաև՝ սիգարի:

Էդ ո՞ր սատանան է, թույլ տվեք հարցնել, նրան հասցրել Կենտրոնտնտեսության կոոպերատիվ: Ահա կողքիս է... Ի՞նչ է փնտրում... Ո՛ւ-ո՛ւ- ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ... Ի՞նչ կարող է առնել էդ դատարկ խանութից, իրեն քի՞չ է Օխոտնի ռյադը[2]: Սա ի՞նչ է: Երշի՞կ: Պարո՞ն, եթե տեսնեիք ինչից են պատրաստում այդ երշիկը, խանութին մոտ չէիք գնա: Ի՞նձ տվեք:

Շունը հավաքեց ուժերի մնացորդն ու խելահեղությամբ բռնված՝ դարպասատակից քարշ եկավ դեպի մայթ: Բուքը կրակեց գլխավերևով, ծածանեց կտավե պաստառի ահռելի տառերը.

«ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է, ԱՐԴՅՈՔ, ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՈՒՄԸ»:

Հաստատ հնարավոր է: Երշիկի հոտն, օրինակ, երիտասարդացրեց ինձ, պոկեց գետնից, այրող ալիք-

2 Կենտրոնական հրապարակ, ապա՝ փողոց Մոսկվայում:

ներով պրկեց փորս, որ արդեն երկու օր դատարկ է, հո՜տը, որ հաղթեց հիվանդանոցին, մանրատած զամբիկի և սխտորի ու պղպեղի դրախտային հոտը: Զգո՜ւմ եմ, գիտե՜մ երշիկ է մուշտակի աջ գրպանում: Նա իմ գլխավերևում է: Օ՜, իմ տիրակալ: Նայի՜ր ինձ: Մեռնում եմ: Ա՜խ, ստրկական մեր հոգին, մեր ստոր կյա՜նքը:

Շունը սողաց օձի պես, արցունքախեղդ, փորի վրա: Տեսե՛ք խոհարարի աշխատանքը: Բայց չեք տա, չէ՞, ոչ մի դեպքում: Լա՜վ գիտեմ հարուստներիդ: Բայց, ըստ էության, ձեր ինչի՞ն է պետք այդ երշիկը: Ձեր ինչի՞ն է պետք նեխած ձին: Ուրիշ ոչ մի տեղ, Մոսսելպրոմից[3] բացի, այսպիսի բան չեք ստանա: Իսկ դուք այսօր նախաճաշել եք, դուք համաշխարհային արժեք եք՝ տղամարդկանց սեռական գեղձերի շնորհիվ... Ի՜նչ է կատարվում էս լույս աշխարհում: Երևում է՝ դեռ շուտ է մեռնելը, իսկ հուսահատվելն իսկական մեղք է: Մնում է՝ ձեռքերը լիզել, ուրիշ ճար չկա:

Առեղծվածային պարոնը կռացավ շան վրա, շոշաղացրեց ակնոցի ոսկե շրջանակները և աջ գրպանից մի սպիտակ երկարուկ փաթեթ հանեց: Դարչնագույն ձեռնոցներով բացեց թուղթը, որ մրրիկն անմիջապես

3 Մոսսելպրոմ – առևտրատնտեսական կազմակերպություն 1922-1937 թթ., որը միավորում էր սննդարդյունաբերության պետական խոշոր ձեռնարկությունները: Կապված է Վլադիմիր Մայակովսկու և արվեստի այլ գործիչների ստեղծագործության հետ, որոնց կազմակերպությունը ներգրավել էր իր արտադրանքի գովազդմանը:

խլեց-տարավ, ու կտրեց մի կտոր երշիկ, որ կոչվում է «Հատուկ կրակովյան»: Ու տվեց շանը: Օ՜, անշահախնդի՜ր անձնավորություն: Ո՜ւ-ո՜ւ-ո՜ւ...

- Ֆյո՜ւ-ֆյո՜ւ-ֆյո՜ւ,- շվշվացրեց պարոնը ու խստաձայն ավելացրեց: - Վերցրու: Շարիկ, Շարի՜կ:

Նորից Շարիկ: Կնքեցի՜ն: Ասենք, ինչպես ուզում եք անվանեք: Հանուն ձեր այդ բացառիկ արարքի:

Շունը ակնթարթորեն պատռեց երշիկի կճեպը, հեծկլտոցով ատամները խրեց կրակովյանի մեջ ու մի շնչում խժռեց: Ընդ որում, խեղդվում էր երշիկից ու ձյունից, խեղդվում էր արցունքոտվելու աստիճան, քանի որ ագահաբար թելն էլ հետն էր խժռել: Էլի՜, էլի՜, ձեռնե՜րդ լպստեմ: Շալվա՜րդ պաչեմ, ի՛մ բարերար:

- Առայժմ բավական է...,- պարոնն այնպես հատու էր խոսում, ասես հրամայելիս լիներ: Նա կռացավ Շարիկի վրա, քննախույզ նայեց աչքերի մեջ և ձեռնոցավոր ձեռքով անսպասելի ու մտերմաբար շոյեց փորը:

- Ըհը՜,- բազմանշանակ քրթմնջաց նա,- վզնոց չկա, հրաշալի է, հենց դու էլ ինձ պետք ես: Արի հետս,- նա չթչթացրեց մատները: - Ֆյո՜ւտ, ֆյո՜ւտ:

Գալ ձեզ հե՞տ: Թեկուզ մինչև աշխարհի ծայրը: Քացահարեք ձեր նրբաթաղիքե կոշիկներով, ծպտուն չեմ հանի:

Պրեչիստենկայով մեկ շողում էին լապտերները: Կողն անտանելի ցավում էր, բայց Շարիկը ստեպստեպ մոռանում էր դրա մասին, կլանված մեկ

մտքով՝ իրարանցման մեջ հանկարծ չկորցնի այդ մուշտակավոր հրաշք տեսիլքը և որևէ կերպ արտահայտի իր սերն ու նվիրվածությունը: Եվ յոթ անգամ,- Պրեչիստենկայի ողջ երկայնքով՝ մինչև Օբուխովի նրբանցք,- արտահայտեց: Համբուրեց կոշիկները, մեռյալ նրբանցքում ճանապարհ հարթելով՝ վայրի ոռնոցով այնպես վախեցրեց մի տիկնոջ, որ սա շմփաց ճամփեզրի սյունիկին, մեկ-երկու վնգվնգաց, որ չմոռացվի իր հանդեպ խղճահարությունը:

Ինչ-որ սրիկայական, սիբիրյան ձևացող շրջմոլիկ կատու դուրս լողաց ջրհորդանից ու չնայած բքին՝ առավ կրակովյանի հոտը: Շարիկի աչքին աշխարհը մթնեց այն մտքից, որ դարպասատակերից վիրավոր շներ հավաքող այդ հարուստ խենթը հանկարծ էդ գողին էլ կտանի հետը, և ինքը ստիպված նրա հետ պիտի կիսի Մոսսելպրոմի արտադրանքը: Դրա համար էլ ատամներն այնպես կրճտացրեց կատվի վրա, որ սա ծակ փողրակի ձայն հիշեցնող ֆշշոցով ջրհորդանով մագլցեց երկրորդ հարկ... Ֆ՛ռ՛-ռ՛... Հա՛ֆ-հա՛ֆ... Կորի... Մոսսելպրոմը քչություն կանի Պրեչիստենկայում թափառող բոլոր քրջոտների համար:

Պարոնը գնահատեց հավատարմությունը ու հենց հրշեջ մասի մոտ, պատուհանի տակ, որտեղից լսվում էր եղջրաշեփորի հաճելի մռթմռթոցը, շանը պարգևատրեց երկրորդ պատառով, որը նախորդից հինգ մսխալով[4] փոքր էր:

4 Մսխալ - ծանրության հին չափ, հավասար է ռուսական զոլոտնիկին (4,26 գրամ):

Է՜հ, խենթուկ: Գայթակղո՜ւմ է: Մի՜ անհանգստանա: Հենց ինքս չեմ գնա ոչ մի տեղ: Ձեր հետևից կգամ՝ ուր հրամայեք:

- Ֆյո՛ւտ-ֆյո՛ւտ-ֆյո՛ւտ, այս կո՛ղմ:

Դեպի Օբուխո՞վ: Խնդրե՛մ: Մեզ քաջ ծանոթ է այդ նրբանցքը:

- Ֆյո՛ւտ-ֆյո՛ւտ:

Այս կո՞ղմ: Հաճույ... Է՜, ոչ, կներեք: Էստեղ բարապան կա: Ու դրանից վատ բան աշխարհում չի լինում: Դռնապանից էլ վտանգավոր է: Կատարելապես ատելի ցեղ: Կատուներից զզվելի: Տրեզավոր[5] մսագործնե՛ր:

- Դե՛, մի՛ վախենա: Արի՛:

- Ողջույն եմ ցանկանում, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ:

- Բարև, Ֆյոդոր:

Ա՜յ սա մարդ է, Աստվա՜ծ իմ, էս ում հանդիպացրիր, իմ շնայի՜ն բախտ: Էս ի՜նչ անձնավորություն է, որ կարող է փողոցի շներին բարապանների աչքի առաջ մտցնել բնակարանային ընկերության շենք: Տեսե՛ք, էդ սրիկան՝ ո՛չ ձեն, ո՛չ ծպտուն: Ճիշտ է, աչքերը մթնեցին, բայց ընդհանուր առմամբ անտարբեր է՝ ոսկե եզրազարդով շքագլխարկի տակ: Ասես հենց էդպես էլ պիտի լինի: Հարգում է, պարոնա՛յք, ո՞նց է հարգում: Դե, իսկ ես նրա հետ եմ ու նրա ետևից: Հը՛, կարեցա՞ր ձեռ տաս: Ա՛ռ, կե՛ր: Այ թե կկծեի պրոլետարական, կոշտուկավոր ոտդ: Հենց մենակ խոզա-

5 Տրեզ - հագուստի կեղծ եսկեթելի երիզ կամ հյուսած նեղ ժապավեն:

նակով մռութս քանի՞ անգամ այլանդակած կլինես, հը՞:

- Անցի՛ր, անցի՛ր:

Հասկանո՛ւմ ենք, հասկանո՛ւմ, բարեհաճեք չանհանգստանալ: Որտեղ դուք, էնտեղ էլ՝ մենք: Դուք մենակ ճամփան ցույց տվեք, իսկ ես արդեն հետ չեմ մնա, չնայած կողիս անտանելի ցավին:

Սանդուղքն ի վար.

- Ֆյոդո՛ր, նամակներ չե՞ն եղել:

Սանդուղքն ի վեր.

- Չեն եղել, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ (ապա՝ մտերմաբար կիսաշշուկով), իսկ երրորդ բնակարանում բնակընկերությունից մարդ են տեղավորել:

Վեհակերպ շնային բարերարը կտրուկ շրջվեց աստիճանների վրա ու բազրիքից հակվելով՝ սարսափած հարցրեց.

- Հը՛ը՞...

Աչքերը կլորացել էին, բեղերը՝ բիզ-բիզ կանգնել:

Բարապանը վեր տնկեց գլուխը, ափերը խոսափող արեց շրթունքներին ու հաստատեց.

- Ճիշտ այդպե՛ս, ուղիղ չորս հատ:

- Աստվա՛ծ իմ, պատկերացնում եմ՝ հիմա ինչ կկատարվի բնակարանում: Իսկ ի՞նչ են անում:

- Ոչ մի բան էլ չեն անում:

- Իսկ Ֆյոդոր Պավլովի՞չը:

- Շիրմաների ու աղյուսի հետևից է գնացել: Միջնորմներ է դնելու:

- Սատանա՞ն գիտի ինչ է:

- Բոլոր բնակարաններում են տեղավորելու, Ֆի-լի՛պ Ֆիլիպովիչ, ձեզնից բացի: Նոր ժողով եղավ, նոր ընկերություն ընտրեցին, իսկ հների վզակոթին տվին:

- Ի՞նչ է կատարվում: Այ-ա՛յ-ա՛յ... Ֆյո՛ւտ-Ֆյո՛ւտ-Ֆյո՛ւտ...

Գալի՛ս եմ, սլանո՛ւմ եմ: Կո՛ղս, բարի՛ եղեք, իրեն զգալ է տալիս: Թույլ տվեք լիզել ձեր կոշիկը:

Բարապանի տրեզն անհետացավ ներքևում: Մարմարապատ հարթակում տաքություն փչեց խոր-ողվակներից, մի դարձ էլ՝ ահա և բելէտաժը:

II

Տառաճանաչ լինելը լրիվ անիմաստ է, եթե առանց այդ էլ մի վերստի վրա առնում ես մսի հոտը: Բայցևայնպես, եթե ապրում ես Մոսկվայում, ու գլխումդ գոնե մի քիչ ուղեղ կա, կամա թե ակամա կարդալ կսովորես, ընդ որում՝ առանց որևէ դասընթացի: Մոսկովյան քառասուն հազար շներից երևի ամենաապուշը չկարողանա տառկապ անել «երշիկ» բառը:

Շարիկը սովորել սկսեց գույներով: Նոր էր դարձել չորս ամսական, երբ Մոսկվայով մեկ կանաչ-երկնագույն ցուցանակներ փակցրին՝

ՄՍՊՕ[6] - ՄՍԻ ՎԱՃԱՌՔ

Կրկնում ենք. լրիվ անիմաստ էր, քանի որ առանց այն էլ ակնհայտ էր մսի հոտը: Եվ մի անգամ միայն սխալմունք եղավ. թունավոր երկնագույնով առաջնորդված Շարիկը, ում հոտառությունը վնասվել էր շարժիչների բենզինահոտից, մսի տաղավարի փոխարեն հայտնվեց Մյասնիցկայա փողոցի Գոլուբիզներ եղբայրների էլեկտրական պիտույքների խանութում: Եղբայրների մոտ շունը մեկուսիչով հաղորդալար ճաշակեց, և դա կառապանի մտրակից թունդ էր: Այս նշանավոր պահն էլ կարելի է համարել Շարիկի

6 ՄՍՊՕ - Սպառողական կազմակերպությունների Մոսկվայի միություն:

ուսումնառության սկիզբը: Հենց այնտեղ, մայթին, Շարիկն սկսեց գիտակցել, որ ամեն «երկնագույն» չէ, որ «միս» է նշանակում, և այրող ցավից պոչը ետևի թաթերի արանքն առած ու վնգստալով՝ մտաբերեց, որ բոլոր մսի տաղավարների վրա, ձախից աջ, ոսկեգույն կամ շեկ, սահնակ հիշեցնող ինչ-որ խզբզոց էր լինում:

Հետո արդեն գործն ավելի հաջող ընթացք առավ: «Ա»-ն սովորեց «Գլխաձուկ»-ում, Մոխովայայի անկյունում: Հետո «Կ»-ն սովորեց. նրան հարմար էր «ձուկ»-ը պոչից կարդալ, քանի որ սկզբին միլիցիոներ էր կանգնում:

Հախճասալե քառանկյունները, որոնցով երեսպատված են Մոսկվայի անկյունային վաճառակետերը, միշտ և անփոփոխ նշանակում էին.

«Պ-Ա-Ն-Ի-Ր»

Ինքնաեռի սև ծորակը, որ գլխավորում էր բառը, խորհրդանշում էր նախկին տիրոջը՝ Չիչկինին, հոլանդական կարմիրի լեռները՝ գազան-գործակատարներին, որ ատում էին շներին, հատակի թեփը ու գեշ հոտ արձակող բաքշտեյնը[7]:

Եթե հարմոնիկի նվագ կար, որը շատ էլ չէր տարբերվում «սիրելի Ամդայից», ու նրբերշիկ էր բուրում, առաջին տառերը սպիտակ պաստառների վրա չափազանց հարմարավետ շարվում դառնում էին «ան-

7 Բաքշտեյն - հոլանդական պանրի տեսակ:

վայե...», ինչը նշանակում էր՝ «Անվայելուչ բառերով չարտահայտվել ու թեյափող չտալ»: Այստեղ երբեմն եռում էր կռիվը, բռունցքներով, ճիշտ է, իրար մռութի քիչ էին հասցնում, բայց շներին՝ մի՛շտ՝ սրբիչներով ու սապոգներով:

Եթե ցուցափեղկում ազդրի անթարմ ապուխտ ու մանդարիններ էին, ուրեմն՝ սը-սը... սննդամթերք... Եթե մուգ շշեր են՝ գեշ հեղուկով... Գը-ի-նը-ի... Գինի... Նախկին Ելիսեև եղբայրները:

Անհայտ պարոնը, որ շանը քարշ էր տվել երկրորդ հարկի իր շքեղ բնակարանի դռան մոտ, զանգը տվեց, և նույն պահին շունն աչքը գցեց մեծ, սև, ոսկետառ ցուցանակին, որ փակցված էր լայն, ալիքաձև վարդագույն ապակիով դռան կողքին: Առաջին երեք տառն անմիջապես կցեց իրար՝ «Պը-րը-ո՝ պրո», բայց հետո մի ցմփոր, երկկողանի, հայտնի չէ՝ ինչ նշանակող անպետքություն էր գալիս: «Կարող է՞ պրոլետար է»,- զարմանքով մտածեց Շարիկը... «Չի՛ կարող պատահել»: Տնկեց քիթը, նորից հոտոտեց մուշտակը ու վստահ խորհեց. «Չէ՛, էստեղ պրոլետարի հոտ չի գալիս: Գիտական բառ է, բայց Աստված գիտի՝ ինչ է նշանակում»:

Վարդագույն ապակու ետևում մի անսպասելի և ուրախ լույս բռնկվեց՝ առավել ընդգծելով սև ցուցանակը: Դուռը միանգամայն անաղմուկ բացվեց, և սպիտակ գոգնոցով ու ժանեկավոր հերակալով մի երիտասարդ կին հառնեց շան ու նրա տիրոջ առջև:

Նրանցից առաջինին պարուրեց աստվածային ջերմությունը, և կնոջ փեշը բուրեց հովտաշուշանի պես:

«Ա՛յ սա գործ է, այ սա հասկանո՛ւմ եմ»՝ մտածեց շունը:

- Խնդրե՛մ, պարո՛ն Շարիկ,- հեգնաբար հրավիրեց պարոնը, և Շարիկը, պոչն ակնածալից շարժելով, համեցավ:

Շքեղ նախասրահը լեփ-լեցուն էր բազմաթիվ իրերով: Մտապահվեց մինչև հատակը հասնող հայելին, որն անմիջապես արտացոլեց քծծված ու քրքրված Շարիկին, վերևում՝ եղջերուի սարսափելի եղջյուրները, անհամար մուշտակներն ու կրկնակոշիկները և ծիածանաքարե կակաչի մեջ էլեկտրականությունը՝ առաստաղի տակ:

- Որտեղի՞ց եք սրան գտել, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- ժպտալով հարցրեց կինը՝ օգնելով հանել սև աղվեսենու մուշտակը, որ կապտավուն կայծ էր տալիս: - Աստված իմ, ի՞նչ գոնջոտն է:

- Հիմար բան ես ասում: Որտե՞ղ է գոնջոտ,- խստաձայն ու հատու կտրեց պարոնը:

Մուշտակը հանելով՝ նա մնաց անգլիական մահուդից սև կոստյումով, և փորին, ուրախ, բայց և ոչ այնքան վառ փայլկտաց ոսկե շղթան:

- Սպասի՛ր, շուռումուռ մի գա, հիմարիկ: Հը՛մ... սա գոնջուկ չէ... Դե, սպասի՛ր, սատանա... Հը՛մ, այրվածք է: Ո՞ր սրիկան է քեզ այսպես խաշել: Հը՞: Դե, մի՛ շարժվիր, այդպես էլ մնա...

«Խոհարա՜րը, բանտի բաժին խոհարարը»՝ սրտաճմլիկ նայելով՝ մրմնջաց շունը ու վնգվնգաց:

- Զի՛նա,- հրամայեց պարոնը,- սրան՝ անմիջապես վիրակապարան, իսկ ինձ խալաթ տուր:

Կինը շվշվացրեց, չթթացրեց մատները, և շունը, մի փոքր տատանվելով, հետևեց նրան: Ընկան նեղ, աղոտ լուսավորված միջանցքը, մի լաքապատ դուռ անցան, հասան միջանցքի ծայրը, ապա հայտնվեցին մթին խցում, որը հենց առաջին հայացքից շանը դուր չեկավ իր չարագուշակ հոտով: Մութը չխկաց ու վերածվեց կուրացուցիչ ցերեկվա, ընդ որում՝ լույսը կայծկլտաց բոլոր կողմերից, շողշողաց ու ճերմակացավ:

«Է՜, ո՛չ,- մտովի վնգստաց շունը,- կներեք, չե՛մ հանձնվի: Հասկանո՜ւմ եմ. սատանան տանի դրանց՝ իրենց երշիկով: Խաբխբելով՝ ինձ շան հիվանդանոց են գցել: Հիմա կստիպեն, որ լուծողական լակեմ, ու կողս դանակներով կկտրտեն: Առանց էն էլ կողիս ձեռ տալ չի լինում»:

- Է՜, չեղավ, ո՞ւր գնացիր, ո՞ւր,- ծղրտաց նա, ում Զինա էին անվանել:

Շունը կուտապ արեց, զսպանակվեց ու հանկարծ առողջ կողով այնպես խփվեց դռանը, որ խշրտոցը տարածվեց բնակարանով մեկ: Ապա հետ թռավ, պտույտ տվեց տեղում, ինչպես գլդոնը ձողիկի տակ, շուռ տվեց սպիտակ դույլը, որից բամբակի փերթեր թռան: Երբ պտույտ էր գալիս, թվում էր՝ փայլփլուն

գործիքներով լի պահարաններով պատած պատերը ճախրում են շուրջը, թռչկոտեցին սպիտակ գոգնոցն ու կնոջ աղճատված դեմքը:

- Ո՞ւր, ո՞ւր, փռչո՜տ սատանա,- հուսահատ ծղրտաց Զինան: - Ա՜յ քեզ անիծված...

«Ո՞ւր է սրանց հետնամուտքը»՝ փորձում էր հասկանալ շունը: Նա թափ առավ, գունդուկծիկ եղավ և բախտաբերի խփվեց ապակուն՝ հասկանալով, որ երկրորդ դուռն է: Փշուրների մի ամբողջ պարս թռավ բզզոցով ու զնգոցով, հատակին ընկավ ցմփոր անոթը՝ ինչ-որ շիկավուն անպետքությամբ, որ ակնթարթորեն տարածվեց հատակին ու սկսեց գարշելի հոտ արձակել: Բացվեց իսկական դուռը:

- Սպասի՜ր, անասո՜ւն,- վեր-վեր թռչելով գոռաց տերը. նա խալաթի միայն մի թևքն էր հագել ու փորձում էր բռնել շան հետևի թաթերից: - Զինա, այդ սրիկայի վզի՜ց բռնիր, վզի՜ց...

- Աստ... Աստվա՜ծ իմ, ա՜յ քեզ շուն:

Դուռն ավելի լայն բացվեց, ու ներս խուժեց արական սեռի ևս մի անձնավորություն՝ խալաթով: Ապակու փշուրները տրորելով՝ նա ոչ թե շան վրա նետվեց, այլ՝ դեպի պահարանը, բացեց, և սենյակը լցվեց քաղցրավուն, սրտխառնոց առաջացնող հոտով: Հետո այդ անձնավորությունը վերևից փորով ընկավ շան վրա, ընդ որում՝ շունը, կոշկաքուղերից վեր, հաճույքով հափ արեց նրա ոտքը: Անձանավորությունը տնքաց, բայց իրեն չկորցրեց: Սրտխառնոց հարու-

ցող հեղուկի հոտը բռնեց շան շունչը, գլուխը պտույտ եկավ, ոտքերը թուլացան, և նա, ծուռտիկ ու կողքանց, ինչ-որ տեղ լողաց: «Շնորհակալություն, իհարկե,- երազկոտ խորհում էր նա:- Մնաս բարո՛վ, Մոսկվա՛: Չեմ տեսնի այլևս ոչ Չիչկինին, ոչ պրոլետարներին, ոչ էլ կրակովյան երշիկը: Դրախտ եմ գնում՝ շնային համբերատարության համար: Սպանդագործ եղբայրներ, ինչո՞ւ այսպես վարվեցիք ինձ հետ»:

Երբ հարություն առավ, գլուխը թեթևակի պտտվում էր ու սիրտը՝ մի քիչ խառնում, իսկ կողին ասես ոչինչ եղած չլիներ, կողը անուշ լռում էր: Շունը բաց արեց աջ, մշուշված աչքը և տեսավ, որ կողերն ու փորը պինդ վիրակապված են: «Համենայնդեպս, իրանցն արեցին շան որդիքը,- աղոտ միտք արեց նա: - Բայց՝ վարպե՛տ են: Պետք է արժանին հատուցել»:

- Սևիլիայից մինչ Գրենադա... Գիշերվա մթնշաղում,- գլխավերևում երգեց մեկի ցրված ու կեղծ ձայնը:

Շունը զարմացավ, լայն բացեց երկու աչքն էլ ու կողքին տեսավ տղամարդու ոտքը՝ սպիտակ աթոռակի վրա: Տաբատն ու ոտաշորի փողքը քշտված էին, և մերկ, դեղին սրունքին արյուն ու յոդ էր քսմսված:

- Սրբե՛ր,- մտածեց շունը: - Սա, ուրեմն, ե՞ս եմ կծել: Ի՞մ աշխատանքն է: Ուրեմն կծեծեն:

- Սերենադներ են ամենուր հնչում ու տարածվում

է զարկը սրերի... Դե, թափառակա՛ն, ինչո՞ւ կծեցիր բժշկին: Հը՞: Ինչո՞ւ ջարդեցիր ապակին: Հը՞:

- Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ,- խղճալի վնգստաց շունը:

- Լա՛վ, լա՛վ: Ուշքդ գլո՞ւխդ եկավ: Դե, ուրեմն պառկիր, հիմարի՛ մեկը:

- Ինչպե՞ս եք կարողացել, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, հրապուրել այսպիսի ջղային շանը,- հարցրեց հաճելի տղամարդկային ձայնը, և ոտաշորի փողքը սողաց ներքև: Ծխախոտի հոտ եկավ, ու պահարանում զնգացին սրվակները:

- Փաղաքշանքո՛վ: Միակ հնարավոր եղանակը, որով կարելի է շփվել կենդանի արարածի հետ: Տեռորով կենդանիների հետ ոչինչ հնարավոր չէ անել՝ զարգացման որ աստիճանին էլ լինեն: Ես դա պնդե՛լ եմ, պնդո՛ւմ եմ ու կպնդե՛մ: Նրանք իզուր են կարծում, թե տեռորն իրենց կօգնի: Ո՛չ, չի՛ օգնի: Ինչպիսին էլ որ լինի՝ սպիտակ, կարմիր, թեկուզ՝ դարչնագույն: Տեռորը կատարելապես կաթվածահար է անում նյարդային համակարգը: Չի՛նա: Ես այս սրիկայի համար կրակովյան երշիկ եմ առել՝ մեկ ռուբլի քառասուն: Նեղություն կրիր՝ կերակրիր, երբ սրտխառնոցն անցնի:

Խշրտացին ապակու ավելվող փշուրները, և կանացի մի ձայն սեթևեթալով ասաց.

- Կրակովյա՞ն, ախր նրա համար կրճանք էր պետք առնել մսի խանութից: Իսկ կրակովյանն ավելի լավ է ինքս ուտեմ:

- Փորձի՛ր հապա: Քեզ ուտել ցույց կտամ: Մարդ-

կային ստամոքսի համար թույն է դա: Չափահաս աղջիկ ես, բայց ոնց որ երեխա լինես, ինչ զզվանք ասես՝ բերանդ ես տանում: Չհամարձակվե՛ս: Ո՛չ ես, ո՛չ դոկտոր Բորմենտալը հետդ գլուխ չենք դնի, երբ փորդ սկսի ցավել... «Եվ բոլոր նրանց, ով այստեղ կասի, թե կա քեզ նման...»:

Այդ պահին մեղմ, կոտորակվող ծլնգոց տարածվեց բնակարանում, ու հեռվից, նախամուտքում, ձայներ լսվեցին: Հեռախոսն էր: Չինան անհետացավ:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ծխախոտի քնթուկը գցեց դույլը, կոճկեց խալաթը, պատի հայելուն նայելով՝ շտկեց փափուկ բեղերը ու ձայն տվեց շանը.

– Ֆյո՛ւտ, ֆյո՛ւտ, ֆյո՛ւտ... Դե, ոչինչ, ոչինչ: Գնանք ընդունենք:

Շունն անհաստատ վեր կացավ, դողդողաց, օրորվեց, բայց արագ հավաքեց իրեն ու գնաց Ֆիլիպ Ֆիլիպովիչի փողփողացող փեշի ետևից: Կրկին հատեց նեղ միջանցքը, որ արդեն վառ լուսավորված էր ընդառաստաղյա լուսամփոփով: Իսկ երբ բացվեց լաքապատ դուռը, Ֆիլիպ Ֆիլիպովիչի հետ մտավ առանձնասենյակ, և սենյակն իր կահավորանքով ապշեցրեց նրան: Նախ՝ ամբողջովին թաղված էր լույսերի մեջ. լույս էր ծեփածո առաստաղի տակ, լույս էր սեղանին, լույս էր պատերին, պահարանների ապակիների մեջ: Լույսը հեղեղել էր իրերի մի ողջ անսահմանություն, որոնց մեջ ամենահետաքրքիրը հսկա բուն էր, որ պատի վրա նստել էր կոճղին:

- Պառկի՛ր,- հրամայեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Հանդիպակաց դրվագազարդ դուռը բացվեց, ու հայտնվեց խածվածը, որ հիմա, վառ լույսի տակ, պարզվեց՝ երիտասարդ, գեղեցիկ, սուրուլիկ մորուքով տղամարդ էր, մի թուղթ տվեց ու շշնջաց.

- Նախկին...

Եվ նույն պահին էլ անաղմուկ չքացավ, իսկ Ֆիլիպ Ֆիլիպովիչը, տարածելով խալաթի փեշերը, նստեց հսկայական գրասեղանի առաջ և անմիջապես անսովոր ծանրումեծ ու ներկայացուցչական տեսք առավ:

«Չէ՛, սա բուժարան չի: Ես ինչ-որ ուրիշ տեղ եմ ընկել,- շփոթված մտածեց շունը ու մեկնվեց գորգանախշին՝ ծանր կաշվե բազմոցի մոտ,- իսկ այդ բվին մենք կբացատրենք...»:

Դուռը փափուկ բացվեց, ու մտավ մեկը, որն այնպես ցնցեց շանը, որ սա վնգստաց, բայց՝ չափազանց երկչոտ...

- Լռե՛լ: Այ քեզ բա՜ն, դուք ուղղակի անճանաչելի եք, աղավնյա՛կս:

Ներս մտածը հարգալից ու շփոթահար խոնարհվեց Ֆիլիպ Ֆիլիպովիչին:

- Հի՛-հի՛, դուք մոգ եք ու հրաշագործ, պրոֆեսո՛ր,- երկչոտ մրմնջաց նա:

- Հանե՛ք շալվարը,- հրամայեց Ֆիլիպ Ֆիլիպովիչն ու վեր կացավ:

«Հիսո՛ւս Աստված,- մտածեց շունը,- այ քեզ պտո՛ւղ»:

Պտուղի գլխին կատարելապես կանաչ մազեր էին աճում, որոնց գույնը ծոծրակին փոխվում էր ժանգածխախոտագույնի, դեմքով մեկ խորշոմներ էին փռված, բայց մաշկը վարդագույն էր, ինչպես նորածնինը: Ձախ ոտքը չէր ծալվում, ստիպված էր քարշ տալ գորգի վրայով, բայց դրա փոխարեն աջը ցատկոտում էր մանկական շրխկանի ոտքի պես: Հրաշալի պիջակի դարձածալին աչքի պես դուրս էր պրծել մի թանկարժեք քար:

Հետաքրքրասիրությունից շան սրտխառնոցն անցավ:

- Հա՛ֆ, հա՛ֆ,- թեթև վնգվնգաց նա:

- Լռե՛լ: Ինչպե՞ս եք քնում, աղավնյա՛կս:

- Հե՛-հե՛, մենք մենա՞կ ենք, պրոֆեսո՛ր: Աննկարագրելի բան է,- շփոթահար խոսեց այցելուն: Պարոլ դ՛օններ[8], 25 տարվա մեջ նման բան չէր եղել,- սուբյեկտը բռնեց անդրավարտիքի կոճակը,- կհավատա՞ք, պրոֆեսո՛ր, ամեն գիշեր երամ-երամ մերկ աղջիկներ: Ես հմայված եմ: Դուք հրաշագործ եք:

- Հը՛մ,- մտահոգվեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ նայելով այցելուի բիբերին:

Նա վերջապես կարողացավ տիրապետել կոճակին ու հանեց գծավոր անդրավարտիքը: Դրա տակ մի չտեսնված վարտիք կար՝ կրեմագույն, ասեղնագործված մետաքսե սև կատուներով և օծանելիք էր բուրում:

8 Պարոլ դ՛օններ - Ազնիվ խոսք (ֆր.):

Շունը տանել չէր կարողանում կատուներին և այնպես հաֆ արեց, որ այցելուն վեր թռավ.

-Ա՛յ:

- Ծե՛ծ ես ուտելու: Մի վախեցեք, նա չի կծում:

«Էդ ե՞ս չեմ կծում»,- զարմացավ շունը:

Ներս մտածի տաբատի գրպանից հատակին մի փոքրիկ ծրար ընկավ, որի վրա արձակ մազերով մի գեղեցկուհի էր պատկերված: Սուբյեկտը վեր թռավ, վերցրեց նկարը ու թունդ կարմրեց:

- Բայց տեսեք, հա՛,- մատը սպառնալից թափ տալով՝ նախազգուշական ու խոժոռ ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- համենայնդեպս չչարաշահեք:

- Չեմ չարա...,- շփոթված մրմնջաց սուբյեկտը՝ շարունակելով հանվել,- ես, թանկագին պրոֆեսո՛ր, զուտ որպես գիտափորձ...

- Եվ ի՞նչ, ինչպիսին են արդյունքնե՞րը,- խիստ հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Սուբյեկտը ոգևորված թափահարեց ձեռքը:

- Քսանհինգ տարի, Աստվա՛ծ վկա, պրոֆեսո՛ր, այդպիսի բան չէր եղել: Վերջին անգամ՝ 1899 թվին, Փարիզում, Ռյու դե լա Պեում:

- Իսկ ինչո՞ւ եք կանաչել:

Եկվորի դեմքը մշուշվեց:

- Անիծված ոսկրաճա՛րպը: Չեք պատկերացնի, պրոֆեսո՛ր, թե այդ անբանները ներկի փոխարեն ինչ են սաղացրել վրաս: Նայեք միայն,- տրտնջաց սուբյեկտը՝ աչքերով հայելի փնտրելով:- Դրանց մռու-

թը պիտի ջարդես,- կատաղի ավելացրեց նա:- Ի՞նչ անեմ հիմա, պրոֆեսո՛ր,- լացակումած հարցրեց նա:

- Հը՛մ, մաքուր ածիլեք:

- Պրոֆեսո՛ր,- աղեկտուր գոչեց այցելուն,- ախր նորից ճերմակ կաճեն: Բացի այդ, չեմ կարողանա ծառայությանս վայրում հայտնվել, առանց այն էլ արդեն երրորդ օրն է աշխատանքի չեմ գնում: Ախ, պրոֆեսո՛ր, եթե մազերը երիտասարդացնելու մեթոդն էլ գտնեիք:

- Ամեն ինչ միանգամից չի լինի, թանկագի՛նս,- քրթմնջաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Կռանալով՝ նա փայլող աչքերով զննեց այցելուի փորը:

- Դե ինչ, հրաշալի՛ է, ամեն ինչ կարգին է: Անկեղծ ասած, նման արդյունք չէի սպասում... Ծով արյուն ու ծով երգեր... Հագնվեք, աղավնյա՛կս:

- «Ես նրան, որ չքնաղն է բոլորից...»,- խզխզացող թավայի ձայնով երգեց այցելուն և շողշողալով սկսեց հագնվել: Իրեն կարգի բերելուց հետո, վեր-վեր թռչելով և օծանելիք բուրելով՝ հաշվեց ու Ֆիլիպ Ֆիլիպովիչին տվեց սպիտակ թղթադրամների մի տրցակ և սկսեց քնքշորեն սեղմել նրա ձեռքը:

- Երկու շաբաթ կարող եք չգալ,- ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- բայցևայնպես, խնդրում եմ, զգույշ եղեք:

- Պրոֆեսո՛ր,- դռան ետևից արձագանքեց ոգեշունչ ձայնը,- միանգամայն հանգիստ եղեք,- նա հեշտասիրաբար մանրիկ ծիծաղեց ու չքացավ:

Զանգի սորուն ձայնը թռավ բնակարանով մեկ, լաքապատ դուռը բացվեց, մտավ խածվածը և Ֆիլիպ Ֆիլիպովիչին մի թերթիկ հանձնելով՝ ասաց.

- Տարիքը ճիշտ չի ներկայացված: Հավանաբար՝ 54-55: Սրտազարկերը խուլ են:

Նա անհետացավ ու փոխարինվեց մի շրշացող տիկնոջով, որ լայնեզր գլխարկը կտրիճաբար թեքել էր կողքի և թարշամած ու ծամծմված պարանոցին մանյակ էր կրում: Սարսափելի սև պարկեր կային աչքերի տակ, իսկ այտերը տիկնիկային-վարդագույն էին: Նա խիստ հուզվում էր:

- Տիկի՛ն, դուք քանի՞ տարեկան եք,- չափազանց խիստ հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Կինը վախեցավ և նույնիսկ գունատվեց վարդագույն դիմաներկի կեղևի տակ:

- Ես, պրոֆեսո՛ր, երդվում եմ, եթե գիտենայիք՝ ինչ դրամա է...

- Քանի՞ տարեկան եք, տիկի՛ն,- ավելի խիստ կրկնեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Ազնիվ խոսք... Դե՛, քառասունհինգ...

- Տիկի՛ն,- գոռաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Ինձ մարդիկ են սպասում: Մի՛ ուշացրեք: Դուք միակը չեք:

Տիկնոջ կուրծքը փոթորկվում էր:

- Միայն ձեզ, որպես գիտության լուսատուի: Բայց երդվում եմ, դա այնքան սարսափելի է...

- Քանի՞ տարեկան եք,- մոլեգին ծղրտոցով հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, և ակնոցը փայլատակեց:

- Հիսունմեկ,- վախից գունդուկծիկ դառնալով՝ պատասխանեց տիկինը:

- Հանեք շալվարը, տիկի՛ն,- թեթևացած ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը և մատնացույց արեց անկյունի բարձր, սպիտակ կառափնարանը:

- Երդվում եմ, պրոֆեսո՛ր,- մրմնջում էր տիկինը՝ դողացող մատներով ինչ-որ կոճակներ արձակելով գոտու վրա:- Այդ Մո՛րիցը... Խոստովանում եմ, ինչպես եկեղեցում...

- Սևիլիայից մինչև Գրենադա...,- մտացրիվ դնդնալով՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչը սեղմեց մարմարե լվացարանի ոտնակը: Ջուրը խշշաց:

- Աստված վկա,- խոսում էր տիկինը, և կենդանի շառագույնը դուրս էր տալիս այտերին՝ արհեստականի փոխարեն:- Գիտեմ, որ դա իմ վերջին կիրքն է: Ախր այնպիսի՛ սրիկան է: Ա՛խ, պրոֆեսո՛ր: Նա խաղախարդախ է, ողջ Մոսկվան գիտի: Ու ոչ մի քոսոտ դերձակուհու բաց չի թողնում: Ախր այնպե՛ս երիտասարդ է: - Տիկինը մրմնջում էր՝ շրշացող փեշերի տակից դուրս քաշելով ճմռթած ժանյակե գուլոնը:

Շան աչքերը վերջնականապես մշուշվեցին, ու ամեն ինչ թռա՛վ-գնաց:

«Դե, կորեք բոլորդ էլ գրողի ծոցը,- գլուխը՝ թաթերին ու ամոթից սուտքուն տալով աղոտ մտածեց նա,- նույնիսկ չեմ փորձի հասկանալ, թե սա ինչ է. մեկ է՝ չեմ հասկանա»:

Նա սթափվեց զրնգոցից ու տեսավ, որ Ֆիլիպ Ֆի-

լիպովիչն ինչ-որ փայլուն սրվակներ է նետում թասի մեջ:

Պուտավոր տիկինը, ձեռքերը կրծքին սեղմած, հավատով նայում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչին: Սա լոջախոհ խոժոռվեց, նստեց սեղանի մոտ, ինչ-որ բան գրեց:

- Ես ձեզ, տիկի՛ն, կապիկի ձվարաններ կպատվաստեմ,- հայտարարեց նա խստահայաց:

- Ախ, պրոֆեսո՛ր, մի՞թե կապիկի:

- Այո՛,- անհողդողդ պատասխանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Իսկ վիրահատությունը ե՞րբ է,- գունատված ու մարող ձայնով հարցրեց տիկինը:

- Սևիլիայից մինչև Գրենադա... Ուհը՛մ... երկուշաբթի: Կլինիկայում կպառկեք առավոտից: Օգնականս կնախապատրաստի ձեզ:

- Ա՛խ, կլինիկա չեմ ուզում: Իսկ հնարավոր չէ՞ ձեզ մոտ, պրոֆեսոր:

- Գիտե՞ք ինչ, վիրահատություններ այստեղ անում եմ միայն ծայրահեղ դեպքերում: Դա շատ թանկ կարժենա՝ 50 չերվոնեց[9]:

- Ես համաձայն եմ, պրոֆեսո՛ր:

Նորից շառաչեց ջուրը, օրորվեց փետրավոր գլխարկը, հետո հայտնվեց ափսեի նման ճաղատ մի գլուխ ու գրկեց Ֆիլիպ Ֆիլիպովիչին: Շունը ննջում էր: Սրտխառնոցն անցել էր, շունը վայելում էր չցա-

9 Տասը ռուբլու արժողության թղթադրամ ՍՍՀՄ-ում, 1922-1947 թվականներին:

վող կողն ու ջերմությունը, նույնիսկ մի քիչ խռմփացրեց ու հասցրեց մի պատառ հաճելի երազ տեսնել՝ որ ինքը բվի պոչից մի ամբողջ խուրձ փետուր է պոկել... Հետո հուզված ձայնը ծվաց գլխավերևում.

– Ես չափազանց հայտնի մարդ եմ Մոսկվայում, պրոֆեսո՛ր: Ինչպե՞ս վարվեմ:

– Աստվա՛ծ իմ,– զայրացած բղավում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը,– ախր չի՛ կարելի այդպես: Պետք է զուսպ լինել: Նա քանի՞ տարեկան է:

– Տասնչո՛րս, պրոֆեսո՛ր... Հասկանո՞ւմ եք՝ հրապարակումը կկործանի ինձ: Մոտ օրերս պիտի արտասահմանյան գործուղում ստանայի:

– Այո, բայց ես իրավաբան չեմ, աղավնյա՛կս... Դե ինչ, կսպասեք երկու տարի և կամուսնանաք նրա հետ:

– Ես ամուսնացած եմ:

– Ախ, պարոնա՛յք, պարոնա՛յք:

Դռները բացվում էին, փոխվում էին դեմքերը, պահարանում զրնգում էին գործիքները, և Ֆիլիպ Ֆիլիպովիչն աշխատում էր առանց ձեռքերը ծալելու:

«Անամոթ բնակարան է,– մտածեց շունը,– բայց ի՞նչ լավ է: Եվ ի՞նչ գրողի համար եմ նրան պետք եկել: Մի՞թե ողջ կթողնի: Ա՛յ քեզ խենթ: Ախր հերիք է մատը շարժեր՝ էն տեսակ շան տեր կդառնար, որ բոլորն ախ քաշեին: Իսկ գուցե հենց ես եմ գեղեցիկը: Երևի իմ բախտն է: Իսկ էդ բուն անպետքի մեկն է... Լկտի՛»:

Շունը վերջնականապես սթափվեց ուշ երեկոյան,

1915.info

երբ զանգերը դադարեցին, և հենց այն պահին, երբ դռները ներս թողեցին առանձնահատուկ այցելուներ: Դրանք միանգամից չորսն էին: Բոլորն էլ երիտասարդ և բոլորը շատ համեստ հագնված:

«Սրա՞նց ինչ է պետք»՝ զարմացած մտածեց շունը: Հյուրերին շատ ավելի անբարյացակամ ընդունեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը: Կանգնել էր գրասեղանի մոտ ու ներս մտածներին նայում էր, ինչպես զորավարը՝ թշնամիներին: Արծվենի քթի ռունգերը փքվել էին:

Ներս մտածները անվճռական ոտնեոտ արին գորգի վրա:

- Մենք ձեզ մոտ ենք եկել, պրոֆեսո՛ր,- խոսեց նրանցից մեկը, ում գլխին չորս արշին բարձրությամբ կիտվել էր սև ալիքվող մազերի խուրձը,- ահա թե ինչ գործով...

- Դուք, պարոնա՛յք, իզուր եք այս եղանակին առանց կրկնակոշիկների ման գալիս,- խրատական ընդհատեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- նախ՝ կարող եք ցուրտ առնել, և երկրորդ՝ կկեղտոտեք իմ գորգերը, իսկ իմ բոլոր գորգերը պարսկական են:

Խրձավորը լռեց, ու չորսն էլ ապշահար հայացքները հառեցին Ֆիլիպ Ֆիլիպովիչին: Լռությունը տևեց մի քանի վայրկյան, և ընդհատվեց միայն երբ Ֆիլիպ Ֆիլիպովիչը մատները կտկտացրեց սեղանին դրված նախշազարդ սկուտեղի վրա:

- Նախ, մենք պարոնայք չենք,- վերջապես ասաց չորսից ամենաերիտասարդը, որ դեղձի էր նման:

- Նախ,- նրան էլ ընդհատեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- դուք տղամա՞րդ եք, թե՝ կին:

Չորսը նորից լռեցին ու բաց արին բերանները: Այս անգամ առաջինը ուշքի եկավ խրձավորը:

- Ի՞նչ տարբերություն, ընկե՛ր,- վեհապանծ հարցրեց նա:

- Ես կին եմ,- խոստովանեց կաշվե բաճկոն հագած դեղձագույն պատանին ու շառագունեց: Նրանից հետո, չգիտես ինչու, շատ ավելի թունդ շառագունեց ներս եկածներից մեկը՝ փափախավոր շիկահերը:

- Այդ դեպքում կարող եք չհանել կեպին, իսկ ձեզ, ողորմած պարո՞ն, խնդրում եմ հանել գլխարկը,- ազդու ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Ես ձեզ համար ողորմած պարոն չեմ,- փափախը հանելով՝ կտրուկ հայտարարեց շիկահերը:

- Մենք եկել ենք ձեզ մոտ...,- նորից սկսեց խրձավոր սևը:

- Նախ՝ ով է այդ մենքը:

- Մենք մեր շենքի նոր տնային կառավարչությունն ենք,- զսպված կատաղությամբ խոսեց սևը: - Ես Շվոնդերն եմ, սա՝ Կյազեմսկայան, սրանք՝ ընկերներ Պեստրուխինն ու Ժարովկինը: Եվ ահա մենք...

- Այդ ձե՞զ են տեղավորել Ֆյոդոր Պավլովիչ Սաբլինի բնակարանում:

- Մեզ,- պատասխանեց Շվոնդերը:

- Աստվա՜ծ իմ, կորավ Կալաբուխովյան շենքը,- հուսահատ բացականչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը և իրար զարկեց ափերը:

- Ի՞նչ է, պրոֆեսո՛ր, ձե՞ռ եք առնում,- զայրացավ Շվոնդերը:

- Ի՞նչ ձեռ առնել: Կատարելապես հուսահատված եմ,- ճչաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը: - Հիմա ի՞նչ է կատարվելու ջեռուցման հետ:

- Ծաղրո՞ւմ եք, պրոֆեսո՛ր Պրեոբրաժենսկի:

- Ի՞նչ գործով եք եկել: Որքան հնարավոր է՝ արագ ասեք, ես պետք է ճաշեմ:

- Մենք՝ շենքի կառավարչությունը,- ատելությամբ խոսեց Շվոնդերը,- եկել ենք ձեզ մոտ մեր շենքի բնակիչների ընդհանուր ժողովից հետո, որտեղ դրված էր շենքի բնակարանների խտացման հարցը:

- Ով էր ում վրա դրվա՞ծ,- ճչաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Բարեհաճեք պարզորոշ արտահայտել ձեր մտքերը:

- Դրված էր խտացման հարցը:

- Բավական է: Հասկացա: Ձեզ հայտնի՞ է, որ սույն թվականի օգոստոսի 12-ի որոշումով իմ բնակարանն ազատված է ամեն կարգի խտացումներից ու վերաբնակեցումներից:

- Հայտնի է,- պատասխանեց Շվոնդերը,- սակայն ընդհանուր ժողովը, քննության առնելով ձեր հարցը, եկավ եզրակացության, որ ընդհանուր առմամբ և ըստ ամենայնի՝ չափից դուրս մեծ տարածք եք զբաղեցնում: Դուք մենակ ապրում եք յոթ սենյակում:

- Ես մենակ ապրում և աշխատում եմ յոթ սենյակում,- պատասխանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- և կցան-

կանայի ութերորդն ունենալ: Այն ինձ անհրաժեշտ է գրադարանի համար:

Քառյակը պապանձվեց:

- Ութերո՞րդը: Էհե՜-հե՜-հե՜,- վերջապես խոսեց գլխրկազրկված շիկահերը: - Ուժե՜ղ էր:

- Աներևակայելի՜ է,- բացականչեց պատանին, որը, պարզվել էր՝ կին է:

- Ահավասիկ, ընդունարանս, նկատի ունեցեք, միևնույն ժամանակ՝ գրադարան, ճաշասենյակը, աշխատասենյակս՝ 3: Վիրակապարանը՝ 4: Վիրահատարանը՝ 5: Ննջարանս՝ 6, և սպասավորների սենյակը՝ 7: Մի խոսքով, չի բավականացնում... Ասենք, դա կարևոր չէ: Իմ բնակարանն ազատված է, ու վերջ խոսակցությանը: Կարո՞ղ եմ գնալ ճաշելու:

- Ներեցե՛ք,- ասաց չորրորդը, որ նման էր ամրակազմ բզեզի:

- Ներեցե՛ք,- նրան ընդհատեց Շվոնդերը,- հենց այդ ճաշասենյակի և վիրակապարանի հարցով էլ եկել ենք: Ընդհանուր ժողովը խնդրում է կամավոր, աշխատանքային կարգապահության կարգով հրաժարվել ճաշասենյակից: Մոսկվայում ոչ ոք ճաշասենյակ չունի:

- Նույնիսկ Այսեդորա Դունկա՜նը,- զիլ կանչեց կինը:

Ֆիլիպ Ֆիլիպովիչին ինչ-որ բան պատահեց, դեմքը թույլ շառագունեց, ու նա ոչ մի հնչյուն չարձակեց՝ սպասելով, թե հետո ինչ է լինելու:

- Եվ վիրակապարանից նույնպես,- շարունակեց Շվոնդերը,- վիրակապարանը հրաշալի կերպով կարելի է միացնել աշխատասենյակին:

- Ուհո՜ւ,- ինչ-որ տարօրինակ ձայն հանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- իսկ որտե՞ղ եմ սնվելու:

- Ննջարանո՜ւմ,- խմբով պատասխանեց քառյակը:

Ֆիլիպ Ֆիլիպովիչի շառագույնը փոքր-ինչ մոխրավուն երանգ ստացավ:

- Ննջարանում սնվել,- խուլ ձայնով խոսեց նա,- վիրակապարանում կարդալ, վիրահատել ծառայանոցում, իսկ ճաշասենյակում՝ զննել հիվանդներին: Շատ հնարավոր է, որ Այսեդորա Դունկանը հենց այդպես էլ անում է: Հնարավոր է՝ ճաշում է աշխատասենյակում, իսկ լողասենյակում ճագար մորթում: Բայց ես Այսեդորա Դունկանը չեմ,- հանկարծ մռնչաց նա, ու շառագույնը փոխվեց դեղինի: - Ես կճաշեմ ճաշասենյակում, կվիրահատեմ վիրահատարանում: Դա հաղորդեք ընդհանուր ժողովին, և խոնարհաբար խնդրում եմ՝ վերադարձեք ձեր գործին, իսկ ինձ հնարավորություն ընձեռեք սնվել այնտեղ, որտեղ սնվում են բոլոր նորմալ մարդիկ, այսինքն՝ ճաշասենյակում, և ոչ թե նախասրահում կամ մանկասենյակում:

- Այդ դեպքում, պրոֆեսո՛ր, նկատի ունենալով ձեր համառ դիմադրությունը,- ասաց հուզված Շվոնդերը,- մենք ձեր վրա կբողոքենք բարձր կանգնած ատյաններին:

- Ըհը՛,- մրմնջաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- այդպե՞ս,- և նրա ձայնը կասկածելիորեն հարգալիր երանգ առավ: - Կխնդրեի մի որոպե սպասել:

«Ա՛յ տղեն,- ցնծագին մտածեց շունը,- տեղովը ես եմ: Այ թե կկծի հիմա դրանց, ա՛յ կկծի: Դեռ չգիտեմ՝ ոնց, բայց հաստատ կծելու է... Տո՛ւր դրանց: Էդ հաստասրունքին բռնել հենց հիմա, սապոգից վերև, ծնկատակի ջլից... ռ՛-ռ՛-ռ՛...»:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը շխկոցով վերցրեց խոսափողը և նրա մեջ այսպես ասաց.

- Խնդրո՛ւմ եմ... այո՛... շնորհակա՛լ եմ... Պյոտր Ալեքսանդրովիչին կանչեք, խնդրում եմ: Պրոֆեսոր Պրեոբրաժենսկին է: Պյոտր Ալեքսանդրովի՞չ: Շատ ուրախ եմ, որ ձեզ գտա: Շնորհակալ եմ, ողջ-առո՛ղջ եմ: Պյոտր Ալեքսանդրովիչ, գիտե՞ք, ձեր վիրահատությունը չեղարկվում է: Ի՞նչ: Ընդհանրապես չեղյալ է հայտարարվում: Ինչպես և մնացած բոլոր վիրահատությունները: Ահա թե ինչու... ես ընդհատում եմ աշխատանքս Մոսկվայում և ընդհանրապես Ռուսաստանում... Հենց նոր ինձ մոտ մտան չորս հոգի, նրանցից մեկը՝ տղամարդու պես հագնված կին, իսկ երկուսը՝ զինված ռևոլվերներով, և ինձ տեռորի են ենթարկում իմ բնակարանում՝ նրա մի մասը խլելու նպատակով:

- Թույլ տվեք, պրոֆեսո՛ր,- սկսեց Շվոնդերը, ու դեմքը այլակերպվեց:

- Ներեցե՛ք... Ես չեմ կարող կրկնել այն ամենը, ինչ

նրանք ասում էին: Ես անհեթեթությունների սիրահար չեմ: Բավական է միայն ասել, որ առաջարկում են հրաժարվել իմ վիրակապարանից, այլ խոսքով՝ ինձ այլ ճանապարհ չեն թողնում, քան ձեզ վիրահատել այնտեղ, որտեղ մինչ օրս հերձում էի ճագարներին: Նման պայմաններում ես ոչ միայն չեմ կարող աշխատել, այլև իրավունք չունեմ: Ուստի ամփոփում եմ գործունեությունս, կողպում բնակարանս և մեկնում Սոչի: Բանալիները կարող եմ հանձնել Շվոնդերին: Թող նա վիրահատի:

Քառյակը քարացավ: Ձյունը հալվում էր նրանց սապոգների վրա:

- Ինչ անե՞լ... Ինձ համար էլ չափազանց տհաճ է... Ինչպե՞ս: Օ՜, ոչ, Պյոտր Ալեքսանդրովիչ: Ո՛չ, ո՛չ: Ես այլևս այդպես համաձայն չեմ: Իմ համբերությունը հատել է: Օգոստոս ամսից՝ սա արդեն երկրորդ դեպքն է: Ինչպե՞ս: Հը՛մ... Ինչպես կուզեք: Թեկուզև... Բայց միայն մեկ պայմանով, ո՛վ կուզի, ե՛րբ կուզի, ինչպե՛ս կուզի, բայց այնպիսի՛ թուղթ լինի, որի առկայությամբ ոչ Շվոնդերը, ոչ մեկ ուրիշը անգամ մոտենալ չկարողանան իմ բնակարանի դռներին: Վերջնակա՞ն թուղթ: Փաստաթղթի՛: Իսկակա՞ն: Զրա՜հ: Եվ որ իմ անունը չհիշատակվի անգամ: Իհարկե: Ես նրանց համար մեռել եմ: Այո՛, այո՛: Խնդրեմ: Ո՞վ: Ըհը՛... Դա արդեն ուրիշ գործ: Ըհը՛... Եղա՛վ: Փոխանցում եմ խոսափողը: Բարի եղեք,- օձություն անելով՝ Շվոնդերին դիմեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- հիմա ձեզ հետ կխոսեն:

- Թույլ տվեք, պրոֆեսո՛ր,- ասաց Շվոնդերը՝ մերթ բռնկվելով, մերթ մարելով,- դուք նենգափոխեցիք մեր ասածը:

- Խնդրում եմ նման արտահայտություններ չօգտագործել:

Շվոնդերը մտացրիվ վերցրեց խոսափողը և ասաց.

- Լսո՛ւմ եմ... Այո՛... Տնային կառավարչության նախագահը... Մենք չէ՞ որ գործել ենք կանոնների համաձայն... Պրոֆեսորն առանց այն էլ բացառիկ պայմաններում է... Մենք տեղյակ ենք նրա աշխատանքներին... Ուղիղ հինգ սենյակ էինք ուզում թողնել նրան... Դե, լավ... եթե այդպես է... Լա՛վ...

Ամբողջովին կարմրած՝ նա կախեց խոսափողը ու շրջվեց:

«Ո՞նց թքեց վրեն: Ա՛յ տղեն,- հիացմունքով մտածեց շունը: -Նա, ինչ է, կախարդական բա՞ռ գիտի, թե ոնց: Դե, հիմա ինչքան ուզում եք ծեծեք, էստեղից ոչ մի տեղ չեմ գնա»:

Երեքը, բերանները բաց, նայում էին թքոտված Շվոնդերին:

- Սա ինչ որ... խայտառակությո՛ւն է,- անհամարձակ ասաց նա:

- Եթե հիմա բանավեճ լիներ,- սկսեց կինը՝ հուզված ու վարդագունելով,- ես կապացուցեի Պյոտր Ալեքսանդրովիչին...

-Ներեցեք, դուք հենց այս պահի՞ց եք ցանկանում

բացել այդ բանավեճը,- քաղաքավարի հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Կնոջ աչքերը բոցկլտացին:

- Ես հասկանում եմ ձեր հեգնանքը, պրոֆեսո՛ր, մենք հիմա կգնանք... Միայն թե, որպես շենքի մշակութաբաժնի վարիչ...

- Վարիչուհի,- ճշտեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Ցանկանում եմ առաջարկել ձեզ,- կինը թևատակից մի քանի վառվռուն ու ձյունից խոնավացած ամսագիր դուրս քաշեց,- մի քանի ամսագիր գնել ի օգնություն Գերմանիայի երեխաների: Հատը՝ հիսուն կոպեկ:

- Ո՛չ, չե՛մ վերցնի,- կտրուկ պատասխանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ ծուռ նայելով ամսագրերին:

Կատարյալ ապշահարություն արտահայտվեց դեմքերին, իսկ կինը պատվեց լոռամրգու շերտով:

- Իսկ ինչո՞ւ եք հրաժարվում:

- Չեմ ուզում:

- Դուք չե՞ք կարեկցում Գերմանիայի երեխաներին:

- Կարեկցում եմ:

- Հիսուն կոպե՞կն եք խնայում:

- Ոչ:

- Ուրեմն ինչո՞ւ:

- Չեմ ուզում;

Լռեցին:

- Գիտեք ինչ, պրոֆեսո՛ր,- ծանր հոգոց հանեց

աղջիկը,- եթե դուք եվրոպական լուսատու չլինեիք և եթե ամենավրդովեցուցիչ կերպով (շիկահերը քաշեց բաճկոնի փեշը, բայց նա թափ տվեց ձեռքը) ձեզ համար միջամտած չլինեին անձինք, որոնց ինքնությունը դեռ, համոզված եմ, կպարզենք, ձեզ պետք էր բանտարկել:

- Ինչի՞ համար,- հետաքրքրությամբ հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Դուք ատում եք պրոլետարիատին,- հպարտ ասաց կինը:

- Այո՛, ես պրոլետարիատ չեմ սիրում,- տխրությամբ համաձայնեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը ու սեղմեց կոճակը: Ինչ-որ տեղ հնչեց զանգը: Բացվեց միջանցք տանող դուռը:

- Զի՛նա,- կանչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ճաշը մատուցիր: Թույլ կտա՞ք, պարոնա՛յք:

Քառյակը լուռումունջ դուրս եկավ աշխատասենյակից, լուռ հատեց ընդունարանը, լռությամբ՝ նախասրահը, ու լսվեց ինչպես նրանց հետևից ծանր ու զնգուն փակվեց շքադուռը:

Շունը նստեց հետևի թաթերին ու նամազի խոնարհում արեց Ֆիլիպ Ֆիլիպովիչի առաջ:

III

Սև, լայն եզրաշերտով, դրախտածաղիկներով պատկերազարդված ափսեներում բարակ շերտերով կտրատած սաղմոն էր, թթու դրած օձաձուկ: Ծանր տախտակի վրա՝ հյութակաթիլով պանիր, իսկ եղյամով պատած արծաթե տակառիկում՝ ձկնկիթը: Ափսեների արանքում մի քանի նրբագեղ ըմպանակ էր դրված ու երեք բյուրեղապակյա գրաֆին՝ տարագույն օղիներով: Այդ ամենը տեղավորվել էր փոքրիկ, մարմարե սեղանին, որ ճաշակով կցված էր հսկայական դրվագազարդ կաղնեփայտե բուֆետին, որից ապակու և արծաթի լուսափնջեր էին հորդում: Սենյակի կենտրոնում տապանաքարի պես ծանր սեղանն էր՝ ճերմակ սփռոցով, վրան՝ երկու սպասք, պապական խույրի տեսքով փաթաթված անձեռոցիկներ ու երեք մուգ շիշ:

Զինան ներս բերեց կափարիչով փակված մի մեծ պնակ: Պնակից այնպես էր բուրում, որ շան բերանն անմիջապես առատ թուք լցվեց: «Շամիրամի այգիները»՝ մտածեց նա ու պոչով, ասես մահակով, թխկթխկացրեց հատակին:

- Տվե՛ք, տվե՛ք,- գիշատիչ հրամայեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Դոկտոր Բորմենտա՛լ, աղաչում եմ, հանգիստ թողեք ձկնկիթը: Եվ եթե բարի խորհուրդ կուզեք՝ ոչ թե անգլիական, այլ սովորական ռուսական օղի լցրեք:

Խածված սիրունատեսը,- նա արդեն առանց խալաթի էր, վայելուչ սև կոստյումով,- թոթվեց լայն ուսերը, քաղաքավարի քմծիծաղեց ու լցրեց թափանցիկ հեղուկը:

- Նորընծաների՞ց է,- հետաքրքրվեց նա:

- Աստվա՛ծ սիրեք, աղավնյա՛կս,- արձագանքեց տերը:- Սպի՛րտ է: Դարյա Պետրովնան ինքը հրաշալի օղի է պատրաստում:

- Մի՛ ասեք, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, բոլորը պնդում են, որ կարգին օղի է՝ 30 աստիճան:

- Իսկ օղին պիտի 40 աստիճանի լինի, ոչ թե 30. սա՝ առաջին,- ուսուցողաբար կտրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- և երկրորդ. Աստված գիտի՝ ինչ են լցնում մեջը: Կարո՞ղ եք ասել՝ ինչ կանցնի նրանց մտքով:

- Ինչ ասե՛ս,- վստահ հայտարարեց խածվածը:

- Ես էլ եմ նույն կարծիքին,- հավելեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը ու մի ումպով կոկորդը նետեց բաժակի պարունակությունը:- Ը՛մմ... դոկտոր Բորմենտա՛լ, աղաչո՛ւմ եմ, արագ-արագ, այ սա՛, և եթե ասեք, որ սա... ձեր ոխերիմ թշնամին եմ ողջ կյանքում... Սևիլիայից մինչ Գրենադա...

Եվ թաթիկաձև արծաթե պատառաքաղով փոքրիկ, սև հացի կտոր հիշեցնող մի բան ճանկեց:

- Վա՞տն է,- ծամելով՝ հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Վա՞տն է: Պատասխանեք, հարգարժան դոկտոր:

- Անսմա՛ն է,- անկեղծորեն ասաց խածվածը:

- Իհարկե... Նկատի առեք, Իվա՛ն Առնոլդովիչ,

սառը խորտիկներն ու ապուրը որպես նախուտեստ օգտագործում են միայն բոլշևիկներից մազապուրծ եղած կալվածատերերը: Իրեն փոքրիշատե հարգող մարդը դիմում է տաք ուտեստներին: Իսկ մոսկովյան տաք ուտեստեղենից սա առաջինն է: Ժամանակին հրաշալի էին պատրաստում «Սլավյանսկի բազարում»: Առ, վերցրո՛ւ:

- Շանը ճաշասենյակում եք կերակրում,- հնչեց մի կանացի ձայն,- հետո նրան այստեղից ոչ մի կերպ դուրս չես անի:

- Ոչի՞նչ: Խեղճը սովածացել է,- Ֆիլիպ Ֆիլիպովիչը պատառաքաղի ծայրին շանը պարզեց ուտելիքը, որը վերջինս ընդունեց աճպարարի ճարպկությամբ:

Ափսեներից խեցգետին բուրող գոլորշի էր բարձրանում: Շունը նստել էր սփռոցի ստվերում, ինչպես ժամապահը վառոդի տակառի կողքին: Իսկ Ֆիլիպ Ֆիլիպովիչը պիրկ անձեռոցիկի ծայրը խցկելով օձիքի տակ՝ քարոզում էր.

- Ուտելը, Իվա՛ն Առնոլդովիչ, լուրջ գործ է: Ուտել պետք է կարողանաս, իսկ մարդկանց մեծ մասը, պատկերացրեք, ընդհանրապես ուտել չգիտի: Հարկավոր է ոչ միայն իմանալ՝ ինչ ուտել, այլև՝ երբ և ինչպես: (Ֆիլիպ Ֆիլիպովիչը բազմանշանակ թափահարեց գդալը): Ու նաև՝ ինչ խոսել ուտելիս: Այո՜: եթե հոգում եք ձեր մարսողության համար՝ ահավասիկ իմ բարի խորհուրդը, ճաշելիս մի խոսեք բոլշևիզմից ու բժշկությունից: Եվ, Աստվա՜ծ մի արասցե, նախքան ճաշը սովետական թերթեր մի կարդացեք:

- Հը՜մ... Բայց ուրիշ թերթ չկա:

- Ուրեմն ոչինչ էլ մի կարդացեք: Գիտե՞ք, ես 30 դիտարկում եմ արել այստեղ՝ կլինիկայում: Եվ ի՞նչ եք կարծում: Թերթ չկարդացող հիվանդները հրաշալի են զգում իրենց: Իսկ նրանք, ում հատուկ ստիպում էի «Պրավդա» կարդալ, քաշ էին գցում:

- Հը՜մ...,- հետաքրքրությամբ արձագանքեց խածվածը՝ վարդագունելով ապուրից ու գինուց:

- Ավելի՜ն: Ծնկային ռեֆլեքսների թուլացում, վատ ախորժակ, ճնշված հոգեվիճակ:

- Ա՜յ քեզ բան...

- Այո՜: Բայց այս ի՞նչ եմ անում, հենց ինքս էլ սկսեցի խոսել բժշկությունից:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը հետ ընկնելով՝ զանգը տվեց, ու բալագույն վարագույրի ետևից հայտնվեց Զինան: Շանը բաժին հասավ թառափաձկան մի գունատ ու հաստ կտոր, որը նրան դուր չեկավ, և անմիջապես՝ արյունոտ ռոստբիֆի մի պատառ: Խժռելով՝ շունը հանկարծ հասկացավ, որ ուզում է քնել և այլևս որևէ ուտելիքի երեսը տեսնել չի ցանկանում: «Տարօրինակ զգացում է,- մտածեց նա՝ բացուխուի անելով ծանրացած կոպերը,- ուտելիքն աչքիս գրողն է: Իսկ ճաշից հետո ծխելը հիմարություն է»:

Ճաշասենյակը լցվում էր տհաճ կապույտ ծխով: Շունը ննջում էր՝ գլուխը թաթերին:

- Սեն ժյուլյենը կարգին գինի է,- նիրհի միջից լսեց նա,- բայց հիմա որտեղի՞ց գտնես:

Խուլ, առաստաղներով ու գորգերով մեղմված խմբերգ լսվեց վերևից ու կողքից:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը զանգը տվեց, ու հայտնվեց Զինան:

- Զինո՛ւշա, սա ի՞նչ է:

- Նորից ընդհանուր ժողով են հավաքել, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- պատասխանեց Զինան:

- Նորի՛ց,- դառնացած գոչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը: - Դե, հիմա արդեն գնաց-կորա՛վ Կալաբուխովյան տունը: Ստիպված պիտի մեկնենք, բայց հարց է ծագում՝ ո՞ւր: Ամեն ինչ հալած յուղի պես կգնա: Սկզբում ամեն երեկո կերգեն, հետո արտաքնոցում կսառչեն խողովակները, հետո կաթսայատանը կպայթի կաթսան, և այսպես շարունակ: Վե՛րջ Կալաբուխովին:

- Չարչարվում-մաշվում է Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ժպտալով նկատեց Զինան ու դուրս տարավ ափսեների կույտը:

- Ախր ո՞նց չմաշվես,- բղավեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը: - Ախր հասկացե՛ք, թե ի՞նչ տուն էր:

- Դուք չափազանց մռայլ եք նայում երևույթներին, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- առարկեց խածված սիրունատեսը,- նրանք հիմա կտրականապես փոխվել են:

- Աղավնյա՛կս, դուք ինձ ճանաչում եք: Ճի՞շտ է: Ես փաստերի՛ մարդ եմ, դիտարկմա՛ն մարդ: Ես թշնամին եմ չհիմնավորված հիպոթեզների: Եվ դա հրաշալի գիտեն ոչ միայն Ռուսաստանում, այլև Եվրոպայում: Եթե ես որևէ բան եմ ասում, ուրեմն հիմքում

ընկած է այնպիսի մի փաստ, որից հետևություններ եմ անում: Ահա և փաստը՝ մեր տան կախիչներն ու կրկնակոշիկների կանգնակը:

– Հետաքրքիր է...

«Կրկնակոշիկները անհեթեթություն են: Կրկնակոշիկների մեջ չի երջանկությունը,– մտածեց շունը,– բայց արտակա՜րգ անձնավորություն է»:

– Ահավասիկ կրկնակոշիկների կանգնակը: 1903 թվականից ես այս տանն եմ ապրում: Եվ ահա, այդ ընթացքում, մինչև 1917-ի մարտը, չի եղել դեպք, ընդգծում եմ կարմիր մատիտով, ոչ մի դեպք, որ մեր ներքևի նախասրահից, շքամուտքի դուռը երբեք չկողպելով հանդերձ, թեկուզև մի զույգ կրկնակոշիկ կորչեր: Նկատի՛ առեք, այստեղ 12 բնակարան կա, ու ես էլ ընդունելություն եմ անում: 1917-ի մարտին, մի գեղեցիկ օր, բոլոր կրկնակոշիկներն անհետացան, այդ թվում և իմ երկու զույգը, նաև՝ երեք ձեռնափայտ ու բարապանի վերարկուն և ինքնաեռը: Այդ օրվանից կրկնակոշիկների կանգնակը դադարեցրեց գոյությունը: Աղավնյա՜կս: Ես չեմ խոսում արդեն ջեռուցման մասին: Չե՛մ խոսում: Թող որ այդպե՛ս, եթե սոցիալական հեղափոխություն է հայտարարված, ուրեմն պետք չէ ջեռուցել: Բայց հարց եմ տալիս՝ ինչո՞ւ, երբ սկսվեց այս ամբողջ պատմությունը, բոլորը սկսեցին կեղտոտ կրկնակոշիկներով ու թաղիքե կաճյակներով քայլել մարմարե սանդուղքներով: Ինչո՞ւ կրկնակոշիկներն առայսօր անպայման պիտի փակի տակ

պահենք: Ու կողքն էլ դեռ ժամապահ կանգնեցնենք, որ մեկնումեկը հանկարծ չգողանա: Ինչո՞ւ հանեցին գորգը շքամուտքի սանդուղքից: Կառլ Մարքսն, ի՞նչ է, արգելո՞ւմ է սանդուղքներին գորգ փռել: Կառլ Մարքսը երբևէ գրե՞լ է, որ Պրեչիստենկայի Կալաբուխովյան տան 2-րդ մուտքը պիտի քառմխվի տախտակներով ու պիտի շրջանցելով, հետնամուտքով մտնեն ներս: Ո՞ւմ է դա պետք: Ինչո՞ւ պրոլետարը չի կարող իր կրկնակոշիկները թողնել ներքևում ու կեղտոտում է մարմարը:

- Դե նա, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, ընդհանրապես անկրկնակոշիկ է,- փորձեց առարկել խածվածը:

- Ոչ մի դեպքո՛ւմ,- ամպրոպաձայն առարկեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը ու մի բաժակ գինի լցրեց: - Հը՛մ... Ես չեմ ընդունում լիկյորը ճաշից հետո, ծանրացնում է և ազդում լյարդի վրա... Ոչ մի դեպքո՛ւմ: Նա հիմա ունի կրկնակոշիկներ, և այդ կրկնակոշիկներն իմն են: Դրանք հենց այն կրկնակոշիկներն են, որ անհետացան 1917 թվին: Հարց է ծագում՝ ո՞վ էր գողացել: Ե՞ս: Չի կարող պատահել: Բուրժույ Սա՞բլինը: (Ֆիլիպ Ֆիլիպովիչը մատը տնկեց դեպի առաստաղը): Նույնիսկ ենթադրելը ծիծաղելի է: Շաքարի գործարանատեր Պոլո՞զովը (Ֆիլիպ Ֆիլիպովիչը մատնացույց արեց դեպի կողք): Ոչ մի դեպքում: Դա հենց այս գեղգեղացողներն են արել: Այո՛: Բայց գոնե սանդուղքի վրա հանեի՛ն կրկնակոշիկները: (Ֆիլիպ Ֆիլիպովիչը սկսեց կարմրել): Ի՞նչ գրողի համար են հավաքել ծա-

ղիկները սանդղահարթակներից: Ինչո՞ւ էլեկտրականությունը, որ, Աստված հիշողություն տա, 20 տարում ընդամենը երկու անգամ էր անջատվել, այսօր պարտաճանաչ կերպով ամիսը մեկ անջատվում է: Դոկտոր Բորմենտա՛լ, վիճակագրությունը սարսափելի բան է: Ձեզ, որ ծանոթ եք իմ վերջին աշխատանքին, դա շատ ավելի լավ է հայտնի, քան մեկ ուրիշին:

- Փլուզո՞ւմը, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ:

- Ո՛չ,- կատարելապես վստահ ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ո՛չ: Հենց դուք առաջինը, թանկագին Իվա՜ն Առնոլդովիչ, ձեռնպահ մնացեք այդ բառն օգտագործելուց: Դա միրաժ է, ծուխ, ֆիկցիա: - Ֆիլիպ Ֆիլիպովիչը չռեց կարճ մատները, ինչից կրիաների նման երկու ստվեր իրար անցան սփռոցի վրա: - Ի՞նչ է ձեր այդ փլուզումը: Չալիկով պառա՞վ է: Վհո՞ւկ է, որ ջարդեց բոլոր ապակիներն ու մարեց բոլոր լամպերը: Ախր այն ընդհանրապես գոյություն չունի: Ի՞նչ նկատի ունեք՝ այդ բառն օգտագործելով,- մոլեգնած հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը խեղճ ստվարաթղթե բադիկին, որ գլխիվար կախված էր բուֆետի կողքին, ու հենց ինքն էլ պատասխանեց: - Ահա թե ինչ է. եթե ես ամեն երեկո վիրահատելու փոխարեն սկսեմ խմբերգել իմ բնակարանում, վրա կհասնի փլուզումը: Եթե մտնելով զուգարան, ներեցեք արտահայտությանս, միզեմ կոնքի կողքին, և նույնն էլ անեն Զինան ու Դարյա Պետրովնան, արտաքնոցում կսկսվի փլուզումը: Հետևաբար փլուզումը ոչ թե զուգարան-

ներում, այլ գլուխների մեջ է: Նշանակում է, երբ այս բարիտոնները գոռում են «Խփի՛ր փլուզմանը», իմ ծիծա՞ղն է գալիս (Ֆիլիպ Ֆիլիպովիչի դեմքն այնպես ծամածռվեց, որ խածվածի բերանը բաց մնաց): Երդվում եմ, ծիծաղելի է ինձ համար: Դա նշանակում է, որ նրանցից յուրաքանչյուրը պիտի շխկացնի իր ծոծրակին: Եվ ահա, երբ գլուխներից թափ տան բոլոր պատրանքներն ու զբաղվեն մարագները մաքրելով՝ փլուզումն ինքն իրեն կչքանա: Երկու Աստծո ծառայել չի կարելի: Անհնար է միաժամանակ ավլել տրամվայի գծերն ու զբաղվել ինչ-որ իսպանական քրջոտների ճակատագրով: Դա ոչ մեկին չի հաջողվի, դոկտո՛ր, առավել ևս մարդկանց, որ զարգացմամբ եվրոպացիներից 200 տարով հետ ընկնելով, մինչ օրս այնքան էլ վստահ չեն կոճկում սեփական շալվարները:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ոգևորվեց: Բազեի ռունգերը դողացին: Կուշտ ճաշից ուժի եկած՝ նա որոտում էր հնավանդ մարգարեի պես, և գլխին շողշողում էր արծաթագույնը:

Ննջող շանը նրա բառերը հասնում էին ներքնահարկից եկող գվվոցի պես: Մե՛կ հիմար դեղին աչքերով բուն էր հայտնվում քնեած զառանցանքում, մե՛կ սպիտակ, կեղտակուր թասակով խոհարարի գարշելի մռութը, մե՛կ էլ Ֆիլիպ Ֆիլիպովիչի կտրիճավարի սրած բեղը՝ լուսավորված էլեկտրական ծակող լույսով, մե՛կ էլ նիրհի մեջ սահնակն էր ճռնչում և անհետանում, իսկ շան ստամոքսում, ստամոքսահյութի մեջ լողալով, եփվում էր ռոստբիֆի բզկտված կտորը:

«Ուղղակի հանրահավաքներում կարող էր փող աշխատել,- աղոտ երազում էր շունը,- առաջնակարգ գործ կպցնող է: Ասենք՝ առանց էն էլ նրա փողերին թիվ ու համար չկա»:

- Ոստիկա՞ն,- բղավում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Ոստիկան է պետք:- «Ուհո՜ւ-հո՜ւ-հո՜ւ»,- ինչ-որ պղպջակներ էին պայթում շան ուղեղում:- Ոստիկա՞ն: Միայն ու միա՛յն: Եվ բացարձակ կարևոր չէ՝ ճարմանդով կլինի, թե կարմիր կեպիով: Ոստիկան է պետք կարգել ամեն մեկի կողքին ու ստիպել, որ չափավորի մեր քաղաքացիների վոկալ պոռթկումները: Ասում եք՝ փլուզում: Ես ձեզ կասեմ, դոկտո՛ր, որ մեր տանը, ասենք՝ նաև ցանկացած այլ տան մեջ, ոչինչ դեպի լավը չի դառնա, մինչև չզսպեն այդ երգիչներին: Հենց որ նրանք վերջ տան իրենց համերգներին, վիճակն ինքնին կգնա դեպի լավը:

- Հակահեղափոխական բաներ եք ասում, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- կատակով նկատեց խածվածը:- Աստված չանի՝ մեկնումեկը լսի:

- Ոչ մի վտանգավոր բա՛ն,- տաքացած առարկեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Ոչ մի հակահեղափոխությո՛ւն: Ի դեպ, ահա ևս մի բառ, որ կատարելապես տանել չեմ կարողանում: Բացարձակապես հասկանալի չէ՝ ինչ է դրա ետևում թաքնված: Սատանա՞ն գիտի: Ուրեմն, ես հենց դա էլ ասում եմ. իմ խոսքում ոչ մի հակահեղափոխություն էլ չկա: Միայն առողջ բանականություն ու կենսափորձ:

Այստեղ Ֆիլիպ Ֆիլիպովիչը օձիքի տակից դուրս քաշեց փայլուն անձեռոցիկի տուտը ու ճմռթելով գցեց չխմած գինու բաժակի կողքին: Խածվածն արագ վեր կացավ ու շնորհակալություն հայտնեց. «Մերսի՛»:

- Մի րոպե, դոկտո՛ր,- գրպանից դրամապանակը հանելով՝ կանչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, հետո աչքը կկոցելով՝ համրեց ճերմակ թղթի կտորները ու մեկնեց խածվածին:- Այսօր դուք 40 ռուբլի ստանալիք ունեք: Խնդրեմ:

Շնից տուժածը քաղաքավարի շնորհակալություն հայտնեց ու կարմրելով փողը դրեց պիջակի գրպանը:

- Այսօր երեկոյան ձեզ պետք չե՞մ, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- հարցրեց նա:

- Ո՛չ, շնորհակալ եմ, աղավնյա՛կս: Ոչինչ չենք անելու: Նախ՝ ճագարը սատկել է, և երկրորդ՝ այսօր Մեծ թատրոնում «Աիդան» է: Իսկ ես վաղուց չեմ լսել: Սիրո՛ւմ եմ: Հիշո՞ւմ եք: Զուգերգը... Տարի՜-ռա՜-ռա՜մ:

- Ինչպե՞ս եք ամեն ինչ հասցնում, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- հարգալից հարցրեց բժիշկը:

- Ամեն տեղ հասնում է նա, ով ոչ մի տեղ չի շտապում,- ուսուցողաբար բացատրեց տերը:- Իհարկե, եթե սկսեի վեր-վեր թռչել այդ նիստերին ու սոխակի պես երգել ամբողջ օրը, իմ անմիջական գործը թողած, ոչինչ էլ չէի հասցնի,- Ֆիլիպ Ֆիլիպովիչի մատների տակ, գրպանում, երկնային ձայնով նվագեց ռեպետիրը[10],- ինն է դառնում... Երկրորդ գործողությանը կհասնեմ... Ես աշխատանքի բաժանման կողմ-

10 Ռեպետիր - ժամացույցի զարկասարք:

նակից եմ: Մեծ թատրոնում թող երգեն, իսկ ես կվիրահատեմ: Եվ հրաշալի է: Եվ ոչ մի փլուզում... Ահա թե ինչ, Իվա՛ն Առնոլդովիչ, դուք համենայնդեպս ուշադիր եղեք, հենց որ հարմար մահ լինի, հենց վիրասեղանից սնուցող լուծույթի մեջ և՝ ինձ մոտ:

- Մի՛ անհանգստացեք, Ֆիլիպ Ֆիլիպովիչ, պաթոլոգանատոմներն ինձ խոստացել են:

- Հրաշալի է, իսկ մինչ այդ հետևենք այս փողոցային նյարդագարին: Թող կողը լավանա:

«Ինձ համար է հոգում,- մտածեց շունը,- շատ լավ մարդ է: Գիտեմ՝ ով է նա: Կախա՛րդ է, մոգ ու հրաշագործ՝ շնային հեքիաթից... Չէ՞ որ չի կարող երազ լինել այս ամենը: Իսկ եթե երա՞զ է: (Շունը ցնցվեց քնի մեջ): Այ կարթնանամ... ու ոչինչ չկա: Ո՛չ մետաքսապատ լամպերը, ո՛չ ջերմությունը, ո՛չ կշտությունը: Էլի կսկսվի դարպասատակը, խելագար սառնամանիքը, սառցակալած ասֆալտը, քաղցը, չար մարդիկ... ճաշարանը, ձյունը... Աստվա՛ծ իմ, ի՞նչ ծանր կլինի ինձ համար...»:

Բայց ոչինչ էլ չպատահեց: Հատկապես դարպասատակը հալվեց նողկալի երազի պես և այլևս չվերադարձավ:

Ըստ երևույթին, այնքան էլ սարսափելի չէ փլուզումը: Չնայած դրան, պատուհանագոգերի տակ գորշ հարմոնիկներն օրը երկու անգամ լցվում էին տապով, ու տաքությունն ալիք-ալիք տարածվում էր սենյակում:

Միանգամայն ակնհայտ էր. շունը քաշել էր ամենագլխավոր շնային վիճակատոմսը: Նրա աչքերը հիմա օրական երկու անգամից ոչ պակաս լցվում էին երախտապարտ արցունքներով առ Պրեչիստենկայի այդ իմաստունը: Բացի այդ, հյուրասենյակի բոլոր պահարանիկներն ու պահարանները անդրադարձնում էին հաջողակ ու սիրունատես շան պատկերը:

«Ես գեղեցիկ եմ: Գուցե անհայտ շուն արքայազն՝ ինկոգնիտո,- խորհում էր շունը՝ նայելով հայելային հեռուներում շրջող փռչոտ, սրճագույն, գոհունակ մռութով շանը: - Շատ հնարավոր է տատիկս մեղքի մեջ է ընկել ջրասուզակի հետ: Դրանից չի՞ մռութիս սպիտակ բիծը: Հարց է ծագում՝ որտեղի՞ց: Ֆիլիպ Ֆիլիպովիչը մեծ ճաշակի տեր մարդ է, առաջին պատահած անտոհմ շանը տուն չէր բերի»:

Մեկ շաբաթում շունը խժռեց ճիշտ այնքան, որքան կերել էր փողոցային վերջին մեկուկես քաղցած ամիսների ընթացքում: Համեմատությունն, իհարկե, ըստ քաշի էր: Ֆիլիպ Ֆիլիպովիչի տված կերը որակի առումով քննարկման ենթակա չէր: Եթե նույնիսկ նկատի չառնենք, որ Դարյա Պետրովնան ամեն օր 18 կոպեկով մի ամբողջ կույտ մսի կտորտանք էր գնում Սմոլենսկի շուկայից, բավական էր միայն հիշել ճաշերը երեկոյան 7-ին, ճաշասենյակում, որոնց շունը ներկա էր լինում, չնայած նրբավար Զինայի բողոքներին: Այդ ճաշերի ընթացքում Ֆիլիպ Ֆիլիպովիչը վերջնականապես Աստվածության կոչում ստացավ:

Շունը կանգնում էր հետևի թաթերին ու կծմծում նրա պիջակը, շունն ուսումնասիրել էր Ֆիլիպ Ֆիլիպովիչի զանգը՝ երկու լիահունչ, կտրուկ տիրական հարված, ու հաչալով թռչում էր նախասենյակ՝ դիմավորելու: Տերը ներս էր գալիս՝ սև աղվեսենու մուշտակով, շողացնելով միլիոնավոր ձնափայլքերը, մանդարին, սիգար, օծանելիք, կիտրոն, բենզին, օդեկոլոն, մահուդ էր բուրում, և ձայնը զորապետի շեփորի պես դղրդում էր բնակարանով մեկ:

– Ինչո՞ւ ես, խոզի՛ մեկը, պատառոտել բվին: Քեզ խանգարո՞ւմ էր: Խանգարո՞ւմ էր, հարցնում եմ: Պրոֆեսոր Մեչնիկովի՞ն ինչու ես ջարդել:

– Նրան, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, պետք է գոնե մի անգամ հասցնել մտրակով,– զայրացած ասում էր Զինան,– թե չէ լրիվ ձեռից կգնա: Տեսեք՝ ինչ օրն է գցել ձեր կրկնակոշիկները:

– Ոչ մի դեպքում ծեծել չի կարելի,– հուզվում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը,– մեկընդմի՛շտ հիշիր: Մարդու և կենդանու վրա միայն խրատով կարելի է ազդել: Այսօր միս տվե՞լ եք:

– Աստվա՛ծ իմ, ամբողջ տունը խժռեց: Ի՞նչ եք հարցնում, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ: Ապշում եմ՝ ոնց չի պայթում:

– Դե, թող ուտի ինչքան սիրտն ուզում է... Բուն քեզ ինչո՞վ էր խանգարում, խուլիգա՛ն:

– Ո՛ւ-ո՛ւ,– վնգում էր շողոքորթ շունը ու թաթերն առաջ՝ սողում փորի վրա:

Հետո նրան, վզից բռնած, աղմուկ-աղաղակով ընդունարանով քարշ էին տալիս աշխատասենյակ: Շունը գալարվում էր, փորձում էր կծել, կառչում էր գորգից, սոթ տալիս հետույքի վրա, ինչպես կրկեսում: Աշխատասենյակի կենտրոնում, գորգի վրա ընկած էր ապակեաչք բուն՝ պատռված փորով, որից դուրս էին պրծել ինչ-որ կարմիր լաթի կտորներ, դրանցից նաֆթալինի հոտ էր գալիս: Սեղանին ջարդուփշուր դիմանկարն էր:

- Դիտմամբ չեմ հավաքել, որ տեսնեիք,- նեղսրտած զեկուցում էր Զինան,- ախր սեղանին թռավ սրիկան ու սրա պոչից՝ հա՛մփ: Չհասցրի աչք թարթել լրիվ ծվեն-ծվեն արեց: Մռութը բվի մեջ խրեք, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, որ հասկանա՝ ինչ է նշանակում իրերը փչացնել:

Ու սկսվում էր ոռնոցը: Գորգին փակչած շանը քարշ էին տալիս բվի մոտ, իսկ նա այդ ընթացքում դառն արցունք էր թափում ու մտածում. «ծեծեք ինչքան ուզում եք, մենակ տնից դուրս չանեք»:

- Բուն այսօր իսկ ուղարկել խրտվիլակագործին: Բացի այդ, ահա քեզ 8 ռուբլի և 16 կոպեկ, գնա Մյուրի մոտ, սրա համար մի լավ վզափոկ գնիր՝ շղթայով:

Հաջորդ օրը շան վզին մի լայն, փայլուն փոկ կապեցին: Առաջին պահին, նայելով հայելու մեջ, նա շատ տրտմեց, պոչը քաշեց ոտների արանքն ու գնաց լողասենյակ՝ մտմտալով, թե ինչպես պոկիխցկի սնդուկը կամ արկղի մեջ: Բայց շուտով հաս-

կացավ, որ ինքը հիմար է: Զինան, շղթայից բռնած, նրան զբոսնելու տարավ Օբուխովի նրբանցքով: Շունը քայլում էր կալանավորի պես, ամոթից վառվելով, սակայն Պրեչիստենկայով հասնելով Քրիստոսի տաճարը, գերազանց պատկերացրեց, թե կյանքում որքան կարևոր է վզափոկը: Մոլեգին նախանձ էր կարդացվում բոլոր հանդիպող շների աչքերում, իսկ Մեռյալ նրբանցքի մոտ կտրած պոչով մի լողլող նրան «Աղայական սրիկա» ու «վեցնոց» հայհոյահաչեց: Երբ հատում էին տրամվայի գծերը, միլիցիոները հաճույքով ու հարգալից նայեց վզափոկին, իսկ երբ վերադարձան, կատարվեց ամենաչտեսնվածը. բարապան Ֆյոդորն անձամբ բացեց շքադուռը և ներս թողեց Շարիկին՝ Զինային ասելով.

- Տե՜ս, է՜, ինչ փռչոտի տեր դառավ Ֆիլիպ Ֆիլիպովիչը, ինչ էլ չա՜ղն է:

- Էլի՞ չաղ չլինի՝ վեց հոգու տեղ ուտում է,- բացատրեց սառնամանիքից վարդագունած Զինան:

«Վզափոկը պորտֆելի պես բան է»,- մտքում սրախոսեց շունը ու պոչը ճոճելով, աղայակերպ բարձրացավ երկրորդ հարկ:

Վզափոկն ըստ արժանվույն գնահատելով՝ շունն առաջին այցելությունն արեց դրախտի այն գլխավոր բաժանմունքը, որտեղ նրա մուտքն առ այդ կտրականապես արգելված էր՝ խոհարարուհի Դարյա Պետրովնայի թագավորությունը: Ամբողջ բնակարանը Դարյայի թագավորության երկու թզաչափը չարժեր:

Ամեն Աստծու օր սև ու վերևից հախճասալիկներով երեսպատած վառարանում ճարճատում ու մոլեգնում էր կրակը: Շոգեջեռոցը ճթճթում էր: Շառագույն սյուների միջև հավերժական հրե տառապանքով և անհագ կրքով վառվում էր Դարյա Պետրովնայի դեմքը, որ տապից փայլում ու քրտինք էր թորում: Ականջների վրա իջնող նորաձև սանրվածքի մեջ և ծոծրակին հավաքած բացգույն մազերի զամբյուղիկում կայծկլտում էին 22 կեղծ ադամանդ: Պատերին կեռիկներից կախված էին ոսկյա թասեր, խոհանոցը պայթում էր բույրերից, խուփ կաթսաները քլթքլթում ու ֆշշում էին:

- Կորի՛,- ճչաց Դարյա Պետրովնան:- Կորի՛ էստեղից, անապաստա՜ն գրպանահատ: Մենակ դո՜ւ էիր պակաս: Հիմա կհասցնեմ խաչերկաթով...

«Ի՞նչ է պատահել, ինչի՞ ես էդպես հաչում,- գորովանքով աչքերն էր կկոցում շունը:- Ես ի՜նչ գրպանահատ: Ի՞նչ է, վզափոկը չե՞ք տեսնում»,- ու կողքանց խցկվելով դեպի դուռը՝ ներս խոթեց դունչը:

Շարիկ շունը մարդկանց սրտերը նվաճելու ինչ-որ գաղտնիք գիտեր: Երկու օր անց նա արդեն պառկած էր քարածխի զամբյուղի կողքին ու հետևում էր՝ ինչպես է աշխատում Դարյա Պետրովնան: Սուր, նեղշեղը դանակով նա հատում էր խեղճ աքարների գլխիկներն ու տոտիկները, հետո, կատաղի դահճի պես, ոսկորներից քերթում փափկամիսը, թափում հավերի փորոտիքը, ինչ-որ բան պտտում մսաղացի

մեջ: Շարիկն այդ ընթացքում բզկտում էր աքարի գլուխը: Կաթի թասից Դարյա Պետրովնան բուլկու կակղած կտորներ էր հանում, տախտակի վրա խառնում մսաշիլայի հետ, այդ ամենի վրա սերուցք լցնում, աղ անում ու հենց տախտակի վրա կոտլետներ թխում: Վառարանի ներսում հրդեհն էր գվվում, իսկ թավայի մեջ մռթմռթում էր ինչ-որ բան, պղպջակներ թողնում ու ցատկռտում: Վառարանի դռնակը դեն էր թռչում դղրդոցով, ու հայտնվում էր զարհուրելի դժոխքը, որի մեջ խլթխլթում ու փողփողում էր կրակը:

Երեկոյան քարե երախը մարեց, խոհանոցի պատուհանի մեջ, ճերմակ կիսավարագույրից անդին, Պրեչիստենկայի թանձր ու թաց գիշերն էր՝ միայնակ աստղով: Խոհանոցի հատակը խոնավ էր, կաթսաները պսպղում էին աղոտ ու խորհրդավոր, սեղանին հրշեջի շքագլխարկ էր դրված: Շարիկը պառկել էր տաք վառարանին, ինչպես առյուծը՝ դարպասների առջև, ու հետաքրքրությունից քշտելով ականջը՝ նայում էր, թե ինչպես է լայն կաշեգոտի կապած, սևաբեղ ու հուզված մարդը Զինայի և Դարյա Պետրովնայի սենյակի կիսաբաց դռան ետևը գրկում Դարյա Պետրովնային: Սրա ամբողջ դեմքը, բացի դիմափոշուց մեռելագույն առած քթից, վառվում էր տառապանքով ու կրքով: Լույսի շեղբը թառել էր սևաբեղի պատկերի վրա, ու նրանից կախ էր ընկել զատկվա վարդը:

– Կպել ես դևի պես,– կիսամութում քրթմնջում էր

Դարյա Պետրովնան,- վե՛րջ տուր: Հիմա Զինան կգա: Ի՞նչ ես անում, ոնց որ քեզ ջահելացրած լինես:

- Դա մեր հեչ պետքն էլ չի,- իրեն դժվարությամբ տիրապետելով ու խռպոտ պատասխանում էր սևաբեղը: - Բայց ի՞նչ կրակն եք:

Երեկոները Պրեչիստենկայի աստղը թաքնվում էր ծանրածանր վարագույրների ետևում, և եթե Մեծ թատրոնում «Աիդան» չէր գնում ու Համառուսական վիրաբուժական ընկերությունը նիստ չէր ունենում, Աստվածությունը տեղավորվում էր աշխատասենյակի խոր բազկաթոռի մեջ: Առաստաղի տակ՝ ոչ մի լույս: Միայն կանաչ լամպն էր վառվում սեղանին: Շարիկը պառկում էր հատակին, ստվերում և ակնդետ հետևում այնտեղ կատարվող բոլոր սարսափելի գործերին: Ապակե անոթների զզվելի կծու ու պղտոր խյուսի մեջ մարդկային ուղեղ էր: Աստվածության ձեռքերը, մինչև արմունկները մերկ, շիկավուն ռետինե ձեռնոցների մեջ էին, ու սլքտան, բութ մատները քչփորում էին գալարները: Ժամանակ առ ժամանակ Աստվածությունը զինվում էր փոքրիկ, փայլուն նշտարով ու զգուշորեն հատում դեղին պիրկ ուղեղը:

- Դեպի ափե՛րը սրբազան Նեղոսի,- կամացուկ երգում էր Աստվածությունը՝ կծոտելով շրթունքներն ու մտաբերելով Մեծ թատրոնի ոսկյա հարդարանքը:

Խողովակներն այդ ժամին ջեռանում էին մինչև բարձրակետը: Դրանցից տարածվող շոգը բարձրանում էր դեպի առաստաղն ու սփռվում սենյակով

մեկ, շան մորթու մեջ արթնանում էր վերջին, անձամբ Ֆիլիպ Ֆիլիպովիչի կողմից դեռևս չհայտնաբերված, բայց արդեն դատապարտված լուն: Գորգերը խլացնում էին բնակարանի ձայները: Քիչ անց հեռվում զնգաց մուտքի դուռը:

«Չինական կինեմատոգրաֆ գնաց,- մտածեց շունը,- ու հենց վերադարձավ, ուրեմն, կնստենք ընթրիքի: Այսօր, պետք է ենթադրել, հորթի թակած միս է լինելու»:

Այդ սարսափելի օրը, դեռ առավոտյան, նախազգացումը ծակեց Շարիկի սիրտը: Դրանից էր, որ հանկարծ տխրեց և նախաճաշը՝ կես գավաթ վարսակ ու նախորդ օրվա ոչխարի ոսկորը, կերավ բացարձակ առանց ախորժակի: Տխուր-տրտում մտավ ընդունարան ու կամացուկ կլանչեց սեփական արտացոլման վրա: Բայց հետո, ցերեկը, երբ Չինան նրան այգում զբոսնելու տարավ, օրը գնաց իր հունով: Այդ օրն ընդունելություն չկար, որովհետև, ինչպես հայտնի է, երեքշաբթի ընդունելություն չէր լինում, իսկ Աստվածությունը նստում էր աշխատասենյակում՝ նախշուն նկարներով ինչ-որ ծանրանիստ գրքեր բացելով սեղանի վրա: Սպասում էին ճաշին: Շանը փոքր-ինչ աշխուժացրեց այն միտքը, որ երկրորդին, դրա մասին ստույգ տեղեկացել էր խոհանոցում, հնդկահավ են տալու: Միջանցքով անցնելիս

շունը լսեց ինչպես Ֆիլիպ Ֆիլիպովիչի աշխատասենյակում տհաճ ու անսպասելի հնչեց հեռախոսի զանգը: Ֆիլիպ Ֆիլիպովիչը վերցրեց խոսափողը, ականջ դրեց ու հանկարծ իրար անցավ:

- Հրաշալի՜ է,- լսվեց նրա ձայնը,- անմիջապես բերեք, անհապա՛ղ:

Նա աճապարանքով զանգը տվեց ու ներս եկած Զինային հրամայեց շտապ մատուցել ճաշը:

- Ճա՛շը: Ճա՛շը: Ճա՛շը:

Ճաշասենյակում անմիջապես զնգզնգացին ափսեները: Զինան իրար անցավ, խոհանոցից լսվեց Դարյա Պետրովնայի դժգոհ քրթմնջոցը, որ հնդկահավը դեռ պատրաստ չէ: Շունը կրկին զգաց, որ հուզվում է:

«Չեմ սիրում, որ բնակարանում իրարանցում է լինում»,- մտածում էր նա... Ու հենց մտածեց, իրարանցումն ավելի տհաճ բնույթ ստացավ: Նախևառաջ՝ խածված դոկտոր Բորմենտալի հայտնվելու պատճառով: Սա հետը մի գեշ հոտ արձակող ճամպրուկ էր բերել և առանց հանվելու, ճամպրուկով հանդերձ, միջանցքով սուրաց վիրակապարան: Ֆիլիպ Ֆիլիպովիչը ցած դրեց կիսով խմած սուրճի գավաթը, մի բան, որ երբեք չէր պատահում, և ընդառաջ վազեց դոկտոր Բորմենտալին, ինչը նույնպես երբևէ չէր պատահում:

- Ե՞րբ է մահացել,- գոչեց նա:

- Երեք ժամ առաջ,- պատասխանեց Բորմենտա-

լը՝ առանց ծյունապատ գդակը հանելու և բացելով ճամպրուկը:

«Այդ ո՞վ է մահացել,- մռայլ ու դժգոհ մտածեց շունն ու խցկվեց նրանց ոտքերի արանքը:- Տանել չեմ կարողանում իրարանցումը»:

- Կորի՛ ոտքի տակից: Շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ,- բղավեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը բոլոր կողմերի վրա և, ինչպես թվաց շանը, սկսեց զարկել բոլոր զանգերը: Վազեց եկավ Զինան:- Զի՛նա, Դարյա Պետրովնային հեռախոսի մո՛տ, թող ամեն ինչ գրանցի, ոչ ոքի չընդունե՛լ: Դու պետք ես: Դոկտոր Բորմենտա՛լ, աղաչում եմ, արա՛գ, արա՛գ, արա՛գ:

«Դուր չի գալիս ինձ, սա ինձ դուր չի գալիս»,- շունը նեղացած խոժոռվեց ու սկսեց ման գալ բնակարանում, իսկ ամբողջ վազվզոցը կենտրոնացավ վիրակապարանում: Զինան անսպասելիորեն խալաթով հայտնվեց, որ նման էր սավանի, ու սկսեց վազ տալ վիրակապարանից խոհանոց և հակառակը:

«Գնամ ուտելո՞ւ, թե ոնց: Թող գետնի տակն անցնեն դրանք»,- վճռեց շունն ու հանկարծ անակնկալի եկավ:

- Շարիկին ոչինչ չտա՛լ,- դղրդաց հրամանը վիրակապարանից:

- Կզսպե՛ս դրան, բա չէ՞:

- Փակի տա՛կ առնել:

Եվ Շարիկին տարան ու փակեցին լողասենյակում:

«Բռիություն է,- մտածեց կիսախավար լողասենյակում նստած Շարիկը,- ուղղակի տխմարություն...»:

Մոտ քառորդ ժամ մնաց լողասենյակում, տարօրինակ հոգեվիճակում էր՝ մեկ չարացած, մեկ էլ ինչ-որ ծանր ընկճվածության մեջ: Ամեն ինչ տխուր էր, անորոշ...

«Դե լա՛վ, այ թե վաղը կրկնակոշի՛կ կունենաք, մեծարգո՛ Ֆիլիպ Ֆիլիպովիչ,- միտք արեց նա,- երկու զույգ արդեն ստիպված առել եք, մեկն էլ դեռ կառնեք: Որ շներին էսպես չառնեք փակի տակ»:

Բայց հանկարծ նրա կատաղի խորհրդածությունն ընդմիջվեց: Չգիտես ինչու անսպասելի ու պարզորոշ հայտնվեց ամենավաղ պատանեկության մի պատառիկ՝ արևոտ անծայրածիր բակը Պրեոբրաժենսկի պահակետի մոտ, արեգակի բեկորները՝ շշերի մեջ, փշրված աղյուսը, ազատ, շրջմոլիկ շները:

«Չէ՛, ոչ մի ազատության էլ էստեղից չես ձգտի, ինչո՞ւ ստել,- քիթը վեր քաշելով՝ տխրեց շունը,- արդեն վարժվել եմ: Աղայական շուն եմ ես, ինտելիգենտ արարած՝ ճաշակած գեղեցիկ կյանքը: Եվ ի՞նչ բան է ազատությունը: Ոչի՛նչ, ծո՛ւխ, տեսի՛լք, պատրա՛նք... Էդ չարաբաստիկ դեմոկրատների զառանցանքը...»:

Հետո լողասենյակի կիսախավարը սարսափելի դարձավ, նա կաղկանձեց, նետվեց դեպի դուռը, սկսեց ճանկռել:

- Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ,- ինչպես տակառի խորքից՝ տարածվում էր բնակարանով մեկ:

«Բուն էլի պատառ-պատառ կանեմ»,- կատաղած, բայց անզոր՝ մտածեց շունը: Հետո թուլացավ, պառկեց ու երբ վեր կացավ, մորթը հանկարծ փշաքաղվեց, չգիտես ինչու՝ լողասենյակում աչքին գայլի զզվելի աչքեր երևացին:

Եվ տառապանքի բարձրակետին դուռը բացվեց: Շունն իրեն թափ տալով դուրս եկավ ու խոժոռված պատրաստվում էր անցնել խոհանոց, բայց Զինան վզափոկից բռնած՝ համառորեն քաշում էր դեպի վիրակապարան: Մի ցուրտ հոսանք անցավ շան սրտով:

«Նրանց ինչի՞ն եմ պետք եկել,- մտածեց կասկածանքով: - Կողս լավացել է, բան չեմ հասկանում»:

Եվ թաթերով մանրահատակից կառչելով, քաշքշվելով, սլքտալով, հենց այդպես էլ հայտնվեց վիրակապարանում: Այնտեղ ամենից ապշեցնողը չտեսնված լուսավորությունն էր: Առաստաղից կախված սպիտակ լուսագունդը այնպես էր փայլում, որ ծակում էր աչքերը: Ճերմակ շողարձակման մեջ կանգնել էր քուրմը և ատամների արանքից դնդնում էր Նեղոսի սրբազան ափերի մասին: Միայն թույլ հոտից էր հնարավոր հասկանալ, որ Ֆիլիպ Ֆիլիպովիչն է: Խուզած սպիտակ մազերը թաքնվել էին ճերմակ թասակի տակ, որ պատրիարքական խույր էր հիշեցնում: Աստվածությունն ամբողջովին ճերմակազգեստ էր, իսկ ճերմակի վրայից, փորուրարի պես, ռետինե նեղ գոգնոց էր կապած: Ձեռքերին՝ սև ձեռնոցներ:

Գլխին խույր էր կրում նաև խածվածը: Երկար սե-

ղանը բացված էր, իսկ կողքից մի փոքրիկ, միոտանի սեղանիկ էին կպցրել:

Շունն այստեղ ամենից ավելի խածվածին էր ատում ու հատկապես՝ նրա այսօրվա աչքերի համար: Սովորաբար խիզախ ու շիտակ՝ դրանք փախչում էին շան աչքերից: Զգուշավոր էին, կեղծ, իսկ խորքում մի վատ, գարշելի գործ էր թաքնված, եթե ոչ՝ հանցագործություն: Շունը ծանր նայեց նրան ու խոժոռված քաշվեց մի անկյուն:

- Փո՛կը, Զի՛նա,- կամացուկ ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- բայց չվախեցնես:

Զինայի աչքերն ակնթարթորեն նույնքան նողկալի դարձան, որքան խածվածինն էին: Նա մոտեցավ շանը և ակնհայտորեն կեղծ շոյեց: Սա թախծոտ ու արհամարհանքով նայեց աղջկան:

«Դե ի՞նչ, դուք երեքով եք: Բռնեք, եթե կուզեք: Մենակ թե՝ ամո՛թ ձեզ: Գոնե իմանայի՝ ինչ եք ուզում...»:

Զինան արձակեց փոկը, շունն օրորեց գլուխը, փռշտաց: Խածվածը ցցվեց դիմացը, ու նրանից գարշելի, սրտխառնոց հարուցող հոտ էր փչում:

«Թո՛ւ, ի՞նչ գարշանք է... Եվ ինչու է այսպես սարսափելի, սիրտս էլ խառնում է»,- մտածեց շունն ու հետ քաշվեց:

- Արա՛գ, դոկտո՛ր,- անհամբեր ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Օդում սուր ու քաղցր հոտ տարածվեց: Խածվածը, զգուշավոր ու նողկալի աչքերը Շարիկից չկտրե-

լով, թիկունքից առաջ բերեց աջ ձեռքը ու շան քթի տակ խցկեց բամբակի մի խոնավ կտոր: Շարիկը թպրտաց, գլուխը թեթևակի պտտվեց, բայց հասցրեց էլի նահանջել: Խածվածը թռավ հետևից և անսպասելիորեն ամբողջ մռութը թաղեց բամբակի մեջ: Շունչն անմիջապես կտրվեց, սակայն շունը մի անգամ էլ կարողացավ պոկվել: «Չարագո՛րծ...,- առկայծեց մտքում: - Ինչի՞ համար»: Ու մի անգամ էլ բամբակախեղդ արին: Վիրակապարանի կենտրոնում անսպասելիորեն մի լիճ հայտնվեց, իսկ լճում, մակույկների մեջ, չափազանց ուրախ, անդրշիրիմյան, չտեսնված վարդագույն շներ: Ոտքերը, ասես ոսկրազրկվելով, ճկվեցին:

- Սեղանի՛ն,- ինչ-որ տեղ ուրախ ճայթեց Ֆիլիպ Ֆիլիպովիչի ձայնը ու կոտորակվեց նարնջագույն շիթերի մեջ: Սարսափն անհետացավ, փոխարինվեց ցնծությամբ: Մարող շունը մի երկվայրկյան սիրում էր խածվածին: Հետո ողջ աշխարհը շրջվեց հիմնիվեր, ու դեռ զգաց նաև սառը, բայց հաճելի ձեռնահպումը փորատակին: Հետո՝ ոչինչ:

IV

Վիրահատական նեղ սեղանին տարածված պառկել էր Շարիկ շունը, ու գլուխն անօգնական խփվում էր սպիտակ մոմլաթե բարձին: Փորը խուզված էր, և դոկտոր Բորմենտալը, արագ ու ծանր շնչելով, խուզի սարքը բրդի մեջ թաղած, խուզում էր Շարիկի գլուխը: Ֆիլիպ Ֆիլիպովիչը, ափերով հենված սեղանի եզրին, իր ակնոցի ոսկյա շրջանակների պես շողշողալով, հետևում էր այդ գործողությանն ու հուզված ասում.

– Իվա՛ն Առնոլդովիչ, ամենակարևոր պահը՝ երբ մտնեմ թուրքական թամբի մեջ, ակնթարթորեն, աղաչո՛ւմ եմ, ինձ տվեք ելունդը և անմիջապես կարեք: Եթե արնահոսություն սկսվեց, ժամանակ կկորցնենք ու շանն էլ՝ հետը: Ասենք, նա առանց այդ էլ որևէ հեռանկար չունի,– նա լռեց՝ աչքը կկոցելով նայեց շան կիսագոց, ասես քմծիծաղող աչքին ու ավելացրեց:– Գիտե՞ք, ափսոսում եմ նրան: Պատկերացրեք, սովորել էի:

Այդ ամբողջ ընթացքում վեր էր պարզել ձեռքերը, կարծես դժվարին սխրանքի էր ոգեկոչում տարաբախտ Շարիկին և ջանում էր, որ փոշեհատիկ անգամ չնստի սև ռետինի վրա:

Խուզված բրդի տակից շողաց շան ճերմակավուն մաշկը: Բորմենտալը դեն նետեց խուզի սարքն ու ձեռքն առավ ածելին: Նա օճառեց փոքրիկ ան-

պաշտպան գլուխը ու սկսեց սափրել: Ուժեղ խշրտոց լսվեց ածելու տակից, մի քանի տեղ արյուն երևաց: Սափրելով՝ խածվածը բամբակի փոքրիկ, բենզինոտ կտորով մաքրեց գլուխը, ապա ձգեց շան մերկացած փորն ու շունչ առնելով՝ քրթմնջաց. «Պատրաստ է»:

Զինան բացեց ծորակը, ու Բորմենտալը շտապեց ձեռքերը լվանալու: Զինան սրվակից ձեռքերին սպիրտ լցրեց:

- Գուցե ես գնա՞մ, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- հարցրեց նա՝ վախվորած նայելով շան սափրած գլխին:

- Կարող ես գնալ:

Զինան չքացավ: Բորմենտալը փութով շարունակեց: Թեթև թանզիֆե անձեռոցիկներով պատեց Շարիկի գլուխը, և այդ ժամանակ բարձի վրա երևակվեցին շան չտեսնված ճաղատ գանգը ու տարօրինակ, մորուքավոր մռութը:

Այստեղ քուրմը շարժվեց: Շտկվեց, նայեց շան գլխին ու ասաց.

- Դե, տե՛ր Աստված, օրհնությո՛ւնդ տուր:

Բորմենտալը սեղանին պսպղացող կույտից մի փոքրիկ ցմփոր դանակ վերցրեց ու հանձնեց քուրմին: Հետո նույնպիսի սև ձեռնոցներ հագավ, ինչպես քուրմը:

- Քնա՞ծ է,- հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Քնած է:

Ֆիլիպ Ֆիլիպովիչի ատամները սեղմվեցին, աչքերը ծակող ու խայթիչ փայլ առան: Նա դիպուկ շարժու-

մով մի երկարուկ վերք բացեց Շարիկի փորին: Մաշկն անմիջապես ճոռթվեց, և արյունը ցայտեց տարբեր կողմերի վրա: Բորմենտալը գիշատչորեն վրա պրծավ ու թանզիֆի կտորը սեղմեց Շարիկի վերքին, հետո փոքրիկ, ասես շաքարի ուսելիներով սեղմեց եզրերը, ու վերքը չորացավ: Բորմենտալի ճակատին պղպջակներով քրտինք դուրս տվեց: Ֆիլիպ Ֆիլիպովիչը երկրորդ կտրվածքն արեց, ու երկուսով սկսեցին մարմինը պատառոտել կեռիկներով, նշտարներով, ինչ-որ պահանգներով: Վարդագույն ու դեղին, արյունոտ կաթիլներ արտասվող հյուսվածքներ հայտնվեցին: Ֆիլիպ Ֆիլիպովիչը նշտարը պտտում էր շան մարմնի մեջ, հետո գոչեց. «Մկրա՛տը»:

Գործիքն առկայծեց խածվածի ձեռքին, ինչպես աճպարարի ձեռքերում: Ֆիլիպ Ֆիլիպովիչն ավելի խորացավ ու մի քանի պտտադարձով պոկեց Շարիկի սերմնագեղձերը՝ ինչ-որ ծվեններով հանդերձ: Բորմենտալը, ջանադրությունից ու հուզմունքից լրիվ թրջված, նետվեց դեպի ապակե անոթն ու դուրս քաշեց ուրիշ թաց, կախկխված սերմնագեղձեր: Ինչ-որ կարճ, խոնավ լարեր թռչկոտեցին, ոլորվեցին պրոֆեսորի և օգնականի ձեռքերում: Սեղմակների մեջ մանրիկ կտկտացին կեռ ասեղները, սերմնագեղձերը կարեցին Շարիկի գեղձերի տեղում: Քուրմը հետ ընկավ, թանզիֆի փերթով ցույց տվեց վերքը ու հրամայեց.

– Կարե՛ք, դոկտո՛ր, արա՛գ, մա՛շկը,– ապա նայեց պատի սպիտակ, կլոր ժամացույցին:

- 14 րոպե աշխատեցինք,- սեղմած ատամների արանքից նետեց Բորմենտալը ու կեռ ասեղը խրեց թույլ, կախված մաշկի մեջ: Հետո երկուսն էլ իրար անցան աճապարող մարդասպանների պես:

- Նշտա՛րը,- բղավեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Նշտարն ասես ինքն իրեն թռավ-հայտնվեց նրա ձեռքում, ու Ֆիլիպ Ֆիլիպովիչի դեմքը սարսափազդու դարձավ: Նա մերկացրեց ճենապակյա ու ոսկե ատամնաշարը և մի շարժումով Շարիկի ճակատին կարմիր պսակ գծեց: Խուզած գանգամաշկը հետ գցեցին: Մերկացրին ոսկրե գանգը: Ֆիլիպ Ֆիլիպովիչը բղավեց.

- Շաղա՛փը:

Բորմենտալը փայլուն շաղափը տվեց նրան: Շրթունքները կծոտելով՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչը սկսեց ներս խրել շաղափը ու Շարիկի գանգի մեջ փոքրիկ անցքեր բանալ, իրարից սանտիմետրի հեռավորությամբ, այն հաշվարկով, որ շրջանակեն ամբողջ գլուխը: Յուրաքանչյուր անցքի վրա ծախսում էր ոչ ավելի, քան հինգ վայրկյան: Հետո չտեսնված տեսքի սղոցով, դրա պոչը խցկելով առաջին անցքի մեջ, սկսեց սղոցել, ինչպես սղոցում են կանացի ձեռագործ արկղիկը: Գանգը կամացուկ դզզում ու ցնցվում էր: Երեք րոպեից Շարիկի գանգի կափարիչը հանեցին:

Եվ այդ ժամանակ բացվեց Շարիկի ուղեղի գմբեթը՝ գորշ կապտավուն միջներակներով ու կարմրավուն բծերով: Ֆիլիպ Ֆիլիպովիչը մկրատը խրեց թա-

ղանթների մեջ ու բացեց դրանք: Խփեց արյան վտիտ շատրվանը, քիչ էր մնում դիպչեր պրոֆեսորի աչքին և ցողեց նրա թասակը: Բորմենտալը, ունելին ձեռքին, վագրի պես նետվեց ու սեղմեց երակը: Բորմենտալի քրտինքը առու-առու հորդում էր, դեմքը մսոտ ու գույնզգույն էր դարձել: Աչքերը պրոֆեսորի ձեռքերից նետվում էին գործիքների սեղանիկին: Իսկ Ֆիլիպ Ֆիլիպովիչն արդեն ստուգապես սարսափազդու էր: Քթից ֆսսոց էր արձակվում, ատամները մերկացել էին մինչև լնդերը: Նա պոկեց ուղեղի թաղանթը ու խորքերը մտավ՝ բացված թասից դուրս մղելով ուղեղի կիսագնդերը: Այդ պահին Բորմենտալը գունատվեց, ձեռքով սեղմեց Շարիկի կուրծքը ու խռպոտ ասաց.

- Երակազարկը կտրուկ ընկնում է:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը կատաղի նայեց նրան, ինչոր բան մնչաց ու ավելի խորացավ: Բորմենտալը խշրտոցով ջարդեց ապակե սրվակը, հեղուկ քաշեց ներարկիչի մեջ ու դավադրաբար ծակեց Շարիկի սրտի շրջանում:

- Գնում եմ դեպի թուրքական թամբը,- մռնչաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը և արնոտված լպրծուն ձեռնոցներով գլխից դուրս մղեց Շարիկի գորշադեղնավուն ուղեղը: Մի ակնթարթ աչքը գցեց Շարիկի մռութին, և Բորմենտալն առանց հապաղելու ջարդեց դեղին հեղուկով երկրորդ սրվակն ու քաշեց երկարուկ ներարկիչի մեջ:

1915.info

- Սի՞րտը,- երկչոտ հարցրեց նա:

- Դեռ հարցնո՞ւմ եք,- չար բղավեց պրոֆեսորը,- մե՛կ է, նա ձեր ձեռքին արդեն հինգ անգամ մեռել է: Սրսկե՛ք: Աներևակայելի՜ է:- Դեմքն ասես ոգեշնչված ավազակի դեմք լիներ:

Դոկտորն ասեղը թափով խրեց շան սիրտը:

- Ողջ է, բայց՝ շնչի վրա,- երկչոտ մրմնջաց նա:

- Դատողություններ անելու ժամանակը չէ, ողջ է, ողջ չի,- պայթեց զարհուրելի Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ես թամբի մեջ եմ: Մե՛կ է, կմեռնի... ա՜խ, դու, սատա՜ն... Դեպի ափերը սրբազան Նեղոսի... Ելունդը տվեք:

Բորմենտալը նրան տվեց սրվակը, որի մեջ, թելից կախ, ինչ-որ հեղուկում լող էր տալիս մի սպիտակ գուղձիկ: Մի ձեռքով,- «Հավասարը չունի Եվրոպայում... Աստված վկա»,- աղոտ մտածեց Բորմենտալը,- նա դուրս քաշեց լողացող գուղձիկը, իսկ մյուսով մկրատով նույնպիսի մեկը խուզեց սղոցված կիսագնդերի խորքերից: Շարիկի գուղձիկը նետեց թասը, իսկ նորը, թելի հետ, դրեց ուղեղի մեջ և իր կարճ մատներով, որոնք ասես հրաշքով ճկուն ու նուրբ էին դարձել, վարպետորեն փաթաթեց սաթի թելով: Դրանից հետո շան գլխից դուրս քաշեց ինչ-որ պրկաններ, ունելին, ուղեղը հետ խցկեց ոսկրե թասի մեջ, հետ ընկավ և արդեն ավելի հանգիստ հարցրեց.

- Մեռավ, հա՞...

- Թելանման երակազարկ է,- պատասխանեց Բորմենտալը:

- Էլի՛ ադրենալին:

Պրոֆեսորը թաղանթներով պատեց ուղեղը, սղոցված կափարիչը ճշգրիտ տեղը դրեց, գանգամաշկը քաշեց վրան ու գոչեց.

- Կարե՛ք:

Բորմենտալը, երեք ասեղ ջարդելով, հինգ որոպեում կարեց գլուխը:

Եվ ահա բարձի վրա, արնաներկ ֆոնին, հայտնվեց Շարիկի անկյանք, մարած մռութը՝ գլխին պսակաձև վերք: Ֆիլիպ Ֆիլիպովիչը, կշտացած վամպիրի նման, վերջնականապես հետ ընկավ, քաշեց-պոկեց մի ձեռնոցը՝ դուրս թափելով քրտնած կավճափոշու մի ամբողջ ամպ, մյուսը պատռեց, նետեց հատակին ու սեղմելով պատի կոճակը՝ զանգը տվեց: Չինան հայտնվեց շեմին՝ շրջվելով, որ չտեսնի արյան մեջ կորած Շարիկին: Քուրմը կավճոտ ձեռքերով հանեց խույրը ու բղավեց.

- Ինձ անհապաղ ծխախոտ տվեք, Չի՛նա: Թարմ սպիտակեղե՛ն ու լոգա՛նք:

Նա կզակը հենեց սեղանի եզրին, երկու մատով բարձրացրեց շան աջ կոպը, նայեց ակնհայտորեն մահացող աչքին և ասաց.

- Տես, է՛, գրո՛ղը տանի: Չի՛ սատկել: Բայց մե՛կ է, կսատկի: Է՛հ, դոկտոր Բորմենտա՛լ, ափսոս էր շունը, լավն էր, թեկուզև՝ խորամանկ:

V

Դոկտոր Բորմենտալի օրագրից

Բարակ, գրելու թղթի չափսի տետր: Ամբողջովին գրոտված Բորմենտալի ձեռքով: Առաջին երկու էջին ձեռագիրը կոկիկ է, սեղմ ու հստակ, հետո՝ լայնաթափ, հուզված, առատ թանաքաբծերով:

22 դեկտեմբերի, 1924 թ.: Երկուշաբթի
Հիվանդության պատմություն

Փորձարանային շուն, մոտ 2 տարեկան: Որձ: Ցեղատեսակը՝ խառնածին: Անունը՝ Շարիկ: Բուրդը նոսր է, փերթ-փերթ, գորշավուն՝ տեղ-տեղ խանձված: Պոչը՝ եռացրած կաթի գույն: Աջ կողին՝ լրիվ լավացած այրվածքի հետք: Սնունդը՝ նախքան պրոֆեսորի մոտ ընդունվելը՝ վատ, մեկ շաբաթ կենալուց հետո՝ խիստ պարարտ: Քաշը՝ 8 կգ (բացականչ. նշան): Սիրտը, թոքերը, ստամոքսը, ջերմաստիճանը...

23 դեկտեմբերի

Երեկոյան ժամը 8.30-ին կատարված է Եվրոպայում առաջին վիրահատությունը ըստ պրոֆ. Պրեոբրաժենսկու. քլորոֆորմային անզգայացումով հեռացվել են Շարիկի ձվարանները և դրանց փոխարեն պատվաստվել են տղամարդու ձվարաններ՝ ելունդներով ու սերմնային բոկիկներով, որոնք վերցվել էին

վիրահատությունից 4 ժամ 4 րոպե առաջ մահացած 28-ամյա տղամարդուց ու պահվել մանրէազերծ ֆիզիոլոգիական լուծույթի մեջ՝ ըստ պրոֆ. Պրեոբրաժենսկու:

Դրանից անմիջապես հետո գանգի կափարիչի շաղափումով հեռացված է ուղեղի ելունդը՝ մակուղեղը, և փոխարինված մարդկայինով՝ վերոնշյալ տղամարդուց:

Ներարկված է 8 խորանարդ քլորոֆորմ, 1 ներարկիչ կամֆարա, 2 ներարկիչ ադրենալին՝ սրտում:

Վիրահատության խնդիրը. Պրեոբրաժենսկու գիտափորձը՝ մակուղեղի և ձվարանների համակցված պատվաստումով պարզել մակուղեղի աճի հնարավորությունը, հետագայում՝ նաև ազդեցությունը մարդկային օրգանիզմի երիտասարդացման վրա:

Վիրահատեց պրոֆեսոր Ֆ.Ֆ. Պրեոբրաժենսկին:

Օգնական՝ դ-ր Ի.Ա. Բորմենտալ:

Գիշերը՝ վիրահատությունից հետո, երակազարկի սպառնալի կրկնվող անկումներ: Մահվան ելքի սպասում: Կամֆարայի հսկայական բաժնեչափեր՝ ըստ Պրեոբրաժենսկու:

24 դեկտեմբերի

Առավոտյան՝ բարելավում: Շնչառությունը կրկնակի արագացած է, ջերմությունը՝ 42: Կամֆարա, կոֆեին՝ ենթամաշկային:

25 դեկտեմբերի

Դարձյալ վատացում: Զարկերակը հազիվ է շոշափվում, վերջույթները սառչում են, բիբերը չեն արձագանքում: Ադրենալին՝ սրտին, կամֆարա՝ ըստ Պրեոբրաժենսկու, ֆիզիոլոգիական լուծույթ՝ երակը:

26 դեկտեմբերի

Որոշ բարելավում: երակազարկը՝ 180, շնչառությունը՝ 92, ջերմությունը՝ 41: Կամֆարա, սնուցում հոգնայով:

27 դեկտեմբերի

Երակազարկը՝ 152, շնչառությունը՝ 50, ջերմությունը՝ 39,8: Բիբերը արձագանքում են: Կամֆարա՝ մաշկի տակ:

28 դեկտեմբերի

Զգալի բարելավում: Կեսօրին անսպասելի առատ քրտնարտադրություն, ջերմությունը՝ 37,0: Վիրահատական վերքերը նախկին վիճակում են: Վիրակապում: Վերականգնվել է ախորժակը: Մնունդը՝ հեղուկ:

29 դեկտեմբերի

Անսպասելիորեն ի հայտ եկավ մազաթափություն՝ ճակատի ու կողերի: Խորհրդատվության են հրավիրվել մաշկային հիվանդությունների ամբիոնի պրոֆեսոր Վասիլի Վասիլևիչ Բունդարևը և Մոսկ-

վայի անասնաբուժական օրինակելի ինստիտուտի տնօրենը: Հավաստեցին, որ դեպքը գրականության մեջ նկարագրված չէ: Ախտորոշում չարվեց: Ջերմությունը նորմալ է:

(Գրառում մատիտով)

Երեկոյան առաջին հաչոցը (ժամը 8.15-ին): Ուշադրություն է գրավում ձայներանգի կտրուկ փոփոխությունը և տոնի իջեցումը: Հաչոցը՝ «հաֆ-հաֆ»-ի փոխարեն՝ «ա-օ» վանկատումով, ձայներանգով հեռավոր կերպով տնքոց է հիշեցնում:

30 դեկտեմբերի

Մազաթափությունն ընդհանուր բնույթ ստացավ: Կշռումն անսպասելի արդյունք տվեց, քաշը՝ 30 կգ, ոսկորների աճի (երկարելու) հաշվին: Շունն առաջվա պես պառկած է:

31 դեկտեմբերի

Հսկայական ախորժակ:

(Տետրի մեջ՝ թանաքաբիծ: Թանաքաբծից հետո՝ փութկոտ ձեռագրով)

Ժամը 12.12-ին շունը հստակ հաչաց. «Ա-բ-ըռ»:

(Տետրում ընդմիջում է, իսկ հետո, հավանաբար հուզմունքից սխալվելու պատճառով, գրված է):

1-ը դեկտեմբերի (Ջնջված է, ուղղված) 1-ը հունվարի, 1925 թ.

Լուսանկարվեց առավոտյան: Հստակ հաչում է «Աբըռ»՝ կրկնելով այդ բառը բարձրաձայն և ասես ուրախությամբ: Ցերեկվա ժամը 3-ին (գլխատառերով) ԾԻԾԱՂԵՑ՝ ուշաթափության հասցնելով Զինային: Երեկոյան իրար ետևից 8 անգամ արտաբերեց «Աբըռ վալգ», «Աբըռ»:

(Շեղատառ, մատիտով), պրոֆեսորը վերծանեց «Աբըռ վալգ» բառը. նշանակում է «Գլխձուկ»... Ինչ-որ հրեշա...

2 հունվարի

Լուսանկարվեց ժպտալիս՝ մագնիումով: Վեր կացավ անկողնուց ու կես ժամ վստահ կանգնեց ետևի թաթերի վրա: Համարյա իմ հասակին է:

(Տետրում՝ ներդիր էջ)

Ռուսական գիտությունը քիչ էր մնում ծանր կորուստ կրեր:

Պրոֆեսոր Ֆ.Ֆ. Պրեոբրաժենսկու հիվանդության պատմությունը:

Ժամը 1-ն անց 13 րոպեին պրոֆ. Պրեոբրաժենսկու խոր ուշաթափությունը: Ընկնելիս գլուխը խփեց սեղանի ոտքին: Կատվախոտի թուրմ:

Իմ և Զինայի ներկայությամբ շունը (եթե, իհարկե, կարելի է նրան շուն անվանել) մայր հայհոյեց պրոֆ. Պրեոբրաժենսկուն:

(Դադար գրառումներում)

---

6 հունվարի

(Մերթ մատիտով, մերթ մանուշակագույն թանաքով)

Այսօր, պոչը պոկվելուց հետո, միանգամայն հստակ արտասանեց «գարեջրատուն» բառը: Աշխատում է ֆոնոգրաֆը: Սատանան գիտի՝ սա ինչ է:

Ոչինչ չեմ հասկանում:

Ընդունելությունը պրոֆեսորի մոտ դադարեցված է: Սկսած ցերեկվա ժ. 5-ից վիրակապարանից, որտեղ շրջում է այդ արարածը, լսվում է ակնհայտորեն գռեհիկ հայհոյանք ու «էլի էրկու հատ» բառերը:

7 հունվարի

Նա չափազանց շատ բառեր է օգտագործում. «Կա-

ռապան», «Տեղ չկա», «Երեկոյան թերթ», «Լավագույն նվերը երեխաներին», և բոլոր հայհոյական խոսքերը, որ կարող են գոյություն ունենալ ռուսերենում:

Տեսքը տարօրինակ է: Բուրդ մնացել է միայն գլխին, կզակին ու կրծքին: Մնացած մասերում անմազ է, թարշամած մաշկով: Սեռական օրգանների առումով՝ ձևավորվող տղամարդ է: Գանգը զգալի մեծացել է: Ճակատը թեք է ու նեղ:

Աստված վկա, ես կխելագարվեմ:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը դեռ վատառողջ է: Դիտարկումները կատարում եմ ես: *(Ֆոնոգրաֆ, լուսանկարներ):*

Քաղաքում սկսեցին լուրեր տարածվել:

Անհաշիվ հետևանքներ: Այսօր ցերեկը ամբողջ նրբանցքը լեփ-լեցուն էր ինչ-որ անբաններով ու պա-

ռավներով: Բացբերանները դեռ հիմա էլ կանգնած են պատուհանների տակ: Առավոտյան թերթերում մի զարմանալի թղթակցություն էր հայտնվել: «Լուրերը Օբուխովյան նրբանցքում մարսեցու հայտնվելու մասին ոչնչով հիմնավորված չեն: Դրանք տարածել են Սուխարյովկայի առևտրականները և խստորեն կպատժվեն»: Ինչ մարսեցու մասին է, գրողը տանի: Սա, ախր, մղձավանջ է:

Մի բան էլ ավելի «Երեկոյան»-ում էին գրել, թե մի երեխա է ծնվել, որ ջութակ է նվագում: Եվ կից՝ նկարը՝ ջութակն ու իմ լուսանկարը, իսկ տակը՝ մակագրություն. «Պրոֆ. Պրեոբրաժենսկին, որ կեսարյան հատում է արել մորը»: Սա ինչ-որ աներևակայելի բան է... Նա նոր բառ է արտաբերում. «Միլիցիոներ»:

Պարզվում է՝ Դարյա Պետրովնան սիրահարված է եղել ինձ ու լուսանկարը թռցրել է Ֆիլիպ Ֆիլիպովիչի ալբոմից: Այն բանից հետո, երբ վռնդել եմ լրագրողներին, նրանցից մեկը խցկվել է խոհանոց և այլն, և այլն:

Ի՞նչ է կատարվում ընդունելության ժամանակ: Այսօր 82 զանգ եղավ: Հեռախոսն անջատված է: Չբեր տիկնայք խելքները թռցրել և գալիս ու գալիս են...

Տնային կոմիտեն՝ ամբողջ կազմով՝ Շվոնդերի գլխավորությամբ: Թե ինչ են ուզում՝ իրենք էլ չգիտեն...

8 հունվարի

Ուշ երեկոյան ախտորոշում արեցինք: Ֆիլիպ Ֆիլիպովիչը, որպես իսկական գիտնական, ընդունեց իր սխալը, մակուղեղի փոփոխությունը ոչ թե երիտասարդացման է հանգեցնում, այլ կատարյալ մարդացման *(ընդգծված է երեք անգամ)*: Դրանից նրա ապշեցուցիչ, ցնցող հայտնագործության արժեքը բնավ չի նվազում:

Արարածն այսօր առաջին անգամ քայլեց բնակարանում: Ծիծաղում էր միջանցքում՝ նայելով էլեկտրական լամպին: Հետո, Ֆիլիպ Ֆիլիպովիչի և իմ ուղեկցությամբ, անցավ աշխատասենյակ: Ամուր կանգնում է հետևի թաթերին *(ջնջված է)*... ոտքերին և փոքրամարմին ու անկանոն կառուցվածք ունեցող տղամարդու տպավորություն է թողնում:

Ծիծաղում էր աշխատասենյակում: Ժպիտը տհաճ է և ասես արհեստական լինի: Հետո քորեց ծոծրակը, շուրջը նայեց, ու ես արձանագրեցի մի նոր, հստակ արտաբերված բառ. «բուրժույներ»: Հայհոյում էր: Հայհոյանքը հետևողական է, անընդմեջ և, ըստ եր-

ևույթին, չիմաստավորված: Փոքր-ինչ պատճենված բնույթ է կրում, ասես այդ արարածը նախկինում ինչ-որ տեղ լսելով հայհոյական խոսքերը՝ մեքենայաբար, ենթագիտակցորեն արձանագրել է ուղեղում և հիմա տրցակներով դուրս է թափում: Ասենք, ես հոգեբան չեմ, սատանան ինձ տանի:

Ֆիլիպ Ֆիլիպովիչի վրա այդ հայհոյանքը, չգիտես ինչու, զարմանալիորեն ճնշող ազդեցություն է թողնում: Լինում են պահեր, երբ նա դուրս է գալիս նոր երևույթների զուսպ ու սառնասիրտ դիտարկման վիճակից և ասես կորցնում է համբերությունը: Այսպես, երբ այդ արարածը նորից հայհոյում էր, հանկարծ ջղային բղավեց.

– Վե՛րջ տվեք:

Դա որևէ ազդեցություն չունեցավ:

Աշխատասենյակում զբոսնելուց հետո Շարիկը ընդհանուր ջանքերով տարվեց վիրակապարան:

Դրանից հետո ես ու Ֆիլիպ Ֆիլիպովիչը խորհրդակցություն ունեցանք: Այդ ինքնավստահ ու ապշեցուցիչ խելացի մարդուն, պետք է խոստովանեմ, առաջին անգամ էի այդպես շփոթված տեսնում: Իր սովորության համաձայն քթի տակ երգ դնդնալով՝ հարցրեց. «Եվ հիմա ի՞նչ ենք անելու»: Եվ ինքն էլ պատասխանեց տառացիորեն այսպես. «Մոսկվոշվեյա՛, այո՛... Սևիլիայից մինչ Գրենադա: Մոսկվոշվեյա՛, թանկագին դոկտո՛ր...»: Ես ոչինչ չհասկացա: Նա բացատրեց. «Խնդրում եմ, Իվա՛ն Առնոլդովիչ, նրա

համար սպիտակեղեն, անդրավարտիք ու պիջակ գնեք»:

9 հունվարի

Այսօր առավոտից բառապաշարը ամեն հինգ րոպեն մեկ *(միջինը)* հարստանում է նոր բառով ու դարձվածքով: Ըստ երևույթին, սառած են եղել գիտակցության մեջ և հիմա հալչում, դուրս են գալիս ու բառը մնում է կիրառության մեջ: Երեկվա երեկոյից ֆոնոգրաֆն արձանագրել է. «Մի՜ բրթբրթի», «Սրիկա՜», «Իջի՜ կանգնակից», «Ես քեզ Ամերիկայի ճանաչո՜ւմ ցույց կտամ», «Պրիմուս»:

10 հունվարի

Զգեստավորումը կատարվեց: Ներքնաշապիկը հաճույքով թույլ տվեց հագցնել, նույնիսկ ծիծաղում էր: Ոտաշորից հրաժարվեց՝ բողոքն արտահայտելով խռպոտ բղավոցներով. «Հե՜րթ կանգնեք, շա՜ն որդիք, հե՜րթ կանգնեք»: Հագցրինք: Գուլպաները վրան մեծ են:

(Տետրում՝ ինչ-որ սխեմատիկ պատկերներ, որոնք, ըստ ամենայնի, պատկերում են շան ոտքը մարդկայինի վերածվելու ընթացքը):

Երկարում է ոտնաթաթի (planta) կմախքի ետին կեսը: Մատների ձգում: Ճանկեր:

Արտաքնոց գնալու կրկնական ու պարբերական ուսուցում: Սպասակազմը միանգամայն ճնշված վիճակում է:

Սակայն հարկ է նշել արարածի ընկալունակությունը: Գործը միանգամայն հունի մեջ է ընկնում:

11 հունվարի

Լրիվ հաշտվել է անդրավարտիքի հետ: Մի երկար և ուրախ դարձվածք արտաբերեց. «Ծխելիքդ տեսնեմ ուր ա, շալվարդ էլ զոլավոր ա»:

Գլխի բուրդը փափուկ է, ալիքավոր: Հեշտությամբ կարելի է շփոթել մազի հետ: Սակայն գագաթին այրվածքի հետքերը մնացել են: Այսօր ականջներից թափվեց վերջին աղվամազը: Ահռելի ախորժակ: Մեծ ոգևորությամբ ծովատառեխ է ուտում:

Ցերեկվա ժամը 5-ին՝ իրադարձություն. արարածի արտասանած բառերը առաջին անգամ կտրված չէին շրջակա երևույթներից, այլ դրանց արձագանքն էին: Ավելի ստույգ, երբ պրոֆեսորը հրամայեց. «Թերմացքը մի՛ գցիր հատակին», նա անսպասելի պատասխանեց. «Յա՜ն տու, ոջի՛լ»:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ապշել էր, հետո ուշքի եկավ և ասաց.

– Եթե մի անգամ էլ համարձակվես հայհոյել ինձ կամ դոկտորին, ծեծ կուտես:

Ես այդ պահին լուսանկարում էի Շարիկին: Հավաստիացնում եմ, որ հասկացավ պրոֆեսորի ասածը: Մի մռայլ ստվեր թառեց դեմքին: Բավական ջղայն ու խոժոռված նայեց, բայց սսկվեց:

Ուռա՛, նա հասկանում է:

12 հունվարի

Ձեռքերը անդրավարտիքի գրպանները դնելը: Հետ ենք վարժեցնում հայհոյելուց: Սուլում է «Խնձորիկը»: Կարողանում է զրույց պահել:

Չեմ կարող չբերել մի քանի վարկած. առայժմ գրողի՛ ծոցը երիտասարդացումը: Մյուսն անհամեմատելիորեն ավելի կարևոր է. պրոֆ. Պրեոբրաժենսկու ապշեցուցիչ գիտափորձը բացահայտեց մարդկային ուղեղի գաղտնիքներից մեկը: Այսուհետ մակուղեղի՝ ուղեղային ելունդի, հանելուկային գործառույթը պարզված է: Այն սահմանում է մարդկային կերպարը: Նրա հորմոնները կարելի է կարևորագույնը համարել օրգանիզմում՝ կերպարի հորմոններ: Նոր բնագավառ է բացվում գիտության մեջ. առանց Ֆաուստի որևէ թորանոթի ստեղծված է հոմունկուլը: Վիրաբույժի նշտարը կյանքի կոչեց նոր մարդկային միավոր: Պրոֆ. Պրեոբրաժենսկի՛, դուք արարիչ եք: *(Թանաքաբիծ)*:

Ասենք, շեղվեցի... Եվ այսպես, նա պահում է խոսակցությունը: Իմ ենթադրությամբ՝ բանն այսպես է. պատվաստված մակուղեղը շան ուղեղում բացել է խոսքի կենտրոնը, և բառերը սկսել են հորդել: Իմ կարծիքով, մեր առջև վերակենդանացած, վերարթնացած, այլ ոչ թե նոր ստեղծված ուղեղ է: Օ՜, հրաշալի հաստատում էվոլյուցիայի տեսության: Օ՜, մեծագույն շղթա՝ շնից մինչև քիմիկոս Մենդելեև: Իմ ևս

մեկ վարկածը. Շարիկի ուղեղը նրա կյանքի շնային փուլում հասկացությունների մի ամբողջ անսահմանություն է կուտակել: Բոլոր բառերը, որ սկսեց օգտագործել առաջին հերթին, փողոցային բառեր են, որոնք լսել ու պահել է ուղեղում: Հիմա, փողոցով անցնելիս, ծածուկ սարսափով եմ նայում հանդիպող շներին: Աստվա՜ծ գիտի՝ ինչեր են պահված նրանց ուղեղներում:

Շարիկը կարդա՛լ է իմացել: Իմացե՞լ է *(3 բացականչական նշան)*: Կռահեցի: Գլխնուկ-ից հասկացա: Ընդ որում՝ կարդացել է վերջից: Եվ նույնիսկ գիտեմ՝ որտեղ է այդ հանելուկի լուծումը. շան տեսողական նյարդերի դադարի մեջ:

Ի՞նչ է կատարվում Մոսկվայում. աներևակայելի՞ է: Սուխարևկայի յոթ առևտրականներ արդեն նստած են բոլշևիկների բերած աշխարհավերջի մասին լուրեր տարածելու համար: Դարյա Պետրովնան էր ասում և նույնիսկ ստույգ նշում ամսաթիվը. 1925 թվականի նոյեմբերի 28-ին, սուրբ նահատակ Ստեփանի օրը երկիրը կբախվի երկնքի առանցքին... Ինչ-որ խարդախներ արդեն դասախոսություններ են կարդում: Այնպիսի մի իրարանցում ենք գցել մեր այդ մակուղեղով, որ թեկուզ գլուխդ առ ու փախիր

տնից: Տեղափոխվեցի Պրեոբրաժենսկու մոտ՝ նրա խնդրանքով, և Շարիկի հետ գիշերում եմ ընդունարանում: Վիրակապարանը վերափոխվել է ընդունարանի: Շվոնդերն իրավացի դուրս եկավ: Տնային կոմիտեն չարախնդում է: Պահարաններին՝ ոչ մի ապակի, որովհետև ցատկռտում է: Մի կերպ հետ վարժեցրինք:

Ֆիլիպի հետ տարօրինակ բան է կատարվում: Երբ պատմեցի իմ վարկածների և Շարիկին որպես բարձր հոգեբանական անհատականություն զարգացնելու հույսի մասին, քմծիծաղեց ու ասաց. «Կարծո՞ւմ եք»: Հարցը չարագուշակ էր: Մի՞թե սխալվել եմ: Ծերուկն ինչ-որ բան է մոգոնել: Քանի դեռ ես վարում եմ հիվանդության պատմությունը, նա այն մարդու պատմությունն է քրքրում, ումից վերցրել ենք մակուղեղը:

(Տետրում՝ ներդիր էջ)

Կլիմ Գրիգորևիչ Չուգունկին, 25 տարեկան, ամուրի: Անկուսակցական, համակրող: Երեք անգամ

դատվել և արդարացվել է. առաջին անգամը՝ հանցանշանների անբավարարության շնորհիվ, երկրորդ անգամ ծագումն է փրկել, երրորդ անգամ՝ պայմանական աքսոր 15 տարով: Գողություններ: Մասնագիտությունը՝ բալալայկա է նվագում գինետներում:

Կարճահասակ է, անկանոն կառուցվածքով: Լյարդը մեծացած է (ալկոհոլը): Մահվան պատճառը՝ դանակի հարված սրտին, գարեջրատանը («Ստոպսիգնալ»՝ Պրեոբրաժենսկի պահակետի մոտ):

Ծերուկը շարունակ զբաղված է Կլիմի հիվանդության պատմությամբ: Չեմ հասկանում՝ բանն ինչ է: Ինչ-որ բան է քրթմնջում այն մասին, որ գլխի չի ընկել պաթոլոգանատոմիկումում ամբողջովին զննել Չուգունկինի դիակը: Բանն ինչ է՝ չեմ հասկանում: Մեկ չէ՞, թե ում մակուղեղն է:

17 հունվարի

Մի քանի օր գրառում չեմ արել, հիվանդ էի ինֆլյուէնցիայով[11]: Այդ ընթացքում կերպարը վերջնականապես ձևավորվել է.

ա) մարմնակազմությամբ կատարյալ մարդ է.

բ) քաշը՝ մոտ 3 փութ,

գ) կարճահասակ է.

11 Ինֆլյուէնցիա – գրիպ (հնցծ.)

դ) գլուխը՝ փոքր,
ե) սկսել է ծխել.
զ) մարդկային սնունդ է ընդունում,
է) հագնվում է ինքնուրույն,
ը) սահուն զրույց է վարում:

Ա՛յ քեզ հիպոֆիզ *(թանաքաբիծ)*:

Սույնով հիվանդության պատմությունն ավարտվում է: Մեր առաջ նոր օրգանիզմ է, որը պետք է դիտարկել ամենասկզբից:

Հավելված. խոսքի սղագրություններ, ֆոնոգրաֆի ձայնագրություններ, լուսանկարներ:

Ստորագրություն. պրոֆեսոր Ֆ.Ֆ. Պրեոբրաժենսկու օգնական՝

Դոկտոր Բորմենտալ:

VI

Զմեռային երեկո էր: Հունվարի վերջը: Ճաշին և ընդունելությանը նախորդող ժամը: Շեմին, ընդունարանի դռան կողքին, կախված էր թղթի մի սպիտակ թերթ, որի վրա Ֆիլիպ Ֆիլիպովիչի ձեռքով գրված էր.

«Տանը արևածաղիկ չրթելն արգելում եմ»:
Ֆ. Պրեոբրաժենսկի

Եվ կապույտ մատիտով, կարկանդակի պես թմբլիկ տառերով՝ Բորմենտալի ձեռքով՝

«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՆՎԱԳԵԼԸ ՑԵՐԵԿՎԱ ԺԱՄԸ 5-Ի Ց ՄԻՆՉԵՎ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԸ 7-Ը ԱՐԳԵԼՎՈՒՄ է»:

Ապա՝ Չինայի ձեռքով.

«Երբ վերադառնաք, Ֆիլիպ Ֆիլիպովիչին ասացեք, ես չգիտեմ՝ նա ուր է գնացել: Ֆյոդորն ասում էր՝ Շվոնդերի հետ է»:

Պրեոբրաժենսկու ձեռքով.

«Հարյուր տարի՞ պիտի սպասենք ապակեգործին»:

Դարյա Պետրովնայի ձեռքով (տպատառ).

«ՁԻՆԱՆ ԳՆԱՑ ԽԱՆՈՒԹ: ԱՍԱՑ՝ ԿԲԵՐԻ ՆՐԱՆ»:

Ճաշասրահում մետաքսե լուսամփոփով լամպի շնորհիվ միանգամայն իրիկնային մթնոլորտ էր: Բուֆետից լույսը երկատված էր անդրադառնում, հայելապակիները շեղակի խաչաձև սոսնձված էին մի եզրակից մյուսը: Ֆիլիպ Ֆիլիպովիչը, սեղանին կռացած, խորասուզվել էր բացված լրագրի հսկայական էջի մեջ: Կայծակներ էին ակոսում դեմքը, և ատամների արանքից կցկտուր, ժլատ բառեր էին թռչում: Հաղորդագրություն էր կարդում.

«Ոչ մի կասկած չկա, որ դա նրա ապօրինածին (ինչպես արտահայտվում էին նեխած բուրժուական հասարակության մեջ) որդին է: Ահա թե ինչպես է զվարճանում մեր կեղծ-գիտական ինտելիգենցիան: Ամեն ոք կարող է յոթ սենյակ զբաղեցնել այնքան ժամանակ, քանի դեռ արդարադատության շողշողուն սուրը չի փայլատակել գլխին կարմիր ճառագայթի պես:

Շվ...ր»:

Հեռավոր սենյակում հետևողականորեն, լոթիաբար ու հմտորեն բալալայկա էին նվագում, և «Լուսինն է շողում»-ի բարդ վարիացիայի հնչյունները

Ֆիլիպ Ֆիլիպովիչի գլխում խառնվելով հաղորդագրության բառերին՝ վերածվում էին մի ատելի շիլայի: Ընթերցումն ավարտելով՝ նա չոր թքեց ուսի վրայից և ատամների արանքից մեքենայաբար ծոր տվեց.

- Լու-սինն է շո-ղում... լու-սինն է շո-ղում... լու-սինն է շողում... Թո՜ւ, կպել-պոկ չի գալիս, ա՜յ քեզ անիծված մեղեդի...

Նա զանգ տվեց: Վարագույրների արանքում հայտնվեց Զինայի գլուխը:

- Դրան ասա, որ ժամը 5-ն է, թող վերջ տա, ու կանչիր այստեղ, խնդրում եմ:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը նստել էր սեղանի մոտ, բազկաթոռի մեջ: Ձախ ձեռքի մատների արանքից ցցվել էր սիգարի դարչնագույն ծխուկը: Վարագույրի կողքին, շեմափայտին հենված, ոտքը ոտքին գցած կանգնել էր մի կարճահասակ և տհաճ արտաքինով մարդ: Գլխին կոշտ մազեր էին՝ արմատախիլ թփուտի պես, իսկ դեմքը պատել էր չսափրած աղվամազը: Ճակատն ապշեցնում էր նեղությամբ: Հոնքերի սև վրձնափնջերի հենց վերևից սկսվում էր գլխի թանձր խոզանակը:

Ձախ թևատակը պատռած պիջակին հարդի ծղոտներ էին կպել, զոլավոր անդրավարտիքի աջ ծունկը ճղված էր, իսկ ձախին վառ կարմիր ներկ էր քսմսվել: Վզին թունավոր-երկնագույն փողկապ էր՝ կեղծ սուտակի քորոցով: Փողկապի գույնն այնպես էր ծակում, որ ժամանակ առ ժամանակ հոգնած աչքե-

ը փակելով՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչը կատարյալ խավարի մեջ առաստաղին տեսնում էր մի բոցկլտացող ջահ՝ երկնագույն պսակով: Աչքերը բացելով՝ կրկին կուրանում էր, քանզի հատակից, հովհարաձև կրակի կայծեր սփռելով, աչքերի մեջ էին խուժում լաքած կոշիկները՝ սպիտակ զանկապաններով:

«Նույնն է թե՝ կրկնակոշիկներով ման գաս»,- տհաճությամբ մտածեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, հոգոց հանեց, ֆսֆսացրեց ու սկսեց բզբզել մարած սիգարը: Դռան մոտ կանգնած մարդը պղտոր աչքերով նայում էր պրոֆեսորին ու իր գլանակը ծխում՝ մոխիրը թափելով կրծքակալի վրա:

Պատի ժամացույցը, փայտե աքարի հարևանությամբ, զարկեց հինգ անգամ: Ժամացույցի ներսում դեռ ինչ-որ բան տնքում էր, երբ Ֆիլիպ Ֆիլիպովիչն ասաց:

- Ես կարծեմ արդեն երկու անգամ խնդրել եմ չքնել ուղելաթի վրա, խոհանոցում, առավել ևս՝ ցերեկով:

Մարդը խռպոտ հազաց, ասես կոկորդին կորիզ լիներ մնացած ու պատասխանեց.

- Խոհանոցի օդը դուրեկան է:

Ձայնը անբնական էր, խլավուն ու միևնույն ժամանակ՝ թնդացող, ասես փոքրիկ տակառից էր ելնում:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը օրորեց գլուխն ու հարցրեց.

- Որտեղի՞ց է հայտնվել այդ զզվանքը: Փողկապի մասին եմ ասում:

Մարդուկը, հայացքով մատին հետևելով՝ աչքերը շլած սիրով նայեց փողկապին:

- Էդ ընչի է զզվա՞նք որ,- խոսեց նա:- Սիրուն էլ փողկապ է: Դարյա Պետրովնան նվեր տվեց:

- Դարյա Պետրովնան ձեզ նողկանք է նվիրել, ճիշտ ու ճիշտ այդ կոշիկների նման: Այդ ի՞նչ շողշողուն տխմարություն է: Ես ի՞նչ էի խնդրել, վայելուչ կոշիկներ գնել, իսկ սա ի՞նչ է: Մի՞թե դոկտոր Բորմենտալն է ընտրել:

- Ես եմ ասել, որ լաքած ըլնեն: Ի՞նչ է, մյուսներից վա՞տն եմ: Գնացեք Կուզնեցկի. բոլորն էլ սրանցով են ման գալի:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը նորից օրորեց գլուխը ու ծանրակշիռ ասաց.

- Ուղելաթերի վրա քնելուն վերջ է տրվում: Հասկանալի՞ է: Այդ ինչ լկտիություն է: Դուք, ախր, խանգարում եք: Այնտեղ կանա՛յք են:

Մարդու դեմքը մթնեց, ու շրթունքներն առաջ ցցվեցին:

- Տե՛ս, է՛, կանա՛յք: Չէ՛ մի, տիրուհիներ: Շարքային ծառայող են, բայց էն տեսակ մի ձև են տալի՝ ոնց որ կոմիսարուհի: Էդ լրիվ Չինկան է խաբարբզիկություն անում:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը խիստ նայեց.

- Չհամարձակվեք Չինային Չինկա կոչել: Հասկանալի՞ է:

Լռություն:

- Հասկանալի՞ է, ձեզ եմ հարցնում:

- Հասկանալի է:

- Հանեք այդ այլանդակությունը ձեր վզից: Դուք... դու... դուք... նայեք ձեզ հայելու մեջ. ինչի՞ եք նման: Ասես բալագան լինի: Ծխուկները հատակին չգցե՛լ, հարյուրերորդ անգամն եմ խնդրում: Եվ որ այլևս որևէ հայհոյական խոսք չլսեմ բնակարանում: Չթքե՛լ: Ահա թքամանը: Կանոնավոր օգտվել զուգարանակոնքից: Չինայի հետ բոլոր խոսակցություններին վերջ տալ: Նա բողոքում է, որ մթան մեջ դարանակալում եք: Տեսե՛ք, հա՛: Դո՞ւք եք հիվանդին պատասխանել «Ծունը գիտի՝ ինչ է»: Դուք, ի՞նչ է, պանդոկո՞ւմ եք, այո՞:

- Դուք ինձ ոնց որ թե մի տեսակ շատ եք նեղում, հերի՛կ,- հանկարծ արտասվաձայն ասաց մարդը:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը շառագունեց, ակնոցը կայծկլտաց.

- Այս ո՞վ է այստեղ ձեր հերիկը: Սա ի՞նչ մտերմավարություն է: Այլևս չլսեմ այդ բառը: Կոչել ինձ անունհայրանունով:

Մի հանդուգն կրակ բռնկվեց մարդուկի մեջ:

- Դե, ի՞նչ եք դուք էլ, բոլորդ... Մեկ՝ մի՛ թքի: Մեկ՝ մի՛ ծխի: Էստեղ մի՛ գնա, էնտեղ մի՛ գնա... էս ի՞նչ բան է, իմացա՛ր: Մաքուր՝ ոնց որ տրամվայում: Ընչի՞ չեք թողում մարդավարի ապրեմ: Հերիկի համար էլ իզուր եք էդպես... Կարող է՞ ես եմ խնդրել վիրահատեք,- մարդը բորբոքված հաչում էր:- Լա՛վ գործեր են: Բռնել են կենդանուն, գլուխը դանակով ճղել, հըմի

էլ ձե՛ռ են առնում: Ես, կարող է, հեչ էլ թույլտվություն չեմ տվել վիրահատելու համար: Ու իմ (մարդը, ասես ինչ-որ բանաձև մտաբերելով, հայացքը հառեց առաստաղին)... ու իմ հարազատներն էլ: Ես, կարող է, հայց հարուցելու իրավունք ունեմ:

Ֆիլիպ Ֆիլիպովիչի աչքերը լրիվ կլորացան, սիգարն ընկավ ձեռքից: «Ա՛յ քեզ տիպ»՝ անցավ մտքով:

- Բարեհաճում եք դժգոհել, որ ձեզ մա՞րդ են դարձրել,- աչքերը կկոցեց նա: - Գուցե նախընտրում եք նորից վազվզել աղբանոցներո՞ւմ: Սառչել դարպասատակերի՞ն: Դե, եթե ես իմանայի...

- Ի՞նչ եք մի գլուխ էրեսով տալի՝ աղբանո՛ց, աղբանո՛ց: Ես իմ մի փոր հացն էի վաստակում: Բա որ դանակի տակ մնայի: Ի՞նչ կարտահայտվեք էդ կապակցությամբ, ընկե՛ր:

- Ֆիլիպ Ֆիլիպովի՛չ,- զայրագնած բղավեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը: - Ես ձեր ընկերը չե՛մ: Հրեշավո՛ր է: «Մղձավա՛նջ է, մղձավա՛նջ»՝ մտքում շարունակեց նա:

- Բա ի՛նչ, բա ո՛նց...,- հեգնեց մարդը և հաղթական առաջ դրեց ոտքը,- գլխի՛ ենք, գլխի՛: Մենք ձեզ ի՛նչ ընկեր: Ուրդո՞ւց: Համալսարաններ չենք ավարտել, 15 սենյականոց, լողարաններով տներում չենք ապրել: Բայց հիմա արդեն էդ բաների վերջը տալու ժամանակն է: Մեր օրոք ամեն մեկն իրա իրավունքն ունի...

Ֆիլիպ Ֆիլիպովիչը, ավելի ու ավելի գունատվելով, ունկնդրում էր մարդու դատողությունները: Սա

ընդհատեց ճառը և ծամծմած ծխախոտը ձեռքին ցուցադրաբար ուղղվեց դեպի մոխրամանը: Քայլվածքն օրորուն էր: Նա երկար ժամանակ կոնքի մեջ տրորում էր ծխուկը, մի այնպիսի արտահայտությամբ, որ պարզորոշ նշանակում էր «Ա՛ռ: Ա՛ռ»: Ծխախոտը հանգցնելով՝ հանկարծ կրճտացրեց ատամներն ու դունչը խոթեց թևատակը:

- Լուն մատներո՞վ բռնել: Մատներո՛վ,- բղավեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Եվ չեմ հասկանում՝ որտեղի՞ց եք հավաքում-բերում:

- Ես, ինչ է, կարո՞ղ է դրանց բուծում եմ, հը՞,- վիրավորվեց մարդը:- Երևի լվերն ինձ սիրում են,- նա մատներով քրքրեց թևքի ներդիրը ու դուրս ածեց շիկավուն, թեթև բամբակի մի մեծ փերթ:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը հայացքը հառեց առաստաղի զարդաշղթաներին ու թմբկահարեց սեղանը: Մարդը մահապատժի ենթարկելով լվին՝ ետ քաշվեց ու նստեց աթոռին: Ընդսմին, թաթերը իջեցնելով, ձեռքերը կախեց պիջակի դարձածալերի երկայնքով: Աչքերը շլեց հատակին. իր կոշիկներն էր զննում և դա մեծ հաճույք էր պատճառում նրան: Ֆիլիպ Ֆիլիպովիչը նայեց այն ուղղությամբ, որտեղ վառ լուսաբծերը շողում էին բութ կոշկաքթերի վրա, աչքերը կկոցեց և ասաց.

- Ի՞նչ գործի մասին էիք ցանկանում խոսել ինձ հետ:

- Ի՞նչ գործ: Շատ էլ պարզ գործ: Փաստաթուղթ է ինձ պետք, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ցնցվեց:

- Հը՜մ... Սատանա՜: Փաստաթո՛ւղթ: Իսկապե՜ս... Հը՜մ... իսկ գուցե դա որևէ կերպ հնարավոր է...,- ձայնն անվստահ ու տխուր էր հնչում:

- Ես չեմ՝ դու ես,- վստահ պատասխանեց մարդը,- ոնց կըլնի առանց փաստաթուղթ: Էդ արդեն՝ ներող կըլնեք: Դուք էլ գիտեք, մարդուն խստագույնս արգելված է առանց փաստաթուղթ գոյություն ունենալ: Նախ՝ տնային կոմիտեն...

- Ի՞նչ կապ ունի այստեղ տնային կոմիտեն:

- Ո՞նց թե՝ ինչ կապ ունի: Հանդիպում են, հարցնում են, ե՞րբ ես, ասում են, հարգելի՛ս, գրանցվելու:

- Տե՛ս, է՜, տե՛ր Աստված,- հոգնած ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- հանդիպում են, հարցնում... Պատկերացնում եմ, թե ինչ եք ասում նրանց: Բայց չէ՞ որ ձեզ արգելել եմ թրև գալ սանդղավանդակին:

- Ընչի՞, կարող է՞ տաժանակիր եմ,- զարմացավ մարդը, և իրավացիության գիտակցումը բռնկվեց նույնիսկ փողկապի սուտակի մեջ: - Էդ ի՜նչ «թրև գալ» է: Ահագին վիրավորական են ձեր խոսքերը: Ման եմ գալիս, ոնց որ բոլոր մարդիկ:

Այդ ասելով՝ նա լաքապատ կոշիկներով կտկտացրեց մանրահատակին:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը լռեց, փախցրեց հայացքը: «Ամեն դեպքում պետք է զսպեմ ինձ»,- մտածեց նա: Մոտենալով բուֆետին՝ մի շնչում մի բաժակ ջուր խմեց:

- Հրաշալի՜ է,- ավելի հանդարտ շարունակեց

նա,- բանը խոսքերը չեն: Եվ այսպես, ի՞նչ է ասում ձեր այդ սքանչելի տնային կոմիտեն:

- Ինչ պիտի ասի... Համ էլ իզուր եք սքանչելիով ուշունց տալի: Նրանք շահերն են պաշտպանում:

- Ո՞ւմ շահերը, թույլ տվեք իմանալ:

- Պարզ է, թե ում. աշխատավոր տարրի:

Ֆիլիպ Ֆիլիպովիչի աչքերը դուրս պրծան:

- Իսկ ի՞նչ է, դուք աշխատավո՞ր եք:

- Դե, պարզ բան է, որ նէպման չեմ:

- Դե լավ: Եվ այսպես, ի՞նչ է նրանց հարկավոր ձեր հեղափոխական շահերը պաշտպանելու համար:

- Պարզ է, թե ինչ՝ որ գրանցվեմ: Ասում են՝ որտե՞ղ է տեսնված, որ մարդ առանց գրանցվելու ապրի Մոսկվայում: Սա՝ մեկ: Իսկ ամենագլխավորը հաշվառման քարտն է: Ես դասալիք լինել չեմ ուզում: Համ էլ՝ միություն կա, բորսա կա...

- Թույլ տվեք հարցնել՝ որտե՞ղ եմ ձեզ գրանցելու, այս սփռոցի՞ն, թե՞ իմ անձնագրում: Վերջիվերջո, պե՞տք է հաշվի նստել դիրքի ու կացության հետ: Մի՛ մոռացեք, որ դուք... ը՛... հը՛մ... չէ՞ որ դուք, այսպես ասած, անսպասելի արարած եք, փորձարանային,- Ֆիլիպ Ֆիլիպովիչը ավելի ու ավելի անվստահ էր խոսում:

Մարդը հաղթական լռում էր:

- Լա՛վ: Ի՞նչ է, ի վերջո, պետք ձեզ գրանցելու և ընդհանրապես, ձեր այդ տնային կոմիտեի պլանի համաձայն՝ ձեզ տեղավորելու համար: Չէ՞ որ ոչ անուն ունեք, ոչ ազգանուն:

- Արդար չեք: Շատ հանգիստ կարամ իմ համար անուն ընտրեմ: Թերթում տպեցիր պրծավ-գնաց:

- Իսկ ինչպես կհրամայեք ձեզ կոչե՞լ:

Մարդը շտկեց փողկապն ու պատասխանեց.

- Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչ:

- Հիմարություն դուրս մի՛ տվեք,- խոժոռված արձագանքեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ես ձեզ հետ լուրջ եմ խոսում:

Խայթող քմծիծաղը ծռմռեց մարդու բեղիկները:

- Մի տեսակ գլուխ չեմ հանում ձեզնից,- խոսեց նա խնդուն ու իմաստավորված: - Մորս գծով չի կարելի: Թքա՛ծ, որ չի կարելի: Իսկ ձեզնից լսածս մենակ էդ է՝ «Հիմա՛ր, հիմա՛ր»: Երևում է՝ Ռեսեֆեսեռում[12] մենակ պրոֆեսորներին է թույլատրված ուշունցը:

Արյունը Ֆիլիպ Ֆիլիպովիչի գլուխը տվեց, և նա ջարդեց բաժակը, որ ուզում էր լցնել: Նորը լցնելով ու խմելով՝ մտածեց. «Մի քիչ էլ ու կսկսի դաս տալ և միանգամայն իրավացի կլինի: Ինձ չեմ կարողանում տիրապետել»:

Նա շրջվեց աթոռի վրա, չափազանցված հարգալիր խոնարհվեց ու պողպատե աննկունությամբ արտաբերեց.

- Կներե՛ք: Ձղերս քայքայված են: Ձեր անունն ինձ տարօրինակ թվաց: Որտեղի՞ց եք, հետաքրքիր է, պեղել:

---

12 Ռեսեֆեսեռ - Ռուսաստանի դաշնային սոցիալիստական հանրապետություն:

- Տնային կոմիտեն առաջարկեց: Օրացույցով որը կուզես՝ ասում են: Ես էլ ընտրեցի:

- Ոչ մի օրացույցում ոչ մի նման բան լինել չի կարող:

- Բավականաչափ տարօրինակ է,- քմծիծաղ տվեց մարդը,- որ հենց ձեր վիրակապարանում էլ կախված է:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը առանց տեղից վեր կենալու հարձակվեց պաստառների մեջ թաքնված կոճակի վրա, ու զանգի ձայնին հայտնվեց Զինան:

- Վիրակապարանի օրացո՛ւյցը:

Լռությունը ձգվում էր: Երբ Զինան օրացույցը ձեռքին վերադարձավ, Ֆիլիպ Ֆիլիպովիչը հարցրեց.

- Ո՞ւր է:

- Մարտի 4-ին են տոնում:

- Ցո՛ւյց տվեք... Հը՛մ... Սատանա՛... Վառարանը գցե՛ք, Զի՛նա, անմիջապե՛ս:

Զինան, վախեցած աչքերը չռելով, հեռացավ օրացույցով հանդերձ, իսկ մարդը հանդիմանությամբ օրորեց գլուխը:

- Թույլ տվեք իմանալ ազգանունը:

- Ազգանունը համաձայն եմ տոհմականն ընդունել:

- Ի՞նչ: Տոհմակա՞ն: Ո՞րը հատկապես:

- Շարիկով:

Աշխատասենյակում, գրասեղանի առաջ կանգնել էր տնային կոմիտեի նախագահ Շվոնդերը, հագին՝ կաշվե բաճկոն: Դոկտոր Բորմենտալը նստած էր բազկաթոռի մեջ: Դոկտորի վարդագունած այտերին (նոր էր եկել դրսից) նույնպիսի շփոթված արտահայտություն էր, ինչպես՝ կողքին նստած Ֆիլիպ Ֆիլիպովիչի դեմքին:

- Իսկ ինչպե՞ս գրել,- անհամբեր հարցրեց նա:

- Ինչ կա որ,- խոսեց Շվոնդերը,- բարդ բան չի: Վկայական գրեք, քաղաքացի պրոֆեսո՛ր: Այսինքն՝ որ էսպես ու էսպես, սույնը ներկայացնողը իսկապես Շարիկով Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչն է, ծնված... հը՛մ... իմացար, ձեր բնակարանում:

Տարակուսած Բորմենտալը իրար եկավ բազկաթոռի մեջ: Ֆիլիպ Ֆիլիպովիչը քաշքշեց բեղը:

- Հը՛մ... գրո՛ղը տանի: Ավելի հիմար բան անհնար է պատկերացնել: Նա ոչ մի տեղ էլ չի ծնվել, այլ պարզապես... դե, մի խոսքով...

- Դա ձեր խնդիրն է,- խաղաղ չարախնդաց Շվոնդերը,- ծնվել է, թե չի ծնվել: Ընդհանրապես և ընդհանուր առմամբ, դուք եք, չէ՞, փորձն արել, պրոֆեսո՛ր: Ու հենց դուք էլ ստեղծել եք քաղաքացի Շարիկովին:

- Եվ շատ հեշտ ու հասարակ,- հաչաց Շարիկովը գրապահարանի կողմից: Նա զննում էր հայելային անդունդում արտացոլվող փողկապը:

- Ես շատ կխնդրեի ձեզ,- չորեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- չմիջամտել խոսակցությանը: Իզուր եք ասում «շատ հեշտ ու հասարակ»: Դա այնքան էլ հեշտ չէր:

- Բայց ո՞նց չխառնվեմ,- նեղացավ Շարիկովը:

Շվոնդերն անմիջապես պաշտպանեց նրան.

- Ներեցեք, պրոֆեսո՛ր, քաղաքացի Շարիկովը միանգամայն իրավացի է: Իր իրավունքն է՝ մասնակցել սեփական ճակատագրի քննարկմանը, և հատկապես երբ խոսքը վերաբերում է փաստաթղթերին: Փաստաթուղթն ամենակարևոր բանն է աշխարհում:

Այդ պահին հեռախոսի խլացնող ղողանջն ընդհատեց խոսակցությունը: Ֆիլիպ Ֆիլիպովիչը խոսափողի մեջ ասաց «այո», հետո կարմրտակեց ու ճչաց.

- Խնդրում եմ՝ դատարկ բաներով ինձ չանհանգստացնել: Ձեր ի՞նչ գործն է:- Եվ ընկալուչը շխկացրեց հեռախոսի եղջյուրիկներին:

Երկնագույն ցնծություն սփռվեց Շվոնդերի դեմքին:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը շառագունելով գոռաց.

- Մի խոսքով, վերջացնե՛նք:

Նա նոթատետրից մի թերթիկ պոկեց և արագ մի քանի բառ գրելով՝ զայրալից կարդաց.

- «Սույնով հավաստում եմ...»: Սատանան գիտի, թե ինչ է... Հը՛մ... «Սույնը ներկայացնողը՝ մարդ, որն ստացվել է լաբորատոր փորձարարությամբ, գլխուղեղի վիրահատության միջոցով, փաստաթղթերի կարիք ունի»... Սատանա՛ն տանի: Ես ընդհանրապես դեմ եմ այդ ապուշ փաստաթղթերին: Ստորագրություն՝ «պրոֆեսոր Պրեոբրաժենսկի»:

- Բավական տարօրինակ է, պրոֆեսո՛ր,- վիրա-

վորվեց Շվոնդերը,- ինչպե՞ս եք կարողանում փաստաթղթերն ապուշ կոչել: Ես չեմ կարող շենքում թույլատրել անփաստաթուղթ կենվորի բնակությունը, այն էլ՝ միլիցիայում զինվորական հաշվառման չվերցված: Իսկ եթե պատերա՞զմ սկսվի իմպերիալիստական գիշատիչների հետ:

- Ես ոչ մի դեպքում կռիվ չեմ գնա,- հանկարծ մռայլ կլանչեց Շարիկովը:

Շվոնդերը շփոթվեց, բայց արագ հավաքեց իրեն և հարգալիր դիմեց նրան.

- Դո՛ւք, քաղաքացի՛ Շարիկով, վերին աստիճանի անգիտակից եք խոսում: Զինվորական հաշվառման պե՛տք է կանգնել:

- Հաշվառման կկագնեմ, բայց կռիվ գնալ... առը՛ս կտեսնեք,- ժապավենակապը շտկելով՝ արհամարհանքով նետեց Շարիկովը:

Եկավ Շվոնդերի շփոթվելու ժամանակը: Պրեոբրաժենսկին չարացած ու տխուր նայեց Բորմենտալին. «Տեսնո՞ւմ եք սրանց բարոյականությունը»: Բորմենտալը բազմանշանակ գլխով արեց:

- Ես ծանր վիրավորված եմ վիրահատության ժամանակ,- խոժոռ վնգվնգաց Շարիկովը,- նայի ինչ օրն են գցել,- և ցույց տվեց գլուխը: Ճակատին լայնակի ձգվում էր թարմ վիրահատական սպին:

- Դուք անարխիստ-ինդիվիդուալի՞ստ եք,- հոնքերը քշտելով՝ հարցրեց Շվոնդերը:

- Ինձ սպիտակ տոմս է հասնում,- արտահայտվեց Շարիկովն ի պատասխան:

- Դե ինչ, լա՛վ, դա առայժմ կարևոր չէ,- պատասխանեց զարմացած Շվոնդերը,- փաստն այն է, որ մենք պրոֆեսորի վկայականը կուղարկենք միլիցիա, և ձեզ փաստաթուղթ կտան:

- Գիտե՞ք ինչ, ը՛...,- հանկարծ ընդհատեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, որին ակնհայտորեն ինչ-որ միտք էր չարչարում,- դուք շենքում ազատ սենյակ չէի՞ք ունենա: Ես համաձայն եմ գնել:

Դեղին կայծեր հայտնվեցին Շվոնդերի շագանակագույն աչքերում:

- Ոչ, պրոֆեսո՛ր, ցավո՛ք սրտի: Ու չի նախատեսվում:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը սեղմեց շրթունքներն ու ոչինչ չասաց: Նորից խլացուցիչ զնգաց հեռախոսը: Ֆիլիպ Ֆիլիպովիչը ոչ մի հարց չտալով, լուռումունջ, ընկալուչն այնպես շպրտեց եղջյուրիկներին, որ այն մի փոքր պտտվելով՝ կախվեց երկնագույն լարից: Բոլորը ցնցվեցին: «Նյարդայնացել է ծերուկը»,- մտածեց Բորմենտալը, իսկ Շվոնդերը, աչքերը շողացնելով, հրաժեշտ տվեց ու դուրս եկավ:

Շարիկովը, սապոգները ճռճռացնելով, հետևեց նրան:

Պրոֆեսորը մենակ մնաց Բորմենտալի հետ: Մի փոքր լռելով՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչը կամաց օրորեց գլուխն ու ասաց.

- Սա մղձավանջ է, ազնիվ խո՛սք: Տեսնո՞ւմ եք: Երդվում եմ, թանկագի՛ն դոկտոր, ես այս երկու շա-

բաթվա ընթացքում ավելի տառապեցի, քան վերջին 14 տարիներին: Այ քեզ տի՜պ...

Հեռվում խուլ ճայթեց ապակին, հետո կանացի ծղրտոց լսվեց և անմիջապես էլ մարեց: Չար ոգին խփվեց միջանցքի պաստառներին՝ անցնելով դեպի վիրակապարան, այնտեղ ինչ-որ բան դղրդացրեց և անմիջապես թռավ հետ: Շխկացին դռները, և խոհանոցից արձագանքեց Դարյա Պետրովնայի հեռու ճիչը: Ապա Շարիկովը վնգստաց:

- Աստվա՜ծ իմ, սա ի՞նչ է,- գոռաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ նետվելով դեպի դռները:

- Կատո՜ւ,- գլխի ընկավ Բորմենտալը ու դուրս թռավ նրա հետևից: Նրանք միջանցքով սլացան նախասրահ, այնտեղից՝ զուգարան ու լոգարան տանող միջանցքը: Խոհանոցից դուրս թռավ Զինան և քիթ քթի եկավ Ֆիլիպ Ֆիլիպովիչի հետ:

- Քանի՜ անգամ եմ ասել՝ այստեղ ոչ մի կատու չլինի,- կատաղած գոռաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Ո՞ւր է: Իվա՛ն Առնոլդովիչ, ընդունարանում, Աստծու սիրուն, հանգստացրեք հիվանդներին:

- Լոգարանո՛ւմ, լոգարանում է անիծված սատանան,- շնչակտուր բղավեց Զինան:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ընկավ լոգարանի դռան վրա, բայց այն տեղի չէր տալիս:

- Անմիջապես բացե՛լ:

Ի պատասխան՝ կողպված լոգարանում ինչ-որ բան ցատկոտեց պատերի վրայով, դղրդոցով թափ-

վեցին թասերը, Շարիկովի վայրի ձայնը խուլ մռնչաց դռան ետևում.

- Տեղո՜ւմ կսպանեմ...

Խողովակներում աղմկեց ջուրը: Ֆիլիպ Ֆիլիպովիչը ողջ մարմնով ընկավ դռան վրա ու փորձեց պոկել տեղից: Խոհանոցի շեմին հայտնվեց կարմրած, աղճատված դեմքով Դարյա Պետրովնան: Հետո հենց առաստաղի տակ որդանման ճաք տվեց լոգարանի ու խոհանոցի արանքի երկարուկ ապակին, երկու բեկոր պոկվեց, դրանց հետևից դուրս պրծավ վագրամորթու օղակներով, վզին երկնագույն ժապավեն կապած, քաղաքապահ ոստիկանի նման մի հսկա կատու: Ընկավ ուղիղ սեղանին՝ երկարավուն սկուտեղի մեջ, ու երկու կես արեց, սկուտեղից թռավ հատակին, պտտվեց երեք թաթի վրա, իսկ աջը շարժեց, ասես պարելիս լիներ, և անմիջապես էլ նեղլիկ ճեղքով սողոսկեց դեպի հետնամուտքի սանդուղքը: Ճեղքը լայնացավ, և կատուն փոխարկվեց մի զառամյալ կերպարանքի, որ գլխաշոր էր կապել: Պառավի շրջազգեստը, որ պատված էր սպիտակ սիսեռահատերով, հայտնվեց խոհանոցում: Պառավը բութ մատով ու ցուցամատով տրորելով լխկած բերանը՝ ուռած ու հատու աչքերով հայեց խոհանոցն ու հետաքրքրասիրությամբ արտաբերեց.

- Հիսո՜ւս Աստված:

Գունատ Ֆիլիպ Ֆիլիպովիչը հատեց խոհանոցն ու ահեղաձայն հարցրեց պառավին.

- Ձեզ ի՞նչ է հարկավոր:

- Խոսացող շնիկին կուզեի տեսնեմ,- աղաչական պատասխանեց պառավն ու խաչ արեց:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ավելի գունատվեց, կիպ մոտեցավ պառավին ու խեղդվելով շշնջաց.

- Հենց այս վայրկյանիս կորեք խոհանոցից:

Պառավը նահանջեց դեպի դուռը ու նեղացած ասաց.

- Ոնց որ թե շատ կոպիտ էր, պարո՞ն պրոֆեսոր:

- Կորե՛ք, ասում եմ,- կրկնեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, և աչքերը կլորացան բվի աչքերի պես: Նա անձամբ շխկացրեց դուռը պառավի ետևից:- Դարյա Պետրովնա, չէ՞ որ խնդրե՛լ էի:

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- հուսակտուր պատասխանեց Դարյա Պետրովնան՝ բռնցքելով ձեռքերը,- ի՛նչ կարող եմ անել: Ժողովուրդը օրուգիշեր հեղեղի պես գալիս ու գալիս է, հենց գլուխդ առ ու փախի:

Ձուրը լոգարանում մռնչում էր խուլ ու ահեղաձայն, բայց ուրիշ ձայներ այլևս չէին լսվում: Մտավ դոկտոր Բորմենտալը:

- Իվա՛ն Առնոլդովիչ, թախանձագին խնդրում եմ... հը՛մ... քանի՞ հիվանդ կա այնտեղ:

- Տասնմեկ, - պատասխանեց Բորմենտալը:

- Ճանապարհեք բոլորին, այսօր չեմ ընդունելու:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը մատնոսկրով թակեց դուռն ու բղավեց.

- Բարեհաճեք անհապաղ դուրս գալ: Ինչո՞ւ եք փակվել:

- Հո՛ւ-հո՛ւ-հո՛ւ,- խուլ ու խղճալի պատասխանեց Շարիկովի ձայնը:

- Ի՞նչ, գրո՛ղը տանի... Չե՛մ լսում: Փակե՛ք ջուրը:

- Հա՛ֆ, հա՛ֆ...

- Փակե՛ք ջուրը, վերջապես: Նա այնտեղ ինչ է արել չեմ հասկանում...,- մոլեգնած ճչաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Զինան ու Դարյա Ֆիլիպովնան, դուռը բացելով, դուրս էին նայում խոհանոցից: Ֆիլիպ Ֆիլիպովիչը նորից դղրդոցով բռնցքահարեց դուռը:

- Հրե՛ն, հրե՛ն,- խոհանոցից կանչեց Դարյա Պետրովնան:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը նետվեց այդ կողմը: Առաստաղի տակ, ջարդված ապակիով պատուհանի շրջանակում հայտնվեց ու դուրս ցցվեց Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչի մռութը: Ծամածռված էր, աչքերն՝ արտասվաթոր, իսկ քթի երկայնքով թարմ արյունից բոսորագույնին էր տալիս քերծվածքը:

- Խելագարվե՞լ եք,- հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ինչո՞ւ դուրս չեք գալիս:

Շարիկովը սարսափած ու տխուր նայեց շուրջը և պատասխանեց.

- Դուռը կողպվել է:

- Բա՛ց արեք: Ի՞նչ է, երբեք կողպե՞ք չեք տեսել:

- Չի բացվում ախր, անիծվա՛ծը,- վախեցած պատասխանեց Պոլիգրաֆը:

- Տե՛ր Աստված, ապահովիչն է գցել,- ճչաց Զինան ու իրար զարկեց ձեռքերը:

- Այնտեղ մի փոքրիկ կոճակ կա,- փորձելով հաղթահարել ջրի ձայնը՝ բղավեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- սեղմեք ներքև... ներքև սեղմեք, ներքև՜:

Շարիկովը անհետացավ ու քիչ անց կրկին հայտնվեց պատուհանի մեջ:

- Ոչ մի գրող էլ էլ չի էրևում,- հաչաց այնտեղից:

- Ախր լո՜կսը վառեք: Լրիվ գազազե՜լ է:

- Անիծված կատվացեղը լամպը ջարդեց,- պատասխանեց Շարիկովը,- էն է ուզում էի սրիկայի ոտերից չանթեմ, ջուրը բաց թողի, հիմա էլ տեղը չեմ գտնում:

Բոլոր երեքն էլ իրար զարկեցին ձեռքերն ու քարացան այդ դիրքում:

Հինգ րոպե անց Բորմենտալը, Զինան և Դարյա Պետրովնան դռան տակ կողք կողքի նստել էին խողովակաձև ոլորած թաց գորգին ու հետույքներով այն սեղմում էին դռան տակի ճեղքին, իսկ բարապան Ֆյոդորը, Դարյա Պետրովնայի պսակի մոմը վառած, փայտե ելարանով բարձրացավ ու խցկվեց օդանցքը: Քամակը, գորշ վանդակավոր շալվարի մեջ, առկայծեց ու անհետացավ անցքի մեջ:

- Դո՜ւ... Հո՜ւ-հո՜ւ,- ինչ-որ բան էր գոռում Շարիկովը ջրի մռնչոցի միջից:

Լսվեց Ֆյոդորի ձայնը:

- Ֆիլի՜պ Ֆիլիպովիչ, մեկ է՝ պիտի բացենք, թող դեն քաշվեն, խոհանոցից կքամենք կթափենք:

- Բաց արեք,- բարկաձայն կանչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Եռյակը վեր կացավ գորգի վրայից, լոգարանից սկսեցին սեղմել դուռը, և համարյա անմիջապես ջուրը հորդեց դեպի փոքրիկ միջանցքը: Այնտեղ բաժանվեց երեք մասի, ուղիղ՝ դեպի դիմացի զուգարանը, աջ՝ դեպի խոհանոց և ձախ՝ դեպի նախասրահ: Չփչփացնելով ու ցատկոտելով՝ Զինան փակեց նախասրահի դուռը: Մինչև կոճերը ջրի մեջ՝ դուրս եկավ Ֆյոդորը, որը, չգիտես ինչու, ժպտում էր և ասես մոմլաթ հագած լիներ՝ ոտից գլուխ թաց էր:

- Մի կերպ բերանը փակեցի, ուժեղ ճնշում է,- բացատրեց նա:

- Ո՞ւր է այդ...,- հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը և անեծքներ տեղալով վեր քաշեց ոտքը:

- Վախում է դուրս գա,- հիմարավուն ժպիտով պատասխանեց Ֆյոդորը:

- Ծեծելու ե՞ք, հերի՛կ,- լոգարանից լսվեց Շարիկովի լացկան ձայնը:

- Ապո՛ւշ,- կարճ արձագանքեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Զինան ու Դարյա Ֆիլիպովնան, փեշերը մինչև ծնկները քշտած, սրունքները՝ մերկ, և բարապանը՝ Շարիկովի հետ, բոկոտն, շալվարները քշտած, թաց լաթերը շփշփացնում էին խոհանոցի հատակին, մզում կեղտոտ դույլերի ու կոնքի մեջ: Մոռացության տրված սալօջախը գվվում էր: Ջուրը դռան տակով թափանցում էր ուղիղ աստիճանահարթակ ու թափվում նկուղ:

Բորմենտալը, ոտքերի ծայրերին ձգված, կանգնել էր մանրահատակին առաջացած խոր ջրափոսի մեջ ու բանակցում էր կիսաբաց, բայց շղթայիկը վրան դռան արանքից:

- Այսօր ընդունելություն չի լինի, պրոֆեսորը վատառողջ է: Բարի եղեք հետ քաշվել դռնից, մեզ մոտ խողովակ է պայթել:

- Իսկ ե՞րբ ընդունելություն կլինի,- իրենն էր պնդում ձայնը դռան ետևից:- Ես միայն մի րոպեով...

- Չեմ կարող,- Բորմենտալը ոտնաձայրերից իջավ կրունկներին,- պրոֆեսորը պառկած է, խողովակն էլ պայթել է: Խնդրում եմ՝ վաղը: Չի՞նա: Սիրելի՛ս: Այստեղից հավաքեք, թե չէ կլցվի շքասանդուղքի վրա:

- Լաթերով չի ստացվում:

- Հիմա՛, թասերով կդատարկենք,- արձագանքեց Ֆյոդորը,- հիմա՛:

Դռան զանգերը հաջորդում էին իրար, և Բորմենտալն արդեն մինչև կոճերը թաղվել էր ջրի մեջ:

- Ե՞րբ է վիրահատությունը,- համառում էր ձայնը՝ փորձելով ներս սողոսկել դռան արանքից:

- Խողովակ է պայթել...

- Ես կարող եմ և կրկնակոշիկներով...

Դռան ետևում կապտավուն ուրվապատկերներ հայտնվեցին:

- Չի կարելի, խնդրում եմ՝ վաղը...

- Բայց ես հերթագրված եմ:

- Վա՛ղը: Ջրագիծը... Աղե՛տ է...

Ֆյոդորը դոկտորի ոտքերի տակից գավաթով արագ քամում էր ջուրը, իսկ ճանկռտված Շարիկովը նոր ձև գտավ: Գլանաձև փաթաթեց մի լաթի հսկա կտոր, փորի վրա պառկեց հատակին ու ջուրը նախասրահից նորից մղեց դեպի զուգարան:

- Ի՞նչ ես, սատանա՛, քշում տնով մեկ,- զայրանում էր Դարյա Պետրովնան,- թափի կոնքի մեջ:

- Ինչ կոնք, է՛,- ձեռքերով պղտոր ջուրը որսալով՝ պատասխանում էր Շարիկովը,- դուրս է պրծնում շքամուտք:

Միջանցքից կրճտոցով ներս լողաց փոքրիկ նստարանը, որի վրա, կապույտ շերտերով գուլպաները հագին, հավասարակշռություն պահելով՝ տեղավորվել էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Իվա՞ն Առնոլդովիչ, վե՛րջ տվեք այցելուներին պատասխանելուն: Անցեք ննջարան՝ ձեզ կոշիկներ տամ:

- Ոչի՞նչ, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, դատարկ բան է:

- Գոնե կրկնակոշիկ հագեք:

- Բան չկա: Մեկ է, արդեն ոտքերս թաց են:

- Ախ, Աստվա՛ծ իմ,- նեղվում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Բայց ի՞նչ վնասատու անասուն է,- հանկարծ արձագանքեց Շարիկովը ու չորեքթաթ ներս անցավ՝ արգանակի թասը ձեռքին:

Բորմենտալը շխկոցով փակեց դուռը ու չդիմացավ՝ ծիծաղեց: Ֆիլիպ Ֆիլիպովիչի ռունգերը փքվեցին, ակնոցը բոցկլտաց:

- Այդ ո՞ւմ մասին եք ասում,- իր բարձունքից հարցրեց Շարիկովին:- Թույլ տվեք իմանալ:

- Կատվի մասին: Ի՜նչ սրիկան է,- հայացքը փախցնելով՝ պատասխանեց Շարիկովը:

- Գիտե՞ք, Շա՛րիկով,- շունչը տեղը բերելով՝ արձագանքեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- հաստատ ձեզնից լկտի արարած չեմ տեսել:

Բորմենտալը քթի տակ ծիծաղեց:

- Դո՛ւք,- շարունակեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ուղղակի լպիրշ եք: Ինչպե՞ս եք համարձակվում նման բան ասել: Այս ամենը դուք եք արել ու դեռ ձեզ թույլ եք տալիս... Չէ, իսկապե՛ս... Սատանան գիտի սա ինչ է:

- Շարիկո՛վ, ասացեք խնդրում եմ,- խոսեց Բորմենտալը,- դեռ ինչքա՞ն եք կատուների ետևից ընկնելու: Ամաչե՛ք: Չէ՞ որ դա այլանդակություն է: Վայրենի՛:

- Ես ի՜նչ վայրենի,- խոժոռվեց Շարիկովը,- ես ոչ մի վայրենի էլ չեմ: Անհնար է դրանց տան մեջ հանդուրժել: Դրանց ուշքումիտքը մի բան գողանալն է: Դարյայի ֆարշը լափեց: Ուզում էի դաս տամ դրան:

- Նախևառաջ ձեզ է պետք դաս տալ,- պատասխանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- դուք ձեր կերպարանքի՜ն նայեք հայելու մեջ:

- Քիչ էր մնում աչքերից զրկեր,- մռայլ արձագանքեց Շարիկովը՝ թաց ու կեղտոտ ձեռքը տանելով աչքին:

Երբ խոնավությունից մգացած հատակը մի քիչ չորացավ, բոլոր հայելիները պատվեցին բաղնիքի գոլորշիով և զանգերն էլ դադարեցին: Ֆիլիպ Ֆիլիպովիչը սեկե կարմիր կիսակոշիներով կանգնել էր նախասրահում:

- Ահա՛, սա ձեզ, Ֆյոդո՛ր:

- Մեծապես շնորհակալ եմ:

- Անմիջապես փոխեք շորերդ: Եվ ահա թե ինչ. մի բաժակ օղի խմեք Դարյա Պետրովնայի մոտ:

- Մեծապես շնորհակալ եմ,- Ֆյոդորը մի քիչ տատանվեց, ապա ասաց: - Մի բան էլ, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ: Ես շատ ներողություն եմ խնդրում, մարդու ամոթը գալիս էլ է: Մենակ թե, 7-րդ բնակարանի ապակու համար... Քաղաքացի Շարիկովը՝ քարերով...

- Կատվի վրա՞ էր քար շպրտում,- ամպի պես սևակնած հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Բանն էն է, որ՝ բնակարանի տիրոջ: Արդեն սպառնացել է, որ դատի կտա:

- Գրո՛ղը տանի:

- Շարիկովը խստել էր դրանց խոհարարուհուն, սա էլ վռնդել էր: Դե, վիճվել էին...

- Աստծու սիրուն, նման բաների մասին անմիջապես հայտնեք ինձ: Որքա՞ն է պետք:

- Մեկուկե՛ս:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը երեք փայլուն հիսունանոց հանեց ու տվեց Ֆյոդորին:

- Տե՛ս, է՛, այդպիսի սրիկայի համար մեկուկես

ռուբլի,- դռների մեջ լսվեց մի խուլ ձայն,- ախր հենց ինքը...

Ֆիլիպ Ֆիլիպովիչը շրջվեց, կծեց շրթունքը, լուռումունջ վրա պրծավ Շարիկովին, դուրս մղեց ընդունարան ու բանալիով կողպեց դուռը: Շարիկովն անմիջապես սկսեց բռունցքներով դղրդացնել դուռը:

- Չհամարձակվե՛ք,- ակնհայտորեն հիվանդ ձայնով բացականչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Բայց սա իսկապես որ,- բազմանշանակ նկատեց Ֆյոդորը,- էս տեսակ լկտի կյանքումս տեսած չկամ:

Բորմենտալն ասես հայտնվեց գետնի տակից:

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, խնդրում եմ՝ մի հուզվեք:

Եռանդուն էսկուլապը բացեց ընդունարանի դուռը, և այնտեղից լսվեց նրա ձայնը.

- Դուք, ի՞նչ է, պանդոկո՞ւմ եք, այո՞:

- Այ էդպե՛ս...,- հավելեց վճռական Ֆյոդորը,- այ էդպես... Մի հատ էլ ականջատակին որ տա՛ն...

- Այդ ի՛նչ եք ասում, Ֆյոդո՛ր,- տխրաձայն փնչացրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Ի՞նչ ասեմ, դուք եք ափսոսս գալիս, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ:

VII

– Ո՛չ, ո՛չ և ոչ,- պնդեց Բորմենտալը:- Բարի եղեք՝ անձեռոցիկը:

- Սա ի՞նչ բան է, Աստված վկա,- դժգոհ մռթմռթաց Շարիկովը:

- Շնորհակալ եմ, դոկտո՛ր,- փաղաքուշ ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- թե չէ արդեն հոգնեցի դիտողություն անելուց:

- Մեկ է, առանց անձեռոցիկի թույլ չեմ տա ուտել: Ձի՛նա, վերցրեք Շարիկովի մայոնեզը:

- Ինչպե՞ս թե՝ «վերցրեք»,- սրտնեղեց Շարիկովը:- Հենց հիմա կկապեմ:

Ձախ ձեռքով նա ափսեն պաշտպանեց Ձինայից, իսկ աջով անձեռոցիկը խցկեց օձիքի տակ ու նմանվեց վարսավիրանոցի հաճախորդի:

- Եվ պատառաքաղով, խնդրում եմ,- ավելացրեց Բորմենտալը:

Շարիկովը խոր հոգոց հանեց և թանձր սոուսի մեջ սկսեց որսալ թառափի կտորները:

- Ես մի հատ էլ օղի խմեմ,- հարցական հայտարարեց նա:

- Շատ չի՞ լինի,- հետաքրքրվեց Բորմենտալը:- Վերջին ժամանակներս չափից դուրս շատ եք տեղ տալիս օղուն:

- Ինչ է, խնայո՞ւմ եք,- հարցրեց Շարիկովն ու խոժոռվեց:

- Հիմարություն եք ասում...,- բարկացած միջամտեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, սակայն Բորմենտալն ընդհատեց նրան:

- Մի՛ անհանգստացեք, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, ես ինքս: Դո՛ւք, Շարիկով, անհեթեթություն եք դուրս տալիս և ամենից զայրացնողն այն է, որ խոսում եք անառարկելիորեն ու վստահ: Ես օղին, իհարկե, չեմ ափսոսում, առավել ևս, որ իմը չէ, այլ Ֆիլիպ Ֆիլիպովիչինը: Պարզապես դա վնասակար է: Սա՝ մեկ, իսկ երկրորդը՝ առանց օղու էլ ձեզ անվայել եք պահում:

Բորմենտալը գլխով արեց սոսնձաթղթված բուֆետի կողմը:

- Ձինո՛ւշա, խնդրում եմ՝ ինձ մի կտոր էլ ձուկ տվեք,- ասաց պրոֆեսորը:

Շարիկովն այդ ընթացքում ձգվեց դեպի փոքրիկ գրաֆինը և ծուռ նայելով Բորմենտալին՝ լցրեց ըմպանակը:

- Մյուսներին նույնպես պետք է առաջարկել,- ասաց Բորմենտալը,- և այսպես, նախ՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչին, հետո՝ ինձ, և վերջում՝ ձեզ:

Շարիկովի բերանը ծամածռվեց հազիվ նկատելի ծաղրական ժպիտից, և նա օղին լցրեց ըմպանակները:

- Ոնց որ շքերթի ընկնեք,- խոսեց նա,- անձեռոցիկը՝ էս կողմ, փողկապը՝ էն կողմ, հետն էլ՝ «ներեցեք» ու «խնդրեմ-մերսի», իսկ էնպես, որ իսկական ու մարդավարի ընկի, էդ մեկը՝ չէ՛: Հենց ձեզ էլ չարչարում եք, ոնց որ ցարական ռեժիմի ժամանակ:

- Իսկ «իսկականն ու մարդավարին» ինչպե՞ս է լինում, թույլ տվեք հարցնել:

Շարիկովը չպատասխանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչին, այլ բարձրացրեց ըմպանակն ու արտաբերեց.

- Դե՛, բոլորին ուզում եմ, որ...

- Ձեզ նույնպես,- որոշակի հեգնանքով արձագանքեց Բորմենտալը:

Շարիկովն ըմպանակի պարունակությունը նետեց կոկորդը,

կնճռոտվեց, հացի պատառը տարավ քթին, հոտոտեց, ապա կուլ տվեց, ընդ որում՝ աչքերն արցունքոտվեցին:

- Կենսափո՛րձը,- հանկարծ հատու և մի տեսակ ինքնամոռաց ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Բորմենտալը զարմացած նայեց.

- Ներողությո՞ւն...

- Կենսափո՛րձը,- կրկնեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը ու դառնացած օրորեց գլուխը:

Բորմենտալը արտակարգ հետաքրքրությամբ նայեց Ֆիլիպ Ֆիլիպովիչի աչքերի մեջ:

- Կարծո՞ւմ եք, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ:

- Կարծելու բան չկա. համոզվա՛ծ եմ:

- Մի՞թե...,- սկսեց Բորմենտալը ու լռեց՝ նայելով Շարիկովին:

Սա կասկածամտորեն խոժոռվեց:

- Später[13],- կամացուկ ասց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

13 Հետո (գերմ.):

- Gut[14],- արձագանքեց օգնականը:

Զինան մատուցեց հնդկահավը: Բորմենտալը Ֆիլիպ Ֆիլիպովիչի համար կարմիր գինի լցրեց և Շարիկովին էլ առաջարկեց:

- Ես չեմ ուզում: Ավելի լավ է օղի խմեմ:- Դեմքը փայլում էր, ճակատին քրտինք էր դուրս տվել, տրամադրությունը բարձրացավ: Ֆիլիպ Ֆիլիպովիչն էլ գինուց հետո ավելի բարեհոգի էր: Աչքերը պարզվեցին, բարեհաճ էր նայում Շարիկովին, որի սև գլուխը անձեռոցիկի մեջ նստել էր, ինչպես ճանճը՝ թթվասերի:

Բորմենտալը, սակայն, կշտանալով գործելու հակում դրսևորեց:

- Դե, ի՞նչ ենք անելու այս երեկո,- հարցրեց Շարիկովին:

Սա ճպճպացրեց աչքերը, պատասխանեց.

- Ամենից լավը՝ որ կրկես գնանք:

- Ամեն երեկո՝ կրկես,- բարեհոգի նկատեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- բավական տաղտկալի է, իմ կարծիքով: Ձեր տեղը ես գոնե մի անգամ թատրոն կգնայի:

- Ես թատրոն չեմ գնա,- քամահրանքով արձագանքեց Շարիկովը և խաչակնքեց բերանը:

- Սեղանի մոտ զկռտալը փակում է մյուսների ախորժակը,- մեքենայաբար տեղեկացրեց Բորմենտալը:- Ներեցեք... Իսկ ինչո՞վ, ասեք խնդրեմ, ձեզ դուր չի գալիս թատրոնը:

Շարիկովը նայեց դատարկ ըմպանակի մեջ, ինչ-

14 Լավ (գերմ):

պես հեռադիտակով կնայեր, միտք արեց ու փքեց շրթունքները.

- Հիմար բան է... Խոսո՛ւմ են, խոսո՛ւմ են... Տեղով մեկ հակահեղափոխություն...

Ֆիլիպ Ֆիլիպովիչը հետ ընկավ գոթական թիկնակին և այնպես քրքջաց, որ բերանում շողշողաց ոսկե ցանկապատը: Բորմենտալը միայն գլուխն օրորեց;

- Գուցե որևէ բան կարդայիք,- առաջարկեց նա,- թե չէ, գիտե՞ք...

- Առանց էն էլ կարդում եմ, կարդո՛ւմ եմ...,- պատասխանեց Շարիկովը և հանկարծ արագ ու գիշատչորեն իր համար կես բաժակ օղի լցրեց:

- Չի՛նա,- տագնապած կանչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- վերցրու, զավա՛կս, օղին: Այլևս հարկավոր չէ: Եվ ի՞նչ եք կարդում:

Նրա մտքում հանկարծ մի պատկեր երևութացավ, անմարդաբնակ կղզի, արմավենի, գազանի մորթի հագած ու թասակ դրած մարդ: «Պետք է Ռոբինզոնը...»:

- Է՛դ... Ո՛նց էր... Էնգելսի նամակագրությունը... ո՛նց էր էդ սատանի անունը... Կաուցկու հետ:

Կեսճանապարհին կանգ առավ Բորմենտալի պատառաքաղը, որի վրա մի կտոր սպիտակ միս կար, իսկ Ֆիլիպ Ֆիլիպովիչը թափեց գինին: Շարիկովն այդ ընթացքում առիթից օգտվելով կուլ տվեց օղին:

Ֆիլիպ Ֆիլիպովիչն արմունկներով հենվեց սեղանին, նայեց Շարիկովին ու հարցրեց.

- Թույլ տվեք գիտենալ, իսկ ի՞նչ կարող եք ասել ընթերցածի կապակցությամբ:

Շարիկովը թոթվեց ուսերը:

- Դե՛, համաձայն չե՛մ ես:

- Ո՞ւմ հետ: Էնգելսի՞, թե՞ Կաուցկու:

- Էրկուսի հետ էլ,- պատասխանեց Շարիկովը:

- Հրաշալի՛ է, Աստվա՛ծ վկա: Բոլորին, ով կասի, թե մի ուրիշ... Իսկ ձեր կողմից ի՞նչ կառաջարկեիք:

- Բայց ի՞նչ առաջարկես... Մի գլուխ գրո՛ւմ են ու գրո՛ւմ... կոնգրես, ինչ-որ գերմանացիներ... Գլուխս ուռում է: Վերցնես ամբողջն ու բաժանես...

- Ես այդպես էլ գիտեի,- բացականչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ ափը շխկացնելով սփռոցին,- հենց այդպես էլ ենթադրում էի:

- Միջոցն է՞լ գիտեք,- հետաքրքրված հարցրեց Բորմենտալը:

- Ի՞նչ միջոց,- բացատրեց օղուց զրուցասեր դարձած Շարիկովը,- բարդ բան չի: Բա չէ՛, մեկը մեն-մենակ նստել է յոթ սենյակում, 40 հատ շալվար ունի, մեկելը դեսուդեն է ընկնում, որ աղբանոցից ուտելիք ճարի:

- Յոթ սենյակ ասելով՝ անշուշտ ի՞նձ եք ակնարկում,- աչքերը գոռոզաբար կկոցելով՝ հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Շարիկովը կծկվեց ու սսկվեց:

- Դե ինչ, լա՛վ, ես դեմ չեմ բաժանելուն: Դոկտո՛ր, դուք երեկ քանիսի՞ն մերժեցիք:

- 39 հոգու,- արագ պատասխանեց Բորմենտալը:

- Հը՛մ... 390 ռուբլի: Դե, մեղքը բաժանենք երեք տղամարդկանց վրա: Զինային ու Դարյա Պետրովնային չենք հաշվի: Ձեզնից, Շարիկո՛վ, 130 ռուբլի: Բարի եղեք մուծել:

- Լա՛վ գործ է,- վախեցած պատասխանեց Շարիկովը,- էդ ընչի՞ համար:

- Ծորակի ու կատվի,- հանկարծ մռնչաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ դուրս գալով հեգնոտ հանդարտության վիճակից:

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- տագնապած ձայնեց Բորմենտալը:

- Սպասե՛ք: Այլանդակությա՞ն համար, որ սարքեցիք և որի շնորհիվ տապալեցիք ընդունելությունը: Անտանելի՜ բան է: Մարդը նախամարդու պես ցատկոտում է բնակարանում, պոկում ծորակը: Ո՞վ է սպանել տիկին Պոլասուխերի կատվին: Ո՞վ...

- Դո՛ւք, Շարիկով, երրորդ օրը կծել եք տիկնոջը սանդուղքների վրա:

- Սպասե՛ք...,- մռնչաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Ախր մռութիս տվեց,- ծղրտաց Շարիկովը,- մռութս հո պետական չի՞:

- Որովհետև կուրծքն էիք կսմթել,- ճչաց Բորմենտալը՝ գավաթը շուռ տալով,- դուք կանգնած եք...

- Դուք կանգնած եք զարգացման ամենաստորին աստիճանին,- ավելի բարձր բղավեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- դուք դեռևս ձևավորվող, մտավոր առումով

թույլ զարգացած արարած եք, ձեր բոլոր արարքները զուտ գազանային են, և համալսարանական կրթությամբ երկու անձանց ներկայությամբ ձեզ թույլ եք տալիս միանգամայն աններելի լպիրշությամբ տիեզերական չափերի և տիեզերաչափ հիմարության ինչ-որ խորհուրդներ հրամցնել, թե ինչպես պետք է բաժանել ամեն ինչ... միևնույն ժամանակ խժռում եք ատամի փոշին...

- Երրորդ օրը,- հաստատեց Բորմենտալը:

- Եվ այսպե՛ս,- որոտում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ձեր ականջին օղ արեք, ի դեպ, ինչո՞ւ եք վրայից մաքրել ցինկի քսուքը, որ պիտի լռեք ու լսեք՝ ինչ ձեզ ասում են: Պիտի սովորեք և աշխատեք դառնալ սոցիալական հասարակության գոնե փոքրիշատե ընդունելի անդամ: Ի դեպ, ո՞ր սրիկան է ձեզ տվել այդ գրքույկը:

- Ձեր ասելով բոլորը հենց սրիկա՛ են,- վախեցած պատասխանեց երկկողմանի հարձակումից շշված Շարիկովը:

- Կռահու՛լմ եմ, թե ով...,- չարացած շառագունելով՝ բղավեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Դե, ինչ կա որ... Դե, Շվոնդերն է տվել: Ոչ էլ սրիկա է... Որ ես զարգանամ...

- Տեսնում եմ, թե ինչպես եք զարգանում Կաուցկուց հետո,- դեղնելով՝ ծղրտաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը ու մոլեգնած սեղմեց պատի կոճակը:- Այսօրվա դեպքը դա լավագույնս է հաստատում: Ձի՛նա:

- Զի՜նա,- կանչեց Բորմենտալը:

- Զի՜նա,- գոռաց վախեցած Շարիկովը:

Ներս վազեց գունատված Զինան:

- Զինա, այնտեղ, ընդունարանում... Այնտե՞ղ է:

- Ընդունարանում,- խոնարհ պատասխանեց Շարիկովը,- արջասպի պես կանաչ:

- Կանաչ գրքույկ է...

- Դե, հիմի կվառե՜ն,- հուսահատ ճչաց Շարիկովը,- պետական է, ախր, գրադարանից:

- Նամակագրություն է կոչվում... ի՞նչ էր անունը... Էնգելսի... այդ սատանայի հետ... Ուղիղ վառարա՛նը...

Զինան դուրս թռավ:

- Ես այդ Շվոնդերին կկախեի, ազնիվ խոսք, առաջին իսկ ծառից,- հնդկահավի թևը կատաղորեն խածելով՝ գոչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- նստել է այդ չքնաղ անպետքությունը չիբանի պես... Քիչ է, որ ամեն կարգի անհեթեթ պասկվիլներ է գրում թերթերում...

Շարիկովը չար ու հեգնոտ նայում էր պրոֆեսորին: Ֆիլիպ Ֆիլիպովիչն իր հերթին նրան մի ծուռ հայացք հղեց ու լռեց:

«Ա՜խ, կարծես թե այս ամենից բարի բան դուրս չի գա մեր բնակարանում»,- հանկարծ մարգարեաբար մտածեց Բորմենտալը:

Զինան կլոր սկուտեղի վրա ներս բերեց աջ թուշը շեկ, ձախը՝ վարդագույն կարկանդակն ու սրճամանը:

- Ես սա չեմ ուտի,- անմիջապես սպառնալից արհամարհանքով հայտարարեց Շարիկովը:

- Ձեզ չեն էլ առաջարկում: Բարեկիրթ եղեք: Դոկտո՛ր, խնդրեմ:

Ճաշն ավարտվեց լռության մեջ:

Շարիկովը գրպանից հանեց ճմռթված գլանակը ու սկսեց ծխել: Մի ումպ սուրճ խմելով՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչը նայեց ժամացույցին, սեղմեց ռեպետիրը, և ժամացույցը քնքշորեն ութ ու քառորդ երգեց: Ֆիլիպ Ֆիլիպովիչը սովորության համաձայն հետ ընկավ գոթական թիկնակին ու ձեռքը պարզեց սեղանիկին դրված թերթին:

- Դոկտո՛ր, խնդրում եմ նրա հետ գնաք կրկես: Միայն, Աստծո՛ւ սիրուն, նայեք՝ ծրագրում կատուներ չկա՞ն:

- Ո՞նց էլ էդ սրիկաներին կրկես են թողում,- խոժոռված ու գլուխն օրորելով՝ նկատեց Շարիկովը:

- Դրա՞նց նմաններին են ներս թողնում,- երկիմաստ արձագանքեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ի՞նչ կա ծրագրերում:

- Սոլոմոնովսկու մոտ,- սկսեց կարդալ Բորմենտալը,- ինչ-որ չորս... Յուսսեմսներ և մեռյալ կետի մարդը:

- Այդ ի՞նչ Յուսսեմսներ են,- կասկածանքով հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Աստվա՛ծ գիտի: Առաջին անգամ եմ լսում:

- Այդ դեպքում ավելի լավ է Նիկիտինների մոտ նայեք: Անհրաժեշտ է, որ ամեն ինչ հստակ լինի:

- Նիկիտինների մոտ... Նիկիտինների մոտ... Փղեր և մարդկային ճարպկության սահմանը:

- Այդպե՜ս: Ի՞նչ կարծիքի եք փղերի մասին, թանկագին Շարիկո՛վ,- անվստահ հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Սա նեղացավ:

- Ինչ է, ես չեմ հասկանում, հա՞: Կատուն՝ ուրիշ հարց: Փղերն օգտակար կենդանիներ են,- պատասխանեց Շարիկովը:

- Դե ինչ, գերազա՜նց է: Քանի որ օգտակար են, գնացեք ու նայեք: Պետք է լսել Իվան Առնոլդովիչին: Եվ այնտեղ, բուֆետում ոչ մի խոսակցության չխառնվել: Իվա՜ն Առնոլդովիչ, խոնարհաբար խնդրում եմ Շարիկովին գարեջուր չհյուրասիրել:

Տասը րոպեից Իվան Առնոլդովիչն ու Շարիկովը, որ բադակտուց կեպի էր դրել և հագել բարձրացրած օձիքով դրապե վերարկու, գնացին կրկես: Բնակարանում լռություն տիրեց: Ֆիլիպ Ֆիլիպովիչն անցավ աշխատասենյակ: Վառեց ծանր, կանաչ թասակով լամպը, որից հսկայական աշխատասենյակը խաղաղությամբ լցվեց, ու սկսեց քայլերով չափել սենյակը: Տևական ու շոգ առկայծում էր սիգարի ծայրը՝ աղոտ կանաչ լույսով: Պրոֆեսորը ձեռքերը դրել էր անդրավարտիքի գրպանները, և ծանր խոհը ակոսում էր գիտական ու կոկիկ ճակատը: Նա ծպծպացնում էր, ատամների արանքից դնդնում «Դեպի ափերը սրբազան Նեղոսի...» և ինչ-որ բան էր քրթմնջում: Վերջա-

պես սիգարը դրեց մոխրամանում, մոտեցավ ապակյա պահարանին ու ողջ աշխատասենյակը լուսավորեց առաստաղից իջնող երեք ուժեղ լուսաշիթերով: Պահարանից, երրորդ ապակե դարակից, Ֆիլիպ Ֆիլիպովիչը հանեց մի նեղ անոթ ու խոժոռվելով՝ սկսեց զննել լույսի տակ: Թափանցիկ ու ծանր հեղուկի մեջ, առանց հատակն իջնելու, լող էր տալիս մի փոքրիկ, ճերմակ գուղձ, որ հանվել էր Շարիկի ուղեղի ընդերքից: Ուսերը թոթվելով, ծռելով շրթունքները և քմծիծաղ տալով՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչն աչքերով ուտում էր այն, ասես սպիտակ, չսուզվող գուղձիկի մեջ ցանկանար տեսնել զարմանալի իրադարձությունների պատճառը, որ գլխիվայր շրջել էին կյանքը Պրեչիստենկայի բնակարանում:

Շատ հնարավոր է, որ մեծ գիտնականը կարողացավ տեսնել՝ ինչ ցանկանում էր: Համենայնդեպս, երկար զննելով ուղեղի ելունդը՝ սրվակը դրեց պահարանը, կողպեց, բանալին դրեց ժիլետի գրպանը և գլուխն ուսերի մեջ թաղած ու ձեռքերը խոր խրելով պիջակի գրպանները՝ փլվեց բազմոցի կաշվի վրա: Ծայրը լրիվ ծամելով՝ երկար բորբոքում էր երկրորդ սիգարը, և վերջապես, կատարյալ մենության մեջ, պսակված կանաչ լույսով, ինչպես ալեհեր Ֆաուստը, բացականչեց.

– Աստվա՛ծ վկա, կարծես թե գնալու եմ դրան:

Ոչ ոք չարձագանքեց: Բնակարանում ձայները լռել էին: Օբուխովյան նրբանցքում ժամը 11-ին, ինչ-

պես հայտնի է, շարժումը ղադարում է: Ստեպ-ստեպ հեռվից լսվում էին ուշ մնացած անցորդի ոտնաձայները, որ թխկթխկում վարագույրներից այն կողմ ու մարում էին աշխատասենյակում, Ֆիլիպ Ֆիլիպովիչի մատների տակ, գրպանիկում, քնքուշ զնգում էր ռեպետիրը... Պրոֆեսորն անհամբեր սպասում էր դ-ր Բորմենտալի և Շարիկովի վերադարձին:

VIII

Հայտնի չէ՝ ինչ էր որոշել Ֆիլիպ Ֆիլիպովիչը: Հաջորդ շաբաթվա ընթացքում նա առանձնահատուկ ոչինչ չձեռնարկեց, և հնարավոր է նաև այդ անգործության պատճառով, բնակարանի կյանքը լեցուն էր իրադարձություններով:

Ջրի ու կատվի պատմությունից 6 օր անց տնային կոմիտեից Շարիկովի մոտ եկավ մի երիտասարդ, որը, ինչպես պարզվեց, կին էր, և հանձնեց փաստաթղթերը, որոնք Շարիկովն արագ դրեց գրպանն ու անմիջապես ձայն տվեց դ-ր Բորմենտալին.

- Բորմենտա՛լ:

- Ո՛չ, ո՛չ այդպես, ինձ անուն-հայրանունով դիմեք, խնդրում եմ,- աղճատված դեմքով արձագանքեց Բորմենտալը:

Հարկ է նկատել, որ այդ 6 օրվա ընթացքում վիրաբույժը հասցրել էր 8 անգամ վիճել իր սանի հետ: Եվ մթնոլորտը օբուխովյան սենյակներում հեղձուցիչ էր:

- Ուրեմն ինձ էլ անուն-հայրանունով դիմեք,- միանգամայն տրամաբանական պատասխանեց Շարիկովը:

- Ո՛չ,- դռների մեջ որոտաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ես թույլ չեմ տա իմ բնակարանում ձեզ դիմել նման անուն-հայրանունով: Եթե չեք ուզում ձեզ մտերմավար «Շարիկով» ասեն, և՛ ես, և՛ դոկտոր Բորմենտալը ձեզ կկոչենք «պարոն Շարիկով»:

- Ես պարոն չեմ, պարոնները Փարիզում են,- հաչաց Շարիկովը:

- Շվոնդերի աշխատա՞նքն է,- գոչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը: - Դե լա՛վ, ես այդ սրիկայի դասը կտամ: Իմ բնակարանում պարոններից բացի ուրիշ մեկը չի՛ լինելու, քանի դեռ այստեղ եմ: Հակառակ դեպքում՝ կամ ես, կամ դուք կհեռանաք այստեղից: Այսօր թերթերում հայտարարություն կտամ և հավատացեք՝ սենյակ կգտնեմ:

- Ու ես էլ էդքան հիմար եմ, որ գնամ էստեղից,- շատ հստակ պատասխանեց Շարիկովը:

- Ինչպե՞ս թե,- հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, ու դեմքն այնպես աղճատվեց, որ Բորմենտալը մոտ վազեց և զգույշ ու տագնապած բռնեց թևը:

- Գիտե՞ք ինչ, լկտիություն մի արեք, մսյո՛ Շարիկով:- Բորմենտալի ձայնը բարձր էր ու սպառնալից: Շարիկովը նահանջեց, գրպանից դուրս քաշեց երեք թուղթ՝ կանաչ, դեղին ու ճերմակ, և մատով խթեց դրանք.

- Ահա՛: Բնակընկերության անդամ եմ, և ինձ բնակտարածություն է հատկացված հենց թիվ 5 բնակարանում, պատասխանատու վարձակալ Պրեոբրաժենսկու մոտ, 16 քառակուսի արշին[15]:- Շարիկովը միտք արեց և ավելացրեց մի բառ, որը Բորմենտալը, որպես նորույթ, մեքենայաբար արձանագրեց ուղեղում,- բարեհաճեցե՛ք:

15 Երկարության ռուսական չափ՝ 0,711 մետր:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը կծեց շրթունքները և անզգույշ նետեց.

- Երդվում եմ, որ վերջիվերջո կգնդակահարեմ այդ Շվոնդերին:

Շարիկովը չափազանց լուրջ ու սուր ընկալեց այդ բառերը, ինչն ակնհայտ երևում էր նրա աչքերից:

- Ֆիլիպ Ֆիլիպովիչ, vorsichtig[16],- փորձեց զգուշացնել Բորմենտալը:

- Դե, գիտե՞ք ինչ... եթե արդեն այսպիսի՛ ստորություն է...,- ծղրտաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը ռուսերեն:- Նկատի ունեցեք, Շա՛րիկով... պարո՞ն, եթե ձեզ նման մի լկտիություն էլ թույլ տաք, կզրկեմ ճաշից և ընդհանրապես իմ տանը սնվելուց: 16 արշինը հրաշալի է, բայց ես այդ դոդոշ թղթի համաձայն պարտավոր չեմ կերակրել, չէ՞:

Այստեղ Շարիկովը վախեցավ ու բերանբաց մնաց:

- Ես առանց սնվելու չեմ կարող,- քրթմնջաց նա,- որտե՞ղ պիտի կերակրվեմ:

- Ուրեմն ձեզ կարգին պահեք,- միաձայն հայտարարեցին էսկուլապները:

Շարիկովը ակնհայտ հանդարտվեց և այդ օրը ոչ մեկին ոչ մի վնաս չպատճառեց, բացի իրենից. օգտվելով Բորմենտալի կարճատև բացակայությունից՝ տիրացավ նրա ածելուն և այնպես կտրեց այտամկանը, որ Ֆիլիպ Ֆիլիպովիչն ու դ-ր Բորմենտալը ստիպ-

16 Զգույշ (գերմ.):

ված էին կար դնել կտրվածքին, ինչից Շարիկովը երկար ժամանակ վնգստում ու արցունք էր թափում:

Հաջորդ գիշեր պրոֆեսորի աշխատասենյակում, կանաչ կիսախավարում նստել էին երկուսով՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչը և հավատարիմ, հարազատացած Բորմենտալը: Տնեցիներն արդեն քնած էին: Ֆիլիպ Ֆիլիպովիչի հագին նրա երկնագույն խալաթն ու կարմիր կիսակոշիկներն էին, իսկ Բորմենտալը շապիկով էր և կապույտ տաբատակալներով: Բժիշկների արանքում, կլոր սեղանին, հաստափոր ալբոմի հարևանությամբ, մի շիշ կոնյակ էր դրված, փոքրիկ ափսեով կիտրոն ու սիգարների արկղիկը: Գիտնականները ծխով լցնելով ողջ սենյակը՝ տաք-տաք քննարկում էին վերջին իրադարձությունները. այդ երեկո Շարիկովը Ֆիլիպ Ֆիլիպովիչի աշխատասենյակից թռցրել էր 2 չերվոնեց, որ դրված էին ճնշանի տակ, ապա չքվել էր տնից և վերադարձել ուշ ու կատարելապես հարբած: Դա իբր քիչ էր, նրա հետ հայտնվել էին նաև 2 անհայտ անձնավորություն, որոնք աղմկում էին շքասանդուղքին՝ ցանկություն հայտնելով գիշերն անցկացնել Շարիկովի հյուրընկալ հարկի տակ: Հիշյալ անձնավորությունները հեռացան միայն այն բանից հետո, երբ Ֆյոդորը, որ գիշերային շապիկի վրայից աշնանային վերարկուն գցած՝ մասնակցում էր տեսարանին, զանգահարեց միլիցիայի քառասունհինգերորդ բաժանմունք: Անձնավորությունները ակնթարթորեն չքացան, հենց Ֆյոդորը կախեց խո-

սափողը: Եվ հայտնի չէ՝ նրանց մեկնելուց հետո ուր անհետացան մալախիտե մոխրամանը՝ նախասրահի հայելու տակդիրից, Ֆիլիպ Ֆիլիպովիչի կղբենու գդակը և ձեռնափայտը, որի վրա ոսկե զարդագիր կար. «Թանկագին և հարգարժան Ֆիլիպ Ֆիլիպովիչին՝ երախտապարտ օրդինատորներից ի հիշատակ...», ապա գալիս էր հռոմեական XXV թիվը:

- Ո՞վ էին,- բռունցքները սեղմած՝ Շարիկովի վրա էր գրոհում Ֆիլիպ Ֆիլիպովիչը: Սա օրորվելով, մուշտակներին խփվելով՝ ինչ-որ բան էր քրթմնջում առ այն, որ այդ անձնավորություններն անծանոթ են իրեն, և ինչ-որ շանորդիք չեն, այլ լավն են:

- Ամենից ապշեցուցիչն այն է, որ երկուսն էլ հարբած էին... և ինչպես հաջողացրին,- զարմանում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ նայելով կանգնակի այն մասին, որտեղ մի ժամանակ դրված էր հոբելյանի հիշատակը:

- Մասնագետնե՛ր են,- պարզաբանեց Ֆյոդորը ու գնաց քնելու՝ ռուբլիանոցը գրպանում:

Շարիկովը չերվոնեցները գողանալը կտրականապես ուրացավ, ընդսմին՝ անորոշ բարբաջելով, թե մենակ ինքը չի բնակարանում:

- Ըհը՛, գուցե դոկտոր Բորմենտա՞լն է թռցրել չերվոնեցները,- խաղաղ հետաքրքրվեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, բայց ձայնը կատաղության երանգ ուներ:

Շարիկովն օրորվեց, չռեց լրիվ ապուշացած աչքերը ու ենթադրություն արեց.

- Կարող է Զինկա՞ն է վերցրել...

- Ի՞նչ,- ճչաց Զինան, որ ուրվականի պես հայտնվել էր դռների մեջ և ափով փորձում էր պահել կրծքի վրա բացված կոֆտան:- Այդ ինչպե՜ս է համարձակվում...

Ֆիլիպ Ֆիլիպովիչի պարանոցը շառագունեց:

- Հանգի՜ստ, Զինո՛ւշա,- ասաց նա՝ աղջկա կողմը տարածելով ձեռքերը,- մի՛ հուզվիր, ամեն ինչ կկարգավորենք:

Զինան շրթունքը կախելով լաց եղավ, ու ձեռքը ցնցվում էր անրակի մոտ:

- Զի՛նա, ինչպե՞ս չեք ամաչում: Ո՞վ կարող էր այդպիսի բան մտածել: Թո՜ւ, ի՛նչ ամոթ,- շփոթված ասաց Բորմենտալը:

- Դե՛, Զի՛նա, հիմար ես դու, մեղա Աստված,- այն է՝ սկսում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը: Բայց այստեղ Զինայի լացն ինքն իրեն ընդհատվեց, ու բոլորը լռեցին: Շարիկովը վատացավ: Գլխով խփվելով պատին՝ նա «ի»-ի թե «ե»-ի պես ինչ-որ ձայն արձակեց, մոտավորապես՝ «է՛է՛է՛»: Դեմքը գունատվեց, ծնոտը ջղաձիգ ցնցվում էր:

- Այդ սրիկային անմիջապես դույլ հասցրեք վիրակապարանից:

Եվ բոլորն իրար անցան ու սկսեցին խնամել հիվանդացած Շարիկին: Երբ նրան տանում էին քնեցնելու, օրորվում էր Բորմենտալի ձեռքերի մեջ, քնքուշ ու երգեցիկ հայհոյում այլանդակ բառերով, որոնք դժվարությամբ էր արտաբերում:

Այդ ամբողջ պատմությունը մեկ ժամ էր անցել, արդեն գիշերվա ժամը 3-ն էր, բայց գիտնական զույգը դեռ արթուն էր աշխատասենյակում՝ կոնյակից ու կիտրոնից տաքացած: Այնքան էին ծխել, որ ծուխը կախվել էր թանձր շերտերով և նույնիսկ չէր օրորվում:

Դոկտոր Բորմենտալը՝ գունատ, խիստ վճռական աչքերով, բարձրացրեց բարակոտն ըմպանակը:

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- հուզված ասաց նա,- երբեք չեմ մոռանա, թե ինչպես ես՝ կիսաքաղց ուսանողս, եկա ձեզ մոտ, և դուք ապաստան տվեցիք ամբիոնում: Հավատացեք, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, դուք շատ ավելին եք, քան պրոֆեսորը, ուսուցիչը... Իմ անսահման հարգանքը ձեր հանդեպ... Թույլ տվեք համբուրեմ ձեզ, թանկագի՛ն Ֆիլիպ Ֆիլիպովիչ:

- Այո՛, աղավնյա՛կս,- շփոթված մնչաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը և ընդառաջ ելավ: Բորմենտալը գրկեց նրան ու համբուրեց թավ, թունդ ծխահարված բեղերը:

- Աստվա՛ծ վկա, Ֆիլի՛պ Ֆիլի...

- Այնպե՛ս հուզեցիք ինձ, այնպե՛ս հուզեցիք... Շնորհակալ եմ,- ասում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- աղավնյա՛կս, երբեք վիրահատությունների ժամանակ չեմ գոռա ձեզ վրա: Ներեցեք ծերուկիս բռնկվելու համար... Ըստ էության, ես իրականում այնպես մենակ եմ... Սևիլիայից մինչ Գրենադա...

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, ինչպե՞ս չեք ամաչում,- անկեղծորեն բացականչեց ոգեշնչված Բորմենտալը:-

Եթե չեք ուզում ինձ վիրավորել, նման բաներ չասեք այլևս...

- Շնորհակալ եմ... Դեպի ափերը սրբազան Նեղոսի՜... Շնորհակա՛լ եմ... ես էլ ձեզ սիրեցի որպես ընդունակ բժշկի:

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, նորից եմ ասում...,- կրքոտ գոչեց Բորմենտալը, պոկվեց տեղից, ամուր փակեց դեպի միջանցք տանող դուռը և վերադառնալով՝ շշուկով շարունակեց,- չէ՞ որ դա միակ ելքն է: Ես, իհարկե, չեմ համարձակվի ձեզ խորհուրդ տալ, սակայն, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, բայց տեսեք ինչպես եք տանջահար եղել, այլևս չի կարելի այդպես աշխատել:

- Բացարձակապես չի կարելի,- խոր շունչ քաշելով՝ հաստատեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Դե ահա, չէ որ դա աներևակայելի է,- շշնջում էր Բորմենտալը,- անցած անգամ ասում էիք, որ վախենում եք ինձ համար, և եթե գիտենայիք, թանկագի՛ն պրոֆեսոր, թե դրանով ինչպես հուզեցիք ինձ: Բայց չէ՞ որ ես երեխա չեմ և հասկանում եմ ինչ սարսափելի բան կարող է ստացվել: Բայց իմ խորին համոզմամբ՝ ուրիշ ելք չկա:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը վեր կացավ, թափահարեց ձեռքերն ու գոչեց.

- Մի՛ գայթակղեք, դրա մասին մի՛ խոսեք անգամ,- պրոֆեսորը ծխի քուլաները տատանելով՝ հետուառաջ էր անում սենյակում,- լսե՞լ չեմ ուզում: Հասկանո՞ւմ եք՝ ինչ կլինի, եթե ձեզ բռնեն: Չէ՞ որ,

1915.info

«նկատի ունենալով մեր ծագումը»՝ չեն խնայի, չնայած առաջին անգամ ենք դատվելու: Դուք, ախր, համապատասխան ծագում չունեք, թանկագի՛նս:

- Ի՞նչ ծագում: Հայրս դատաքննիչ էր Վիլնոյում,- ըմպանակում մնացած կոնյակը խմելով՝ տրտում պատասխանեց Բորմենտալը:

- Տեսնո՞ւմ եք: Վատ ժառանգականություն է, չէ՞: Առավել զզվելի բան պատկերացնել անգամ հնարավոր չէ: Ասենք, ներո՛ղ եղեք, իմն ավելի վատ է: Հայրս՝ մայր տաճարի ավագերեց էր: Մերսի՛: Սևիլիայից մինչ Գրենադա... գիշերվա խաղաղ աղջամուղջներում... Ա՛խ, սատանան տանի դրան:

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, դուք համաշխարհային մեծություն եք, և ինչ-որ, ներեցեք արտահայտությանս, շանորդու պատճառով... Մի՞թե նրանք կարող են ձեռք տալ ձեզ, ի՛նչ եք ասում...

- Առավել ևս՝ չե՛մ գնա դրան,- մտախոհ առարկեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ կանգ առնելով և աչքը գցելով ապակե պահարանին:

- Բայց ինչո՞ւ:

- Որովհետև դուք համաշխարհային մեծություն չեք:

- Որտեղի՛ց...

- Դե, տեսնո՞ւմ եք: Իսկ աղետի պահին գործընկերոջը լքելն ու համաշխարհային մեծություն լինելուդ շնորհիվ դուրս պրծնելը... ներեցեք... Ես մոսկվացի ուսանող եմ, ոչ թե Շարիկով:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը հպարտ շտկեց ուսերը և նմանվեց հին ֆրանսիական արքայի:

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, է՛...,- տրտում ասաց Բորմենտալը,- ուրեմն ի՞նչ... Պիտի նստեք, սպասեք, մինչև հաջողվի այդ խուլիգանին մա՞րդ դարձնել:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ձեռքի շարժումով ընդհատեց նրան, իր համար կոնյակ լցրեց, ումպ արեց, կիտրոն ծծեց և ասաց.

- Իվա՛ն Առնոլդովիչ, ի՞նչ եք կարծում, ես կազմախոսության և բնախոսության ոլորտում, դե, ասենք ուղեղի ապարատի բնագավառում, որևէ բան հասկանո՞ւմ եմ: Ի՞նչ եք կարծում:

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, ինչո՞ւ եք հարցնում,- խիստ հուզված պատասխանեց Բորմենտալը ու տարածեց ձեռքերը:

- Դե լա՛վ: Առանց կեղծ համեստության: Ես նույնպես կարծում եմ, որ այդ բնագավառում Մոսկվայում ամենավերջին մարդը չեմ:

- Իսկ ես կարծում եմ, որ առաջինն եք ոչ միայն Մոսկվայում, այլև թե՛ Լոնդոնում, թե՛ Օքսֆորդում,- անառարկելի կտրեց Բորմենտալը:

- Դե լավ, թող այդպես լինի: Եվ այսպես, ապագա պրոֆեսոր Բորմենտա՛լ. դա ոչ մեկին չի հաջողվի: Կարող եք և հարց չտալ: Հենց այդպես էլ հղում արեք ինձ. ասացեք՝ Պրեոբրաժենսկին ասաց: Finita[17]: Կլի՛մը,- հանկարծ հանդիսավոր գոչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, և ապակե պահարանը պատասխանեց զնգո-

17 Վերջ (լատ.):

ցով:- Կլի՜մը,- կրկնեց նա:- Ահա թե ինչ, Բորմենտա՛լ, դուք իմ դպրոցի առաջին աշակերտն եք և, բացի այդ, իմ բարեկամը, ինչում այսօր համոզվեցի: Եվ ահա ձեզ, որպես բարեկամի, իբրև գաղտնիք ասեմ, իհարկե գիտեմ, որ ինձ չեք խայտառակի. ծեր ավանակ Պրեոբրաժենսկին այդ վիրահատության վրա կտրվել է երրորդ կուրսեցու պես: Ճիշտ է, ինքներդ գիտեք, թե ի՜նչ հայտնագործություն ստացվեց,- այստեղ Ֆիլիպ Ֆիլիպովիչը ձեռքերը վշտահար պարզեց դեպի վարագուրված պատուհանը՝ ակնհայտորեն ակնարկելով Մոսկվան,- բայց նկատի ունեցեք, Իվա՜ն Առնոլդովիչ, որ այդ հայտնագործության միակ արդյունքը կլինի այն, որ այսուհետ բոլորս այդ Շարիկովին ահա թե որտեղ կունենանք՝ այստե՜ղ,- Պրեոբրաժենսկին խփեց իր պինդ ու կաթվածահարության հակված ծոծրակին,- համոզվա՛ծ եղեք: Եթե որևէ մեկը,- կրքոտ շարունակեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- պառկեցներ ինձ այստեղ ու ճիպտեր, երդվում եմ, հինգ չերվոնեց կտայի... Սևիլիայից մինչ Գրենադա... Սատանա՜ն տանի ինձ... Ախր հինգ տարի նստել՝ ուղեղների ելունդներն էի քչփորում... Գիտե՞ք ինչ աշխատանք եմ արել, աներևակայելի՜: Եվ ահա հարց է ծագում՝ ինչի՞ համար: Որպեսզի մի գեղեցիկ օր հրաշալի շանը վերածենք մի այնպիսի ոչնչության, որ մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում:

- Բացառի՜կ երևույթ է:

- Միանգամայն համաձայն եմ: Ահա, դոկտո՛ր, ինչ

է ստացվում, երբ հետազոտողը բնությանը զուգահեռ և շոշափելով գնալու փոխարեն, արագացնում է հարցի լուծումը և բարձրացնում վարագույրը. ա՛ռ, ստացի՛ր Շարիկովին ու կեր շիլայով:

- Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, իսկ եթե Սպինոզայի ուղեղը լիներ:

- Այո՛,- գոչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Այո՛, եթե միայն տարաբախտ շունը չսատկեր իմ դանակի տակ, իսկ դուք տեսաք, թե ինչ կարգի վիրահատություն էր: Մի խոսքով, ես Ֆիլիպ Պրեոբրաժենսկիս, ավելի դժվարին ոչինչ չեմ արել կյանքում: Կարելի է պատվաստել Սպինոզայի կամ ուրիշ մի գրողի տարածի մակուղեղը և շնից շատ ավելի բարձրակարգ մեկը սարքել: Բայց ո՞ր սատանայի համար, թույլ տվեք հարցնել: Բացատրեք ինձ, խնդրում եմ, ի՞նչ իմաստ ունի արհեստականորեն Սպինոզաներ մոգոնել, երբ ցանկացած կնիկարմատ կարող է ցանկացած պահի ծնել նրան: Չէ՞ որ Խոլմոգորում այդ մադամ Լոմոնոսվան ծնեց իր նշանավորին: Դոկտո՛ր, մարդկությունն ինքն է հոգում դրա համար և էվոյուցիոն կարգով, ամեն տարի, համառորեն, ամեն կարգի ոչնչությունների զանգվածից զատելով՝ ստեղծում է տասնյակ մեծագույն հանճարներ, որոնք պսակում են երկրագունդը: Հիմա հասկանո՞ւմ եք, դոկտո՛ր, թե ինչու մերժեցի Շարիկովի հիվանդության պատմության ձեր եզրահանգումը: Իմ հայտնագործությունը, սատանայի բաժի՛ն դառնա, որով այդպես տարված էի, գրոշ չարժե... Այո՛, մի՛ վիճեք, Իվա՛ն Առնոլդովիչ, ես արդեն հասկա-

ցել եմ: Չէ՞ որ երբեք խոսքս քամուն չեմ տալիս, դուք հրաշալի գիտեք: Տեսականորեն դա հետաքրքիր է: Դե լա՛վ: Բնախոսները ցնծության մեջ են: Մոսկվան մոլեգնում է... Իսկ գործնականո՞ւմ ինչ: Ո՞վ է հիմա ձեր առաջ,- Պրեոբրաժենսկին մատնացույց արեց վիրակապարանի կողմը, որտեղ քնած էր Շարիկովը:

- Մի բացառիկ սրիկա:

- Բայց ո՞վ է, ո՞վ: Կլի՛մը,Կլի՛մը,- գոչեց պրոֆեսորը:- Կլիմ Չուգունո՛վը (Բորմենտալի ծնոտը կախվեց), ահա թե ինչ. երկու դատվածություն, ալկոհոլամոլություն, «ամեն ինչ կիսել», գդակն ու երկու չերվոնեց կորան (այստեղ Ֆիլիպ Ֆիլիպովիչը հիշեց հոբելյանական ձեռնափայտն ու կարմրատակեց), գռեհիկ ու խոզի մեկը... Լա՛վ, ձեռնափայտը կգտնե՛մ: Մի խոսքով, մակուղեղը փակ խցիկ է, որը որոշում է մարդկային տվյալ ինքնությունը: Տվյա՛լ... Սևիլիայից մինչ Գրենադա...,- աչքերը կատաղի ոլորելով՝ գոչում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ոչ թե համամարդկային: Դա ինքը ուղեղի մանրակերտն է: Եվ ինձ բացարձակ պետք չէ, թող կորչի գրողի ծոցը: Ես միանգամայն այլ բանի համար էի ջանում՝ եվգենիկայի[18], մարդկային տեսակի բարելավման: Եվ ահա երիտասարդացման վրա սայթաքեցի: Մի՞թե կարծում եք՝ փողի համար են այդ վիրահատությունները: Չէ՞ որ ես համենայնդեպս գիտնական եմ:

---

18 Ուսմունք մարդկային բնությունը կենսաբանական եղանակով բարելավելու մասին:

– Դուք մե՛ծ գիտնական եք, ահա թե ինչ,– կոնյակը կլլելով՝ ասաց Բորմենտալը: Աչքերը լցվեցին արյունով:

– Ուզում էի մի փոքրիկ փորձ կատարել 2 տարի առաջ առաջին անգամ մակուղեղից սեռական հորմոնը ստանալուց հետո: Եվ դրա փոխարեն ի՞նչ ստացվեց: Աստվա՜ծ իմ: Մակուղեղի այն հորմոնները, Աստվա՜ծ իմ... Դոկտո՛ր, առջևում խուլ անհուսություն է, ես, խոստովանում եմ, մոլորվել եմ:

Բորմենտալը հանկարծ քշտեց թևերն ու աչքերը քթի ծայրին շլելով՝ ասաց.

– Այդ դեպքում՝ ահա թե ինչ, թանկագին ուսուցի՛չ, եթե դուք չեք ցանկանում, այդ դեպքում ինքս, իմ պատասխանատվությամբ նրան կկերակրեմ մկնդեղով: Գրողի ծո՜ցը, թե հայրիկս դատարանական քննիչ է եղել: Չէ՞ որ, վերջիվերջո, դա ձե՛ր փորձարարական արարածն է:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը հանդարտվեց, կակղեց, ընկավ բազկաթոռի մեջ և ասաց.

– Ո՛չ, ես ձեզ թույլ չեմ տա, թանկագին տղա՛ս: Ես 60 տարեկան եմ և կարող եմ խորհուրդ տալ: Հանցագործության երբե՛ք չգնաք, ում դեմ էլ ուղղված լինի: Մինչև ծերություն ապրեցեք մաքուր ձեռքերով:

– Ի՞նչ եք ասում, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, ախր եթե այդ Շվոնդերը մի անգամ էլ մշակի՝ ինչ դուրս կգա նրանից: Աստվա՜ծ իմ, միայն հիմա եմ սկսում հասկանալ, թե ինչ կարող է ստացվել այդ Շարիկովից:

- Ահա՛: Հիմա՞ հասկացաք: Իսկ ես հասկացել էի վիրահատությունից 10 օր անց: Եվ այսպես, Շվոնդերը հենց ամենամեծ հիմարն է որ կա: Նա չի հասկանում, որ Շարիկովն իր համար ավելի ահեղ սպառնալիք է, քան ինձ համար: Հիմա ամեն կերպ ջանում է նրան քսի տալ ինձ վրա՝ չպատկերացնելով, որ եթե մեկնումեկը իր հերթին Շարիկովին լարի իր՝ Շվոնդերի դեմ, ապա նրանից թաց տեղ էլ չի մնա:

- Իհարկե: Հենց միայն նրա կատուներն ինչ արժեն: Շան սրտով մարդ:

- Ո՛չ, ո՛չ,- ծոր տվեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- դուք, դոկտո՛ր, շատ մեծ սխալ եք թույլ տալիս, Աստծու սիրուն, մի վատաբանեք շանը: Կատուները ժամանակավոր են... Կարգապահության ու մի երկու-երեք շաբաթվա խնդիր: Հավատացնո՛ւմ եմ: Էլի մի ամիս, և նա կդադարի նետվել կատուների վրա:

- Իսկ ինչո՞ւ ոչ հիմա:

- Իվա՛ն Առնոլդովիչ, տարրական բան է: Դուք այդ ի՞նչ հարց եք տալիս: Չէ՞ որ մակուղեղն օդում կախված չէ: Այն, համենայնդեպս, պատվաստված է շան ուղեղի վրա, թողեք հարմարվի: Հիմա արդեն Շարիկովը շնայինի մնացորդներն է դրսևորում, և հասկացեք՝ կատուները լավագույնն են այն ամենից, ինչ նա անում է: Պատկերացրեք, ամենասարսափելին այն է, որ նա արդեն ոչ թե շան, այլ հենց մարդկային սիրտ է կրում: Եվ ամենագարշելին նրանցից, որ գոյություն ունեն բնության մեջ:

Ծայրաստիճան բորբոքված Բորմենտալը բռնցքեց ուժեղ, նիհար ձեռքերը, շտկեց ուսերը և հստակ ասաց.

- Իհարկե: Ես նրան կսպանե՛մ:

- Արգելո՛ւմ եմ,- կտրական պատասխանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

- Բայց ինչպե՞ս...

Ֆիլիպ Ֆիլիպովիչը հանկարծ լարվեց, բարձրացրեց մատը:

- Մի րոպե սպասեք, կարծես ոտնաձայներ են:

Ականջ դրեցին, բայց միջանցքում լուռ էր:

- Թվաց,- ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը ու սկսեց տաքացած խոսել գերմաներեն: Նրա խոսքի մեջ մի քանի անգամ մայրենի լեզվով հնչեց «քրեական» բառը:

- Մի վայրկյա՞ն,- հանկարծ անհանգստացավ Բորմենտալն ու գնաց դեպի դուռը: Ոտնաձայները պարզորոշ լսվում էին ու մոտենում աշխատասենյակին: Բացի այդ, ինչ-որ ձայն էր բվվում: Բորմենտալը բացեց դուռը և զարմանքով հետ քաշվեց: Ապշահար Ֆիլիպ Ֆիլիպովիչը քարացավ բազկաթոռում:

Միջանցքի լուսավորված քառանկյան մեջ հայտնվեց Դարյա Պետրովնան՝ միտակ գիշերանոցով, մարտական ու վառվող դեմքով: Բժշկին ու պրոֆեսորին կուրացրեց հզոր, և ինչպես վախից թվաց երկուսին էլ՝ բացարձակապես մերկ մարմնի լիառատությունը: Դարյա Պետրովնան զորեղ ձեռքերով ինչ-որ բան էր քարշ տալիս, և այդ «ինչ-որ բանը» համառելով նստում էր գետնին, նրա սև մազով պատված, ոչ մեծ

ոտքերը քաշքշվում էին հատակի վրայով: «Ինչ-որ բանն», իհարկե, պարզվեց Շարիկովն էր, լրիվ իրեն կորցրած, դեռ հարբած, գզգզված ու զուտ գիշերաշապիկով:

Դարյա Պետրովնան՝ վիթխարի ու մերկ, թափ էր տալիս Շարիկովին, ինչպես կարտոֆիլի պարկը, և այսպես ասում.

- Հիացե՛ք, պարոն պրոֆեսո՛ր, մեզ այցի եկած Տելեգրաֆ Տելեգրաֆովիչով: Ես գոնե ամուսնացած եղել եմ, իսկ Զինան անմեղ աղջիկ է: Լավ է, որ արթնացա;

Ավարտելով ելույթը՝ Դարյա Պետրովնան ընկավ ամոթի վիճակի մեջ, ճչաց, ձեռքերով փակեց կուրծքը ու փախավ:

- Դա՛րյա Պետրովնա, ներեցեք, ի սեր Աստծո,- ուշքի գալով՝ նրա ետևից կանչեց շառագունած Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Բորմենտալը մինչև վերջ քշտեց վերնաշապիկի թևքերն ու գնաց Շարիկովի վրա: Ֆիլիպ Ֆիլիպովիչը նայեց նրա աչքերին ու սարսափեց:

- Ի՞նչ եք անում, դոկտո՛ր: Ես արգելում եմ:

Բորմենտալն աջ ձեռքով բռնեց Շարիկովի օձիքը և այնպես ցնցեց, որ շապիկը պատռվեց:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը նետվեց առաջ ու փորձեց փոքրամարմին Շարիկովին պոկել կառչուն վիրաբուժական ձեռքերից:

- Ձեռ բարձրացնելու իրավունք չունեք,- կիսա-

խեղդված՝ ճչում էր Շարիկովը, նստելով գետնին ու սթափվելով:

- Դոկտո՜ր,- գոռաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Բորմենտալը մի փոքր ուշքի եկավ և բաց թողեց Շարիկովին, ինչից հետո սա անմիջապես սկսեց թնկթնկալ:

- Դե լա՜վ,- ֆշշացրեց Բորմենտալը,- կսպասենք մինչև առավոտ: Հենց սթափվեց, ես նրա համար բենեֆիս կկազմակերպեմ:

Նա բռնեց Շարիկովի թևատակերից ու քարշ տվեց ընդունարան՝ քնելու:

Ընդսմին Շարիկովը քացի տալու փորձեր էր անում, բայց ոտքերը չենթարկվեցին:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը երկարեց ոտքերը, ինչից երկնագույն փեշերը բացվեցին, ձեռքերն ու աչքերը հառեց միջանցքի առաստաղի լամպին ու մրմնջաց.

- Այո՜...

IX

Շարիկովի բենեֆիսը, որ Բորմենտալը խոստացել էր, հաջորդ առավոտ չկայացավ, որովհետև Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչը չքվել էր տնից: Բորմենտալը մոլեգին հուսահատության մեջ էր, ինքն իրեն ավանակ կոչեց, որ նախասենյակի դռան բանալին չէր թաքցրել, ինչը աններելի է, և ավարտեց մաղթանքով՝ որ Շարիկովն ընկնի ավտոբուսի տակ: Ֆիլիպ Ֆիլիպովիչը մատները մազերի մեջ խրած նստել էր աշխատասենյակում և ասում էր.

- Պատկերացնում եմ, թե ինչ է կատարվում դրսում: Պատկերացնո՜ւմ եմ... Սևիլիայից մինչ Գրենադա... Աստվա՜ծ իմ...

- Նա դեռ կարող է տնային կոմիտեում լինել,- մոլեգնում էր Բորմենտալը՝ շարունակ ինչ-որ տեղ շտապելով:

Տնային կոմիտեում վիճեց նախագահ Շվոնդերի հետ, այն աստիճան, որ սա նստեց Խամովնիկյան շրջանի ժողովրդական դատարանին դիմում գրելու՝ բղավելով, որ ինքը պրոֆեսոր Պրեոբրաժենսկու հոգեզավակի պահակը չի, առավել ևս, որ այդ հոգեզավակ Պոլիգրաֆը տառացիորեն երեկ իրեն ստահակի պես է դրսևորել՝ տնային կոմիտեից, իբր կոոպերատիվից դասագրքեր գնելու համար, վերցնելով 7 ռուբլի:

Ֆյոդորը, այդ գործի վրա երեք ռուբլի վաստա-

կելով՝ ծայրեծայր խուզարկեց ողջ տունը: Ոչ մի տեղ Շարիկովի հետքը չկար:

Պարզվեց միայն, որ Պոլիգրաֆը մեկնել է լուսաբացին, գլխին՝ կեպի, վզնոցով ու վերարկուով, բուֆետից վերցնելով մի շիշ սնձաղի, դոկտոր Բորմենտալի ձեռնոցները և իր բոլոր փաստաթղթերը: Դարյա Պետրովնան ու Զինան անթաքույց արտահայտեցին իրենց բուռն ուրախությունը և հույսն առ այն, որ նա այլևս չի վերադառնա: Շարիկովը նախօրեին Դարյա Պետրովնայից պարտք էր արել երեք ռուբլի հիսուն կոպեկ:

- Հենց այդպես էլ ձեզ պետք է,- մռնչում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ թափահարելով բռունցքները:

Ամբողջ օրը հեռախոսը զնգում էր, զնգում էր նաև հաջորդ օրը: Բժիշկներն աներևակայելի թվով այցելուներ էին ընդունում, իսկ երրորդ օրը աշխատասենյակում լրջորեն դրվեց միլիցիային տեղյակ պահելու հարցը, որը Շարիկովին պիտի որոներ մոսկովյան հորձանուտում:

Եվ հենց նոր էր արտասանվել «միլիցիա» բառը, երբ Օբուխովյան նրբանցքի երանավետ լռությունը պատառոտեց բեռնատարի հաչոցը, ու լուսամուտների ապակիները ցնցվեցին: Հետո հնչեց ինքնավստահ զանգը, և մտավ Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչը՝ սեփական արժանապատվության անսովոր արտահայտությամբ, կատարյալ լռության մեջ կեպին, վերարկուն գցեց կախիչին և ի հայտ եկավ նոր կերպա-

ռանքով: Հագին հին կաշվե բաճկոն էր, նույնպիսի կաշվե մաշված շալվար և անգլիական բարձրաճիտք կոշիկներ՝ մինչև ծնկները քուղկապով: Անտանելի կատվահոտը բռնեց ամբողջ նախասենյակը: Պրեոբրաժենսկին և Բորմենտալը ասես հրամանով ձեռքները խաչեցին կրծքին, կանգնեցին շեմին մոտ ու սպասեցին Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչի հաղորդելիք առաջին տեղեկություններին: Նա հարդարեց կոշտ մազերը, հազաց, շուրջը նայեց այնպես, որ ակնհայտ էր՝ Պոլիգրաֆն ուզում էր շփոթմունքը թաքցնել լպիրշ պահվածքով:

-Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ,- վերջապես սկսեց նա,- գործի եմ տեղավորվել:

Բժիշկների կոկորդներից անորոշ չոր ձայն արձակվեց: Պրեոբրաժենսկին առաջինը ուշքի եկավ, պարզեց ձեռքը և ասաց.

- Թո՛ւղթը տվեք:

Թղթի վրա տպված էր.

«Սույնը ներկայացնող ընկեր Պոփգրաֆ Պոլիգբաֆովիչ Շարիկովն իսկապես հանդիսանում է Մոսկվա քաղաքը թափառող կենդանիներից (կատուներ և այլն) մաքրելու ենթաբաժնի վարիչ՝ ՄԿՏ-ի բաժնում»:

- Այսպե՞ս,- ծանր արտաբերեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- և ով է ձեզ տեղավորե՞լ: Ա՜խ, ասենք, ինքս էլ կռահում եմ:

- Դե հա՜, Շվոնդե՛րը:

- Թույլ տվեք հարցնել, ինչո՞ւ է ձեզնից այդպիսի գարշելի հոտ փչում:

Շարիկովը մտահոգ հոտոտեց բաճկոնը:

- Ճիշտ է, փչում է, հայտնի բան է՝ մասնագիտության համաձայն: Երեկ կատու էր, որ խեղդում ու խեղդում էինք, խեղդո՛ւմ ու խեղդո՛ւմ էինք...

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ցնցվեց ու նայեց Բորմենտալին: Սրա աչքերը երկու սև հրափողի պես ուղղված էին Շարիկովին: Առանց որևէ նախաբանի մոտեցավ Շարիկովին և թեթև ու վստահ բռնեց կոկորդը:

- Օգնեցե՛ք,- գունատվելով՝ ծվաց Շարիկովը:

- Բժի՛շկ:

- Ոչ մի վատ բան չեմ անի, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ, մի՛ անհանգստացեք,- մետաղաձայն արձագանքեց Բորմենտալն ու որոտաց,- Զի՞նա, Դա՛րյա Պետրովնա:

Նրանք հայտնվեցին նախասենյակում:

- Դե, կրկնե՛ք,- ասաց Բորմենտալը ու թեթև սեղմեց Շարիկովի կոկորդը,- ներեցե՛ք ինձ...

- Լա՛վ, լա՛վ, կրկնում եմ,- խուլ պատասխանեց կատարելապես ապշած Շարիկովը, ապա հանկարծ ցնցվեց, շունչ առավ, նորից փորձեց բղավել «օգնեցեք», բայց աղաղակ չլսվեց, և գլուխը լրիվ թաղվեց մուշտակի մեջ:

- Դոկտո՛ր, աղաչո՛ւմ եմ:

Շարիկովը գլխով արեց՝ հասկանալ տալով, որ հնազանդվում է և կկրկնի:

- ...Ներեցեք ինձ, մեծարգո Դա՛րյա Պետրովնա և Զինաի՛դա...

- Պրոկոֆևնա,- վախեցած շշնջաց Զինան:

- Ո՛ւֆ, Պրոկոֆևնա,- օդ որսալով՝ կրկնում էր խռպոտած Շարիկովը,- ...որ թույլ եմ տվել ինձ...

- Նողկալի արարք գիշերը, հարբած վիճակում:

- ...Հարբած վիճակում...

- Այլևս երբեք չեմ անի...

- Չեմ ա...

- Բա՛ց թողեք, թողեք, Իվա՛ն Առնոլդովիչ,- միաժամանակ խնդրեցին կանայք,- կխեղդեք նրան:

Բորմենտալը թողեց Շարիկովին և ասաց.

- Բեռնատարը ձե՞զ է սպասում:

- Ո՛չ,- հարգալիր պատասխանեց Պոլիգրաֆը,- ուղղակի տեղ հասցրեց:

- Չի՞նա, արձակեք մեքենան: Իսկ հիմա նկատի ունեցեք հետևյալը. վերադառնում եք Ֆիլիպ Ֆիլիպովիչի բնակարա՞նը:

- Ուրիշ ո՞ւր պիտի գնամ,- աչքերը փախցնելով՝ երկչոտ պատասխանեց Շարիկովը:

- Հրաշալի է: Ուրեմն ձայն-ծպտուն չլսվի: Հակառակ դեպքում, յուրաքանչյուր այլանդակ արարքի համար գործ կունենաք ինձ հետ: Պա՞րզ է:

- Պարզ է,- պատասխանեց Շարիկովը:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը Շարիկովի վրա բռնություն գործադրելու այդ ամբողջ ընթացքում լուռ էր: Մի տեսակ խղճալի կծկվել էր շեմին մոտ ու հայացքը հատակին՝ եղունգներն էր կրծում: Հետո արագ նայեց Շարիկովին և խլաձայն ու մեքենայաբար ասաց.

- Իսկ ի՞նչ եք անում այդ... սպանված կատուներին:

- Վերարկու պիտի կարեն,- պատասխանեց Շարիկովը,- սկյուռի մորթի են սարքելու դրանցից՝ բանվորական վարկով:

Իսկ հետո բնակարանում լռություն տիրեց, որ ձգվեց երկու օր: Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչն առավոտյան մեկնում էր բեռնատարով, հայտնվում երեկոյան, լուռումունջ ճաշում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչի և Բորմենտալի ընկերակցությամբ:

Չնայած Բորմենտալն ու Շարիկովը նույն սենյակում էին քնում՝ ընդունարանում, չէին խոսում իրար հետ, այնպես որ, Բորմենտալն առաջինը ձանձրացավ:

Երկու օր անց հայտնվեց նիհարիկ, նկարած աչքունքով, կրեմագույն գուլպաներով մի օրիորդ հայտնվեց և արտակարգ շփոթվեց բնակարանի փառահեղ տեսքից: Մաշված վերարկուն հագին՝ քայլում էր Շարիկովի ետևից և նախասրահում բախվեց պրոֆեսորին:

Սա շփոթվեց, կանգ առավ, կկոցեց աչքերն ու հարցրեց.

- Թույլ տվեք իմանալ...

- Գրանցվում եմ սրա հետ, մեր մեքենագրուհին է, իմ հետ է ապրելու: Ստիպված կլինենք Բորմենտալին դուրս անել ընդունարանից: Նա իր բնակարանն ունի,- ծայրաստիճան թունոտ ու մռայլ ասաց Շարիկովը:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ճպճպացրեց աչքերը, միտք

արեց՝ նայելով շառագունած օրիորդին, և շատ քաղաքավարի հրավիրեց.

- Խնդրում եմ մի րոպեով անցնեք իմ աշխատասենյակը:

- Ես էլ կգամ հետը,- արագ ու կասկածոտ ասաց Շարիկովը:

Եվ այստեղ ասես գետնի տակից հայտնվեց Բորմենտալը:

- Կներե՛ք,- ասաց նա,- պրոֆեսորը տիկնոջ հետ առանձին կզրուցի, իսկ ես և դուք կսպասենք այստեղ:

- Ես չեմ ուզում,- չար արձագանքեց Շարիկովը՝ փորձելով հասնել ամոթից վառվող օրիորդի և Ֆիլիպ Ֆիլիպովիչի հետևից:

- Ո՛չ, ներեցե՛ք,- Բորմենտալը բռնեց Շարիկովի ձեռքը, և նրանք անցան վիրակապարան:

Հինգ րոպե աշխատասենյակից ոչ մի ձայն չէր գալիս, հետո հանկարծ լսվեց օրիորդի խուլ հեծկլտոցը:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը կանգնել էր սեղանի մոտ, իսկ օրիորդն արտասվում էր կեղտոտ ժանեկավոր թաշկինակի մեջ:

- Նա ասաց, սրիկա՜ն, որ մարտերում է վիրավորվել:

- Ստո՜ւմ է,- անհողդողդ պատասխանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, օրորեց գլուխն ու շարունակեց: - Ես անկեղծորեն ափսոսում եմ ձեզ, բայց չի՛ կարելի այդ-

պես, առաջին պատահածի հետ, զուտ պաշտոնական դիրքի բերումով... Մանկի՛կս, չէ՞ որ դա այլանդակություն է... Ահա թե ինչ...,- նա բացեց գրասեղանի դարակը ու երեք հատ չերվոնեց հանեց:

- Ես թույն կխմեմ,- լալիս էր օրիորդը,- ճաշարանում ամեն օր աղ դրած միս են տալիս... և սպառնում է... ասում է՝ կարմիր հրամանատար է... ինձ հետ, ասում է, շքեղ բնակարանում կապրես... ամեն օր՝ անանասներ... բնույթս, ասում է, բարի է, մենակ կատուներին եմ ատում: Մատանիս էլ ի հիշատակ վերցրեց:

- Տես, է՛... բնույթը բարի է... Սևիլիայից մինչ Գրենադա,- քրթմնջում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- պետք է համբերել, դուք այնքա՞ն երիտասարդ եք...

- Մի՞թե հենց այս դարպասատակից...

- Դե, վերցրեք փողը, երբ պարտք են տալիս,- գոչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Հետո դուռը հանդիսավոր բացվեց, և Բորմենտալը Ֆիլիպ Ֆիլիպովիչի հրավերով ներս բերեց Շարիկովին: Սրա աչքերը վազվզում էին, իսկ գլխի բուրդը ցցվել էր խոզանակի պես:

- Սրիկա՛,- պոռթկաց օրիորդը՝ շողացնելով ներկոտված արցունքոտ աչքերն ու դիմափոշով շերտավորված քիթը:

- Ինչի՞ հետևանք է ձեր ճակատի սպին: Նեղություն կրեք, բացատրեք տիկնոջը,- փաղաքուշ ասաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Շարիկովը որոշեց գնալ մինչև վերջ.

- Կոլչակյան ճակատներում եմ վերք ստացել,- կաղկանձեց նա:

Օրիորդը վեր կացավ ու բարձր լալով դուրս եկավ:

- Վե՛րջ տվեք,- նրա ետևից կանչեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը: - Սպասե՛ք: Մատանին՝ խնդրում եմ,- դարձավ նա Շարիկովին:

Սա հնազանդորեն մատից հանեց ուռուցիկ, զմրուխտե քարով մատանին:

- Լա՛վ,- հանկարծ չարությամբ ասաց նա,- կհիշեցնեմ քեզ: Հենց վաղը քեզ համար հաստիքների կրճատում կկազմակերպեմ:

- Չվախենաք նրանից,- աղջկա ետևից կանչեց Բորմենտալը,- ես թույլ չեմ տա ոչինչ անի: - Նա շրջվեց ու այնպես նայեց Շարիկովին, որ սա հետ-հետ գնաց ու ծոծրակով խփվեց զգեստապահարանին:

- Ի՞նչ է նրա ազգանունը,- հարցրեց Բորմենտալը:- Ազգանո՛ւնը,- մռնչաց նա ու հանկարծ կերպարանափոխվեց՝ դառնալով վայրի ու սարսափելի:

- Վասնեցովա,- պատասխանեց Շարիկովը՝ աչքերով փախուստի ճանապարհ փնտրելով:

- Ամեն օր,- Շարիկովի բաճկոնի դարձածալը բռնելով՝ ասաց Բորմենտալը,- անձամբ եմ տեղեկանալու մաքրման բաժանմունքից՝ չե՞ն կրճատել արդյոք քաղաքացուհի Վասնեցովային: Եվ եթե միայն... իմանամ, որ կրճատել են, ես ձեզ... իմ ձեռքով... հենց այստեղ կգնդակահարեմ: Զգուշացեք, Շա՛րիկով, մայրենի լեզվով եմ ասում:

Շարիկովն անթարթ նայում էր Բորմենտալի քթին:

- Մեր մոտ էլ ռևոլվերներ կճարվեն...,- մռթմռթաց Պոլիգրաֆը, բայց մի տեսակ ծուլորեն ու հանկարծ ճարպկորեն դուրս պրծավ դռնով:

- Զգուշացե՛ք,- նրա ետևից հասավ Բորմենտալի բղավոցը:

Ողջ գիշեր և հաջորդ օրվա ամբողջ կեսը լռությունը կախվել էր ամպրոպաբեր ամպի պես: Բոլորը լռում էին: Սակայն մյուս օրը, երբ Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչը, ում սիրտն առավոտյան խայթել էր զզվելի նախազգացումը, բեռնատարով խոժոռված մեկնեց ծառայության վայրը, պրոֆեսոր Պրեոբրաժենսկին միանգամայն տարաժամ ընդունեց իր նախկին հիվանդներից մեկին՝ զինվորական համազգեստով, հաստաբեստ ու բարձրահասակ մի մարդու: Սա համառորեն ընդունելության էր ձգտում և հասել էր նպատակին: Մտնելով աշխատասենյակ նա կրունկներով հարգալիր թխթխկացնելով գնաց պրոֆեսորի կողմը:

- Ձեր ցավերը վերսկսվե՞լ են, աղավնյա՛կս,- հարցրեց սմքած Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Նստեք, խնդրեմ:

- Մերսի՛: Ո՛չ, պրոֆեսո՛ր,- պատասխանեց հյուրը՝ սաղավարտը դնելով սեղանի ծայրին,- ես ձեզ անչափ երախտապարտ եմ... Հը՛մ... Ուրիշ գործով եմ եկել, Ֆիլի՛պ Ֆիլիպովիչ... ցանկանում եմ... մեծ հարգանք տածելով... հը՛մ... զգուշացնել: Ակնհայտ տխմարություն: Ուղղակի սրիկայի մեկն է,- այցելուն

պորտֆելից մի թուղթ հանեց,- լավ է, որ անմիջաբար ինձ զեկուցեցին:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը ակնոցի վրայից պեսսնեն դրեց քթին ու սկսեց կարդալ: Երկար մրմնջում էր քթի տակ, ու դեմքը որպե առ որպե փոփոխվում էր: «...ինչպես և սպառնալով սպանել տնային կոմիտեի նախագահ ընկեր Շվոնդերին, ինչից երևում է, որ հրազեն է պահում: Նաև հակահեղափոխական ելույթներ է ունենում և նույնիսկ իր սոցիալ-կամակատար Զինաիդա Պրոկոֆևնա Բունինային հրամայեց վառել Էնգելսին, իբրև ակնհայտ մենշևիկ, իր օգնական Բորմենտալ Իվան Իվանովիչի հետ, որը ծածուկ, առանց գրանցվելու, ապրում է նրա բնակարանում: Մաքրման ենթաբաժնի վարիչ Պ.Պ. Շարիկովի ստորագրությունը հաստատում եմ: Տնային վարչության նախագահ՝ Շվոնդեր, քարտուղար՝ Պեստրուխին»:

- Թույլ կտա՞ք սա մնա ինձ մոտ,- հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը, ում դեմքը պատվել էր կարմիր բծերով:- Կամ, ներեցեք, գուցե հարկավո՞ր է ձեզ՝ գործին օրինական ընթացք տալու համար:

- Ներեցեք, պրոֆեսո՛ր,- շատ նեղացավ այցելուն և փքեց ռունգերը,- դուք իսկապես չափազանց արհամարհանքով եք վերաբերվում մեզ: Ես...,- և այստեղ ինքը սկսեց փքվել հնդկահավի պես:

- Ներեցե՛ք, ներեցե՛ք, աղավնյա՛կս,- քրթմնջաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- ներեցե՛ք, իսկապես չէի ուզում նեղացնել: Մի վիրավորվեք, աղավնյա՛կս, նա ինձ այնպե՛ս է հոգնեցրել...

- Իմ կարծիքով,- արդեն լրիվ խաղաղվեց այցելուն,- համենայնդեպս ի՞նչ անպետքությունն է: Հետաքրքիր կլիներ դրան տեսնել: Մոսկվայով մեկ ուղղակի լեգենդներ են շրջում ձեր մասին...

Ֆիլիպ Ֆիլիպովիչը միայն հուսահատ թափ տվեց ձեռքը: Այստեղ այցելուն տեսավ, որ պրոֆեսորը կորացել և կարծես ավելի է ճերմակել վերջին շրջանում:

***

Հանցագործությունը հասունացավ և ընկավ քարի նման, ինչպես և սովորաբար լինում է: Ծանր, գեշ նախազգացումով վերադարձավ Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչն իր բեռնատարով: Ֆիլիպ Ֆիլիպովիչի ձայնը նրան հրավիրեց վիրակապարան: Շարիկովը ներկայացավ և աղոտ վախով նայեց Բորմենտալի աչքերի հրափողերին, ապա՝ Ֆիլիպ Ֆիլիպովիչին: Օգնականի շուրջը ծուխը ամպ էր կապել, իսկ գլանակը բռնած ձախ ձեռքը ցնցվում էր մանկաբարձական բազկաթոռի փայլուն արմնկակալին:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը խիստ չարագուշակ խաղաղությամբ սկսեց.

- Հենց հիմա հավաքեք ձեր իրերը՝ տաբատը, վերարկուն, ամենը, ինչ ձեզ հարկավոր է, և կորեք բնակարանից:

- Ինչպե՞ս թե,- անկեղծորեն զարմացավ Շարիկովը:

- Կորեք բնակարանից, այսօր իսկ,- միալար կրկնում էր Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ աչքը իր եղունգներին:

Ինչ-որ չար ոգի էր բույն դրել Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչի մեջ. ակնհայտորեն կործանումն արդեն դարանել էր նրան, և ճակատագիրը՝ կանգնել թիկունքին: Նա ինքը նետվեց անխուսափելիի գիրկը և չար ու կտրուկ կաղկանձեց.

- Էս ի՞նչ բան է, իսկականի՞ց: Ինչ է, ես ձեր հախից չե՞մ գալու: Ես էստեղ 16 արշինի վրա նստած եմ ու կնստեմ:

- Կորե՛ք բնակարանից,- մտերմաբար շշնջաց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Շարիկովն ինքն էր կանչում իր մահը: Նա պարզեց ձախ ձեռքը և մի խածոտված, անտանելի կատվահոտով ներծծված եռամատ հայհոյանշան ցույց տվեց Ֆիլիպ Ֆիլիպովիչին: Հետո աջով գրպանից հանեց ռևոլվերն ու պահեց վտանգավոր Բորմենտալի վրա: Բորմենտալի ծխախոտը թռավ ընկնող աստղի պես, իսկ մի քանի վայրկյանից Ֆիլիպ Ֆիլիպովիչը փշրված ապակու վրայով սարսափահար նետվում էր պահարանից դեպի թախտը, որի վրա փռվել էր մաքրման ենթահանձնաժողովի խռխռացող վարիչը, իսկ նրա կրծքին տեղավորվել էր վիրաբույժ Բորմենտալը ու խեղդում էր ճերմակ, փոքրիկ բարձով:

Մի քանի րոպեից դոկտոր Բորմենտալը, աղճատված դեմքով, անցավ նախամուտք և զանգի կոճակի հարևանությամբ մի գրություն փակցրեց.

«ՊՐՈՖԵՍՈՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՅՍՕՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԼԻՆԻ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՁԱՆԳԵՐՈՎ ՉԱՆՀԱՆԳՍՏԱՑՆԵԼ»:

Փայլուն գրչահատ դանակով նա կտրեց դռան զանգի լարը, հայելու մեջ զննեց իր քերծված ու արնաթաթախ դեմքը, մանրիկ դողով բռնված ձեռքերը: Ապա կանգնեց խոհանոցի շեմին և տագնապած Զինային ու Դարյա Պետրովնային ասաց.

- Պրոֆեսորը խնդրում է չբացակայել բնակարանից:

- Լա՛վ,- երկչոտ պատասխանեցին Զինան ու Դարյա Պետրովնան:

- Թույլ տվեք կողպել հետնամուտքի դուռն ու վերցնել բանալին,- ասաց Բորմենտալը՝ պահվելով դռան ստվերում ու ձեռքով ծածկելով դեմքը:- Սա ժամանակավոր է և ո՛չ անվստահություն ձեր հանդեպ: Ուղղակի հնարավոր է՝ մեկնումեկը գա, և չդիմանաք ու բացեք, իսկ մեզ չի կարելի խանգարել: Մենք զբաղված ենք:

- Լա՛վ,- պատասխանեցին կանայք ու սփրթնեցին: Բորմենտալը կողպեց հետնամուտքի դուռը, շքամուտքի դուռը, ապա միջանցքից՝ նախամուտքի դուռը, և նրա ոտնաձայները խլացան վիրակապարանում:

Լռությունը պատել էր բնակարանը, սողոսկել բո-

լոր անկյունները: Ներս սողաց աղջամուղջը՝ գարշելի, տագնապահարույց, մի խոսքով՝ խավար: Ճիշտ է, հետագայում հարևանները պատմում էին, որ Պրեոբրաժենսկու վիրակապարանի՝ բակ նայող բոլոր պատուհաններն այդ գիշեր լուսավորված են եղել, և որ անգամ իրենք տեսել են պրոֆեսորի սպիտակ թասակը...

Ստուգելը դժվար է: Ճիշտ է, Զինան էլ, երբ արդեն ամեն ինչ վերջացել էր, շատախոսում էր, թե աշխատասենյակում, բուխարու մոտ, երբ Բորմենտալն ու պրոֆեսորը դուրս էին եկել վիրակապարանից, Իվան Առնոլդովիչը մահու չափ վախեցրել էր իրեն: Իբր աշխատասենյակում չոքած՝ բուխարու մեջ անձամբ վառելիս էր եղել իր կապտակազմ տետրը, որտեղ արձանագրվում էին պրոֆեսորի այցելուների հիվանդության պատմությունները: Նրա դեմքը, կարծես, կատարելապես կանաչ էր եղել և ամբողջովին, դե՛, լրիվ... քերծոտված: Եվ Ֆիլիպ Ֆիլիպովիչն էլ այդ երեկո նման չէր եղել ինքն իրեն: Եվ էլի, որ... չնայած անմեղ աղջիկը՝ Պրեչիստենկայի բնակարանից, գուցե և ստում էր...

Միայն մի բանի համար կարելի է երաշխավորել. այդ երեկո կատարյալ և զարհուրելի լռություն էր բնակարանում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Վիրակապարանի ճակատամարտից ուղիղ տասը գիշեր անց պրոֆեսոր Պրեոբրաժենսկու բնակարանում սուր ծղրտաց զանգը:

- Քրեական հետախուզությունն ու քննիչն են: Բարեհաճեք բացել:

Վազող ոտնաձայներ լսվեցին, չխկչխկոց եկավ, սկսեցին մտնել ներս, և ահագին ժողովուրդ հավաքվեց վառ լուսավորված ընդունարանում, որի պահարաններին նոր ապակիներ էին գցել: Երկուսը՝ միլիցիոների համազգեստով, մեկը՝ սև վերարկուով, ձեռքին՝ պորտֆել, չարախնդացող ու գունատ նախագահ Շվոնդերը, կին-պատանին, բարապան Ֆյոդորը, Զինան, Դարյա Պետրովնան և կիսահագնված Բորմենտալը, որ ամոթխած ծածկում էր անփողկապ կոկորդը:

Աշխատասենյակի դուռը դուրս թողեց Ֆիլիպ Ֆիլիպովիչին: Նա հայտնվեց բոլորին հայտնի երկնագույն խալաթը հագին, և բոլորը տեղում կարող էին հավաստիանալ, որ վերջին շաբաթվա ընթացքում Ֆիլիպ Ֆիլիպովիչը կարգին կազդուրվել է: Նախկին տիրական ու եռանդուն Ֆիլիպ Ֆիլիպովիչն էր, որ, արժանապատվությամբ լի, ներկայացավ գիշերային հյուրերին և ներողություն խնդրեց, որ խալաթով է:

- Մի քաշվեք, պրոֆեսո՛ր,- շփոթված արձագանքեց քաղաքացիական հագուստով մարդը, ապա հա-

պաղեց մի քիչ և ավելացրեց:- Շատ տհաճ է: Մենք ձեր բնակարանը խուզարկելու և,- մարդը նայեց Ֆիլիպ Ֆիլիպովիչի բեղերին ու ավարտեց,- և կալանքի թույլտվություն ունենք՝ կախված արդյունքից:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը կկոցեց աչքերն ու հարցրեց.

- Իսկ ի՞նչ մեղադրանքով, համարձակվում եմ հարցնել, և ո՞ւմ:

Մարդը քորեց այտն ու սկսեց կարդալ պորտֆելից հանված թուղթը.

-ՄԿՏ-ի մաքրման ենթաբաժնի վարիչ Պոլիգրաֆ Պոլիգրաֆովիչ Շարիկովի սպանության մեջ Պրեոբրաժենսկու, Բորմենտալի, Չինաիդա Բունինայի և Դարյա Իվանովայի մեղադրանքով:

Վերջին բառերը խլացան Չինայի հեկեկոցի մեջ: Իրարանցում սկսվեց:

- Ոչինչ չեմ հասկանում,- պատասխանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը՝ արքայավայել թոթվելով ուսերը,- այդ ի՞նչ Շարիկով է: Ա՜խ, ներեցեք, իմ շան մասի՞ն է խոսքը, որին վիրահատե՞լ էի:

- Կներեք, պրոֆեսո՛ր, ոչ թե շան, այլ՝ երբ արդեն մարդ էր: Ահա թե բանն ինչ է:

- Այսինքն, որ խոսո՞ւմ էր,- հարցրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:- Դա դեռ չի նշանակում, թե մարդ է եղել: Ասենք, էական չէ: Շարիկը հիմա էլ կա, և ոչ ոք, ստուգապես, նրան չի սպանել:

- Պրոֆեսո՛ր,- զարմացած խոսեց սև մարդուկը ու վեր քաշեց հոնքերը,- այդ դեպքում ստիպված եք

ներկայացնել նրան: Տասներորդ օրն է, որ կորել է, և տվյալները, ներեցեք ինձ, վատն են, շա՜տ վատ:

- Դոկտոր Բորմենտա՛լ, բարի եղեք Շարիկին ներկայացնել քննիչին,- կալանքի թույլտվությունը վերցնելով՝ կարգադրեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը:

Դոկտոր Բորմենտալը ծուռ ժպտալով դուրս եկավ:

Երբ վերադարձավ ու սուլեց, նրա ետևից աշխատասենյակի դռներից ներս թռավ մի տարօրինակ շուն: Տեղ-տեղ մազաթափ էր, տեղ-տեղ վրան բուրդ էր աճում: Մտավ վարժեցված կրկեսային շան պես՝ ետևի թաթերի վրա, հետո իջավ չորս թաթերին ու շուրջը նայեց: Գերեզմանային լռությունն ընդունարանում անշարժ էր դոնդողի պես: Մղձավանջային շունը, շառագույն սպին ճակատին, նորից կանգնեց հետևի թաթերին ու ժպտալով նստեց բազկաթոռի մեջ:

Երկրորդ միլիցիոները հանկարծ լայնաթափ շարժումով խաչակնքեց ու հետ քաշվելով՝ տրորեց Զինայի միանգամից երկու ոտքը:

Սև հագած մարդու բերանը բաց էր մնացել և այդպես էլ հարցրեց.

- Եվ ինչպե՞ս էր, ներեցեք... նա աշխատում ենթաբաժնում...

- Ես չեմ նրան այնտեղ նշանակել,- պատասխանեց Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- պարոն Շվոնդերն էր երաշխավորել, եթե չեմ սխալվում:

- Ոչինչ չեմ հասկանում,- մոլորված ասաց սևազգեստ մարդը ու դարձավ առաջին միլիցիոներին:- Նա՞ է:

- Նա է,- կամացուկ պատասխանեց միլիցիոները:- Հաստատ նա է:

- Նա ինքը,- լսվեց Ֆյոդորի ձայնը,- մենակ թե, սրիկան նորից բուրդ է կապել:

- Բայց նա խոսո՛ւմ էր... քըխը՛մ, քըխը՛մ...

- Հիմա էլ դեռ խոսում է, բայց ավելի ու ավելի քիչ, այնպես որ, օգտվեք առիթից, թե չէ շուտով լրիվ կպապանձվի:

- Բայց ինչո՞ւ,- զգույշ հետաքրքրվեց սև մարդը:

Ֆիլիպ Ֆիլիպովիչը թոթվեց ուսերը:

- Գիտությանը դեռևս անհայտ է կենդանուն մարդ դարձնելու եղանակը: Ահավասիկ, ես էլ փորձեցի, բայց՝ անհաջող, ինչպես տեսնում եք: Խոսեց մի քիչ ու վերադարձավ նախնական վիճակին: Ատավիզմ է:

- Անպարկեշտ բառերով չարտահայտվե՛լ,- հանկարծ գոռաց շունը ու վեր կացավ բազկաթոռից:

Սև մարդն անսպասելի գունատվեց, գցեց պորտֆելը ու սկսեց ընկնել: Միլիցիոները կողքից գրկեց նրան, Ֆյոդորը՝ ետևից: Իրարանցում սկսվեց, որի ընթացքում պարզորոշ լսվեց երեք դարձվածք.

Ֆիլիպ Ֆիլիպովիչինը.- Կատվախոտի թուրմ տվեք: Ուշաթափություն ևն է:

Դոկտոր Բորմենտալինը.- Շվոնդերին անձամբ ցած կշպրտեմ սանդուղքներից, եթե մի անգամ էլ

հայտնվի պրոֆեսոր Պրեոբրաժենսկու բնակարանում:

Եվ Շվոնդերինը.- Խնդրում եմ այս բառերը մտցնել արձանագրության մեջ:

***

Խողովակների գորշագույն հարմոնները տաքացնում էին: Վարագույրները փակում էին Պրեչիստենկայի գիշերը՝ իր միայնակ աստղով: Բարձրագույն արարածը՝ շների վեհակերպ բարերարը նստել էր բազկաթոռի մեջ, իսկ Շարիկ շունը թեք ընկած պառկել էր գորգին, կաշեպատ բազմոցի մոտ: Մարտ ամսվա մշուշներից շունն առավոտները գլխի վիրակարն օղակող գլխացավեր էր ունենում: Բայց սենյակի ջերմությունից երեկոյան կողմ ցավն անցնում էր: Եվ հիմա արդեն՝ թեթևանո՛ւմ էր, թեթևանո՛ւմ, և մտքերը շան ուղեղով հոսում էին սահուն ու տաք:

«Ո՞նց բերեց բախտս, ո՞նց բերեց,- ննջելով՝ մտածում էր նա,- աննկարագրելի՛ բերեց: Հաստատվեցի ես այս բնակարանում: Վերջնականապես համոզվեցի, որ իմ ծագման մեջ մի բան մաքուր չի: Հաստատ ջրասուզակի մատը խառն է: Լիրբ է եղել տատիկս, երկնային արքայություն պառավին: Ճիշտ է, գլուխս, չգիտես ինչու, լրիվ ճղել են, բայց ոչինչ, շունը կաղալով չի սատկի: Հեչ էլ պետք չի բանատեղ դնել»:

Հեռվում խուլ զնգում էին սրվակները: Խածվածը վիրակապարանի պահարաններն էր կարգի բերում:

Իսկ ալեհեր հրաշագործը նստել ու երգում էր.

- Դեպի ափե՛րը սրբազան Նեղոսի...

Սոսկալի բաներ էր տեսնում շունը:

Վեհակերպ մարդը լպրծուն ձեռնոցներով ձեռքերն իջեցնում էր անոթի մեջ, ուղեղներ հանում,- համառ մարդ է, հետևողական, ինչ-որ բանի է ձգտում շարունակ,- կտրում էր, զննում, կկոցում աչքերը ու երգում.

- Դեպի ափե՛րը սրբազան Նեղոսի...

Հունվար-մարտ, 1925 թ.
Մոսկվա

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Շան սիրտը» վիպակը Մ. Բուլգակովը գրել է 1925 թ. հունվար-մարտ ամիսներին՝ «Նեդրա» ալմանախի համար, սակայն գործն այդ ժամանակ չի հրապարակվել: Նախնական անվանումը՝ «Շան երջանկություն: Հրեշավոր պատմություն»: Հեղինակը Մոսկվայի գրական շրջանակներում բազմիցս կարդացել է վիպակը: «Շան սիրտը» առաջին անգամ հրապարակվել է «Զնամյա» ամսագրի 1987 թ. թիվ 16-ում:

«Պրեչիստենկայի հրշեջ խմբից...» - գտնվում էր Պրեչիստենկայի 22 տանը (կառուցված XVIII դարում, ճարտարապետ Մ.Ֆ. Կոգակովի նախագծով): Հետագայում՝ Մոսկվա քաղաքի հրշեջ պահպանության վարչություն:

«Բար» ռեստորանը գտնվում էր Նեգլիննի անցուղում, տուն 4:

«Սիրելի Աիդա» - Ռադամեսի մեներգը Ջ. Վերդիի «Աիդա» օպերայի առաջին գործողությունից: Մ. Բուլգակովի սիրած օպերան էր և մեկ անգամ չէ, որ հիշատակվում է նրա ստեղծագործություններում:

Աբրաու-Դյուրսո - Այն ժամանակներում այդպես էր կոչվում շամպայնը:

«Ոչ մի տեղ, բացի Մոսսելպրոմից...» - Ծաղրանմանակումն է հանրահայտ, Մոսկվայով մեկ փակցված «Ոչ մի տեղ, բացի Մոսսելպրոմից» գովազդային պաստառի, որի

հեղինակը Վ. Մայակովսկին էր: Մ. Բուլգակովի և Վ. Մայակովսկու հարաբերությունները բավական բարդ էին, այդ նշանավոր կատակախոսների ու երգիծաբանների մրցակցությունն ու փոխադարձ խայթոցները հայտնի էին գրական շրջանակներում: «Նրանք ասես կանգնած լինեին այդ տարիների գրական պայքարի հակադիր բևեռներում: Ձախ թևում՝ Մայակովսկին, աջում՝ Բուլգակովը; Տրամադրությունն այդ պայքարում առավելագույնս մարտական էր, ծայրահեղ անհանդուրժող»,- հիշում է դերասան Մ. Յանշինը:

Վալտոռն - Փողային նվագարան, հրշեջ նվագախմբի գործիքներից:

Բելէտաժ - «Բարձր» առաջին հարկը նախահեղափոխական շենքերում՝ հարուստ բնակիչների համար, որտեղ զետեղված էին ամենալավ, ամենաթանկ բնակարանները: Բելէտաժի տակ սովորաբար կիսանկուղներն էին, որտեղ ապրում էին սպասավորները: «Կալաբուխովյան» (Կալուգինյան) տունը Չիստի (նախկին՝ Օբուխովի) նրբանցքի 141-ում էր:

Ելիսեև եղբայրներ - առևտրական ընկերություն, որը խոշոր մթերային խանութներ ուներ Տվերսկոյում:

«Սևիլիայից մինչ Գրենադա...» - Դոն Ժուանի սերենադը Ա.Կ. Տոլստոյի «Դոն Ժուան» դրամատիկական պոեմից (1860), երաժշտությունը գրել է Պ. Ի. Չայկովսկին, 1878 թ.:

Այսեդորա Դունկան (1877-1927)- Նշանավոր ամերիկյան պարուհի, 1922 թ.՝ Սերգեյ Եսենինի կինը: Այն ժամանակ նրանք ապրում էին Պրեչիստենկայի թիվ 20 երկհարկանի առանձնատանը, որի տերը ժամանակին եղել էր Մեծ թատրոնի պրիմա-պարուհի Ա.Մ. Բալաշովան: Առանձնա-

1915.info

տունն ուներ ոչ միայն ննջարաններ, առանձնասենյակներ ու ճաշասրահ, այլև դահլիճ՝ համերգների և երեխաների հետ պարապելու համար (Դունկանը բալետի ստուդիա էր բացել):

Շամիրամի այգիներ – Կախովի այգիներ հին Բաբելոնում, աշխարհի «յոթ հրաշալիքներից»:

«Ի՞նչ է ձեր այդ փլուզումը, չալիկով պառա՞վ է...» – 20-ականների սկզբին Կոմունիստական թատերգության արվեստանոցը բեմադրեց Վ. Յազվիցկու «Ով է մեղավոր» («Փլուզում») մեկ գործողությամբ «ագիտկա»-պիեսը, որի գլխավոր կերպարը մի ծեր, կորացած, քրջոտ պառավ էր՝ Փլուզումը, որը պրոլետարի ընտանիքին խանգարում էր ապրել:

«...կարմիր կեպիով» – այն ժամանակվա միլիցիայի գլխարկները:

«Դեպի ափերը սրբազան Նեղոսի...» – քրմերի խմբերգը «Աիդա» օպերայի առաջին գործողությունից:

Թուրքական թամբ – խոռոչ գանգատուփի մեջ, որտեղ գտնվում է մակուղեղը՝ ստորին ուղեղային ելունդը, գեղձ, որ աճի և այլ հորմոններ է արտազատում:

Ֆոնոգրաֆ – ձայնը հատուկ գլանիկի վրա գրելու սարք, մագնիտաֆոնի «նախնին»:

Միություն, բորսա – նկատի ունի արհմիությունն ու աշխատանքի բորսան, որտեղ գրանցվում էին գործազուրկները:

Սոլոմոնսկու մոտ... – 1-ին Պետկրկեսը, նախկին՝ Ա. Սոլոմոնսկու (1839-1913), Ցվետնոյ զբոսայգում, տուն 13: Ներկայումս դրա տեղում նոր կրկեսի շենքն է:

Յուսեմս – օդային մարմնամարզիկներ:

Սպինոզա Բ. (1632-1677) - նիդեռլանդացի մատերիալիստ փիլիսոփա:

Եվգենիկա - ուսմունք «մարդկային տեսակի բարելավման» մասին, որ հիմնվում էր այն ժամանակվա գենետիկայի գաղափարների ու եզրահանգումների վրա: 20-ական թվականներին եվգենիկայի գաղափարները հետևորդներ գտան Սովետական Ռուսաստանում (Ն.Կ. Կոլցով, Ա.Ս. Սերեբրովսկի, Յու.Ա. Ֆիլիպչենկո), ստեղծվեց Եվգենիկայի ռուսական ընկերությունը, որը հատուկ ամսագիր էր հրատարակում:

ՄԿՏ - Մոսկվայի կոմունալ տնտեսություն:

ՍԻԽԱՅԻԼ ԲՈՒԼԳԱԿՈՎ

ՀԱՂ ՍԻՐՏԸ

Ռուսերենից թարգմանեց Ներսես Աթաբեկյանը

Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Հրատ. խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Սրբագրիչ՝ Հայկ Սիրունյան
Էջադրումը՝ Արշալույս Արզումանյանի
Ձևավորումը՝ Արամ Ուռուտյանի

Չափսը՝ 70x100 1/32
Թուղթը՝ օֆսեթ 80գ/մ2
Ծավալը՝ 5.5 տպ. մամուլ

ԱՐՄԱՎ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ARMAV PUBLISHING HOUSE

Ք. Երևան, Բաղրամյան 3, 4-րդ հարկ
հեռ.՝ +374-10347335, +374-99373130
Էլ փոստ՝ armav1815@gmail.com

Yerevan, Baghramyan st. 3, 4ht floor
tel: +374-10347335, +374-99373130
Email: armav1815@gmail.com

1915.info